



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	5
ՄԵՆՔ 2018-ԻՅ ՅԵՏՈՅ ՉՏԵՍԱՆՔ ԱՅՍ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՈՎՀԵՏԵԻ ՓԱՇԽՆԵԱՆԸ ԱՆԿԱԽ ՉԷՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԻՅ.	5
Գաբեգին Միսկաբեան	5
ԿԻՊՐԱՀԱՅ	8
ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԵՏԱԼԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ	8
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ	9
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	10
ԴԷՄ ԱՌ ԴԷՄ՝ ՆԱԽԿԻՆ «ՓՇՈՏ»ՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ՝ ԿԱ՛Յ	10
ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅԾԱՌ ՀԵՌԱՆԿԱՐ	10
ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿՐՆԱՐ ՓԱԿՈՒԻԼ	14
ՏՊԱԽՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ	17
ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ» ԳԻՐՔ-ԺՈՂՈՎԱԾՈՒԷՆ	17
ԵՐԲ ԶՈՀԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԿԱՆՈՆ. ՍՓԻՒՌՔԱՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ՏԱԳՆԱՊԸ	21
ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՌԱՋԱՑՈՒՄԸ	25
ՏԵՍԱԿԷՏ	29
«ԹՈՅԼ ՊԻՏԻ ՏԱ՛ՆՔ, ՈՐ ՓՈՂՈՑԸ ԼԻՆԻ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂԸ»	29
ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱ՛Յ, ԿԸ ԳՈՀԱՅՆԷ՞	31
(ԿԱՄ՝ ԻՆՉՈ՞Ւ ԱՆ ԻՐ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ ՈՒՂՂԱԾ Է ԱՅԼՈՒՐ)	31
Ո՛Չ ԱՄԷՆՈՒՆ ՀԵՏ, ԱՅԼ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԻՆ	36
ՄԵՐ ԳԻՏՅԱԾ «ԼԻՏԸՐ»-Ը	39
ՍԱՀԱԿԵԱՆԻ՞ ՓԱԿՈՒՄԸ, ԹԷ՞ ՓԱԿՈՒՈՂ ԱՊԱԳԱՆ	42
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	44
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	44
ՄԵԽԱԶԳԵՍՏ ԱՅՐԻՆ ԵՒ ԶԱՆԳԱԿԸ	48
ԼՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ ՄԸ	51
ՄԱՆԿՈՒԹԵՆԷՍ ՄԻՆՉԵԻ ՀԻՒՄԻՄԻ ԱՄԱՌԸ	53
«ԱՄԷՆ ԻՆՉ ԼԱՒ Է ԼԻՆԵԼՈՒ»	56
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	58

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 61

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՈՂՋՈՅՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 35-ԴՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Համայն հայութիւնը՝ մէկ սիրտ, մէկ հոգի, ազգային արդար հպարտութեամբ պիտի տօնակատարէ Հայաստանի Հանրապետութեան Անկախութեան 35-ամեակը՝ 21 սեպտեմբեր 2026-ին, քաջ գիտնալով որ Հայաստանի Անկախ Հանրապետութիւնն է գերագոյն երաշխիքը ԱԶԳԻ յարատեւման, զարգացման ու յառաջընթացին՝ ՀՀէն ներս, թէ սփիւռքի կամ սփիւռքներու տարածքին: Առանց հայոց պետականութեան, մենք կը դառնանք անհող, թափառաշրջիկ փերեզակներ եւ մուրիկներ աշխարհի երեսին՝ անդէմ ու անդիմագիծ, որք ու անտէր: Պետականութիւնը ազգային

գերագոյն արժէք է, անկախ թէ ո՞վ է, կամ որո՞նք են նստած անոր իշխանութեան կամ կառավարութեան դէկին: Իշխանութիւնները միշտ ալ գնայուն են, իսկ պետականութիւնը՝ մնայուն: Յարափոփոխ աշխարհաքաղաքական եւ քաղաքակրթական պայմաններու ներքոյ, ուր Ցեղասպանութիւնն անգամ կը դառնայ միջոց երկիրներու, հայրենիքներու զաւթումին ու բռնագրաւման, աւելի քան անհրաժեշտ կը դառնայ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՄՐԱՅՈՒՄՆ ու ՀԶՕՐԱՅՈՒՄԸ նորանոր միջոցներով: Ի՞նչ է ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ:

ՊԵՏԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ կ'ենթադրէ հայրենի հողատարածք, ժողովուրդ եւ կառավարութիւն:

ՀԱՅՐԵՆԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔ.-Պետականաշինութեան հիմնական շաղախը հայրենի հողն է, որ շաղախուած է մեր նախնեաց, մեր մեռելներու սուրբ աճիւնով ու քրտինքով...Այդ հողին վրայ ապրելու, արարելու, զայն հայոց լեզուով ու մշակոյթով, հայ հոգեւոր-բարոյական արժէքներով, մտքի արարումներով օժելու անկոտրում ոգիով, զայն պաշտպանելու եւ կենսունակ պահպանելու աննկուն կամքով...: Պետականաշինութիւնը կը պահանջէ ազգի բոլոր զաւակներուն՝ հայրենեաց հողին հանդէպ ցուցաբերած, անսակարկ սէրը, նուիրումը, առօրեայ տքնաջան, քրտնաթոր աշխատանքը, քար առ քար կառուցումը՝ անխոնջ ու ստեղծագործ եռանդով...: Այնքան խորիմաստ կը հնչէ Խրիմեան Հայրիկի պատգամը ուղղուած իր թոռան, այսինքն՝ գալիք սերունդներուն, ամէնէն պարզ ու միաժամանակ ամէնէն դիպուկ բառերով արտայայտուած. «Հողն պէտք է կենաց եւ մահու օր. Մրա համար



Պապիկ զքեզ հողին հետ կապեց ու պսակեց, որ պինդ գրկես զհողն, չթողուս որ ուրիշներ ձեռքեդ յափշտակեն, դու անհող մնաս, ստրուկ լինես»:

Հայրենի հողն է որ կը մէկտեղէ, կը համախմբէ ժողովուրդի մը անջատ, ցիրուցան բեկորները, ընդհանուր ինքնութեան տարրեր կը փոխանցէ անոնց սերունդէ սերունդ, հնարաւորութիւն կ'ընձեռէ ինքնակազմակերպուելու որպէս ինքնուրոյն ամբողջութիւն, որուն բարձրագոյն ձեւը ազգային պետականութիւնն է: Հայրենի հողին վրայ կը կերտուի պատմութիւնը դարէ դար եւ կը բնորոշէ ազգի մը ճակատագիրը: Յատկանշական է Մարտիրոս Սարեանի խօսքը. «Հողը մի կենդանի էակ է, ան ունի իր հոգին: Եւ առանց հողի, առանց հայրենիքի հետ սերտ կապի, մարդ չի կարող գտնել իրեն, իր հոգին»: Այսպէս, հազարամեակներու ուղի անցած ՀԱՅ ԱԶԳԸ ձեւաւորուած է իր բաժրաւանդակ Հայաստանի մէջ, իր ինքնուրոյն լեզուով, մշակոյթով, բարոյական արժէքներու համակարգով, ասանդութիւններով եւ պատմութեամբ: Հայրենի հողէն հեռու ապրող հայն անգամ պարտի իր մագարմատները երկարել հայրենի աւշայորդ արմատներուն, եթէ կ'ուզէ հայօրէն ապրելու յոյսը փայփայել:

ՀԱՅՐԵՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴ.-Պետականաշինութեան գլխաւոր յանձնառուն եւ պատասխանատուն հայրենի ժողովուրդն է, անտարակոյս, որ կը բնակի պետութեան սահմաններէն ներս, իր քրտինքը շաղախելով անոր հողին իր ամենօրեայ ջանադիր աշխատանքով, զայն կը պաշտպանէ իր մարտական ոգիով, իր կեանքը դնելով զոհասեղանին ի պահանջէլ հարկին: Զայն կը զարգացնէ իր բազուկի, մտքի, հոգիի եւ ոգիի յարատեւ ու հետեւողական տքնութեամբ: Այսօր մեր պետութեան համար, օղի, ջուրի, հացի նման անհրաժեշտ է որ հայրենաբնակ ժողովուրդին թուաքանակը աւելնայ ընդհանրապէս, քանզի քանակէն միայն կը ստացուի որակ, ի մասնաւորի՝ մասնագիտական, մշակութային, տնտեսական, արուեստագիտական, պաշտպանական նոր ներուժ: Եւ հոս է որ սփիւռքը կամ սփիւռքները կրնան իրենց մասնակցութիւնը բերել հայոց պետականութեան հզօրացումին, առաջադրելով իրենց մասնագիտական գիտելիքն ու փորձը, ազգային տեսլականը, տնտեսական կարելիութիւնները, մշակոյթն ու քաղաքակրթութիւնը, տեղեկատուական եւ քարոզչական հնարաւորութիւնները, աշխարհատարած ազդեցիկ կապերը ու հսկայական ներուժը: Սփիւռքին համար, ծառայել ՀՀ պետականութեան շահերուն հաւասարագօր է ծառայել սեփական ինքնութեան ու էութեան, ծառայել է սեփական ծնողքին, անասկարկ ու անպայմանական: Այստեղ պիտի առանձնապէս նշել որ մեր պետութեան յառաջընթացին համար, այնքան անհրաժեշտ է կազմաւորել ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՐԱԿԵԱՆ ՄՇԱԿՈՅԹ, ուր քաղաքական հայեացքի տարբերութիւնները չդառնան զգուշացող ու բեւեռացող, ապականելով ազգի ընդհանրական հոգեմտաւոր, բարոյական արժեքահամակարգը, սկզբունքները...ինչ որ ցաւով կը տեսնենք ամենուրեք, ի մասնաւորի Ազգային Ժողովի բարձրագոյն ատենին մէջ, ուր անձնական-խմբակային վիրաւորանքներն ու ցեխարձակումները առօրեական երեւոյթ դարձած են, փոխանակ ազգային-պետական կարեւորագոյն հարցերու առողջ քննարկումին եւ գաղափարներու քաղաքակիրթ փոխանակման: Ժողովուրդը ժողովուրդ կը դառնայ իր ԺՈՂՈՎՈՒՄԾՈՒԹԵԱՄԲԸ միեւնոյն արժէքներուն շուրջ, հայրենիքի անվտանգութեան ամրապնդումին շուրջ, պետականութեան զարգացումին եւ հզօրացումին շուրջ: Նման



ԺՈՂՈՎՈՒԱԾՈՒԹԵԱՆ կամ ՀԱՒԱՔԱԿԱՆ ՈՒԺԻՆ դեմ ոչ մէկ արտաքին վտանգ կրնայ սպառնալ էապէս: Հոս վստահաբար մեր Հանրապետութեան կրթական համակարգը շատ բան ունի ընելիք՝ դաստիարակելու համար մեր մատղաշ սերունդը ազգային-հայրենասիրական այնպիսի ոգիով եւ պետական այնպիսի մտածողութեամբ, որ անոր համար յստակ դառնան ազգային-պետական առաջնահերթութիւնները եւ կարմիր գիծերը, յատկապէս ազգային-պետական անվտանգութեան տեսակէտէն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ.- Պետական համակարգի կայացումն ու հզօրացումը ազգային գերիխնդիր է տարածաշրջանի եռեւեփող պայմաններու տակ յատկապէս: Մենք պարտինք յստակացնել, առաջին հերթին, մեր պետականութեան երկարաժամկետ շահերն ու նպատակները, մեր աշխարհաքաղաքական օրակարգը: Տարակոյսէ վեր է որ անվտանգութիւնը, օրէնքի գերակայութիւնը, անկախ եւ գործուն պետական հաստատութիւնները, ժողովրդավարական կարգն ու սարքը, «կոռուպցիայ»ի կամ փտածութեան դեմ իրաւադատական պայքարը, տնտեսական կայունութիւնը, կրթութիւնը, գիտութիւնը, ժողովրդագրական պատկերի բարելաւումը եւ միջազգային յարաբերութիւններու ամրապնդումը այն հիմնական ոլորտներն են, որոնք կը ծառայեն պետականութեան երկարաժամկետ շահերուն:

Ա՛լ ժամանակն է որ արտաքին ՓՐԿԻԶՆԵՐ չփնտռենք եւ ճշմարիտ, լիարժէք ու լիիրաւ ՏԵՐԸ ըլլանք մեր երկրին ու անոր ճակատագրին: Սա մեր ողբերգութիւններէն մէկը եղած է դարեր շարունակ: Իսկ փրկիչները յանուն իրենց շահին թալաներ են մեր հանքերն ու թանկագին հանածոները, մեր բազում հարստութիւնները, մեզ օգտագործեր են որպէս գործիք իրենց աշխարհաքաղաքական թէ այլ շահերուն եւ այսպէս շարունակ: Անոնց ձեռնտու է միշտ ալ ունենալ տկար Հայաստան, որպէսզի կարենան խաղալ անոր ճակատագրին հետ, ըստ իրենց ցանկութեան: Հիմա ալ, ի զօրու կը մնայ անոնց համար «Հայաստանը առանց հայերու» ունենալու միտումը:

Ներքին ամրակուտ ՀԶՕՐՈՒԹԻՒՆԸ միայն կրնայ փրկել մեզ: Աւելցընենք որ առողջ, կառուցողական քննադատութիւնը միշտ ալ օգտակար է, քանզի տարբեր տեսակէտներու առողջ եւ քաղաքակիրթ բախումէն կը ծնին նորանոր միտքեր ու գաղափարներ: Բայց պարտադիր պայման է որ ան ըլլայ շինիչ, հետամուտ չըլլայ ազգի ու պետականութեան երկրեւեռացման, երկփեղկումին, պառակտումին, ինչ որ ներքին թուլացման, հայոց պետականութեան վարկի ու հեղինակութեան նսեմացման ազդակ է յաչա աշխարհին եւ մեզ: Առողջ քննադատութեան առընթեր, կարելոր է գնահատանքը՝ Հանրապետութենէն ներս կատարուող բոլոր դրական երեւոյթներուն, որպէս զանոնք խթանող ազդակ:

Առողջ քննադատութեան կողքին, մենք քաջութիւնը պիտի ունենանք ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ վերցնելու մեր սխալներուն եւ դադրինք մեր մեղքերը այլոց միայն վերագրելու ԶՈՀԻ ՍՏՐԿԱՍԻՏ վարքագիծէն: ԱԶԱՏ, ԻՆՔՆԻՇԽԱՆ ըլլալը խորքին մէջ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՈՒԹԻՒՆ ստանձնել կը նշանակէ մեր բոլոր ընտրութիւններուն եւ արարքներուն համար:

Եւ վերջապէս, պատուիրանի պէս կը հնչէ Ամերիկայի մէկ նախագահին պերճախօս պատգամը. «Մի՛ հարցնէր թէ հայրենիքդ ի՞նչ կրնայ ընել քեզի համար, այլ հարց տո՛ւր թէ դո՛ւն ի՞նչ կրնաս ընել հայրենիքիդ համար»: Եթէ այս մօտեցումով ու վարքագիծով դաստիարակուի հայ մարդը, յայնժամ հայրենիքն ու անոր պետականութիւնը վստահաբար կը կարենան յաղթահարել ամէն դժուարութիւն ու խոչընդոտ, նուաճել նոյնիսկ թոյլքային զարգացման հանգրուան, բոլորին ուժերուն եւ կարելիութեանց նպատակաուղղուած մէկտեղումով եւ կոթողումով՝ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ՍՓԻԻՌՔՆԵՐ:

ՇՆՈՐՀԱՒՈՐ ՏՕՆԴ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ:

ՓԱՌՔ ԵՒ ԽՈՆԱՐՀՈՒՄ ՄԵՐ ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ, ՀԵՐՈՄՆԵՐՈՒՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ:

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՄԵՆՔ 2018-ԻՅ ՅԵՏՈՅ ԶՏԵՍԱՆՔ ԱՅՍ ԶԵՐԲԱԿԱԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՈՐՈՎՀԵՏԵՒ ՓԱՇԻՆԵԱՆԸ ԱՆԿԱԽ ԶԷՐ ՌՈՒՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹԻՒՆԻՑ.

Գարեգին Միսկարեան

«Մեդիալարի» հարցերին պատասխանում է «+374» քաղաքական ինքնորոշման ակումբի նախագահ Գարեգին Միսկարեանը



– Պարո՛ն Միսկարեան, Հայաստանում շարունակոււմ են նախկին բարձրաստիճան պաշտոնեաների ձերբակալութիւնները, ընդդիմութիւնը սա բնորոշում է իբրեւ «աննախադէպ ռեպրեսիա», որ Նիկոլ Փաշինեանի կամքն է միայն գործում, իշխանութեան ներկայացուցիչներն էլ պնդում են, թէ ամէն բան

օրինականութեան տիրոյթում է արւում: Կողմերից որի՞ տեսակէտին էք համակարծիք, ի՞նչ է կատարւում իրականում:

– Երկուսն էլ ճիշտ են, մեծ հաշուով և՛ արդարադատութիւնը չի գործում, գործում է Նիկոլ Փաշինեանի կամքը, և՛ Նիկոլ Փաշինեանի կամքը գործում է ութ տարի ուշացած, բայց գործում է: Այսինքն՝ 2018-ի փոփոխութիւնները յստակ մանդատ էին՝ ժողովրդից, պետութիւնից թալանածը վերադարձնելու, ինչը ու այլ շատ բաներ չարեց Նիկոլ



Փաշինեանը: Բայց այն, ինչ հիմա կատարում է, աւելի շատ եւ կ'ուզենայի դիտել ու գնահատել հայ-ռուսական յարաբերութիւնների տեսանկիւնից:

Հարցն այն է, որ մինչեւ Ադրբեջանի հետ փոխադարձ չարձակուելու եզրեր գտնելը՝ ամերիկեան երաշխիքներով, Հայաստանը շարունակում էր ապաւինել ռուսական «բարեգործեանը» և չէր ցանկանում նեղացնել Ռուսաստանին ու Ռուսաստանի կողմից Հայաստանում վստահուած մարդկանց, ուժերին: Մասնաւորապէս հիշում ենք, որ երբ մի անգամ ձերբակալել էին Ռոբերտ Քոչարեանին, Վլադիմիր Պուտինը հարկ համարեց դիւանագիտական լեզուով ասել, որ իրեն են վատութիւն անում այդ կերպ: Այդ ժամանակ չգիտեմ, թէ ինչքանով էր Ռոբերտ Քոչարեանի ազատ արձակումը բխում Փաշինեանի ցանկութիւնից, բայց դատական համակարգը, բնականաբար, էլի պրոռուսական ուղղութեան էր, ու Ռուսաստանի հնչեցրած այդ մեսիջները իրենց հետեւանքներն ունեցան:

Հիմա, այս ընթացքում որոշակի փոփոխութիւններ են եղել և՛ դատական համակարգում, և՛ իրաւական համակարգում: Չէի ասի, որ այդ փոփոխութիւնները կարելի է շատ դրական գնահատել, բայց դրանք տեղաշարժ են, տեղաշարժ են ոչ թէ արդարադատութեան կայացման տեսանկիւնից՝ որպէս դրական տեղաշարժ, այլ տեղաշարժ են պրոռուսական կապիտալի ազդեցութիւնից դուրս ու Նիկոլ Փաշինեանին լոյալ մարդկանցով:

Լաւ է, թէ վատ այն, ինչ տեղի է ունենում, եւ կարծում եմ, որ ռուսական ազդեցութիւնից ազատուելու առաջին նախապայմանը ռուսական կապիտալը Հայաստանի տարածքից չեզոքացնելն է: Դրա դրսեւորումն է, որ մենք հիմա տեսնում ենք՝ Գագիկ Ծառուկեանը, Ռոբերտ Քոչարեանը, Սամուէլ Կարապետեանն ուղղակի մարդիկ չեն, որոնք ցանկութիւն ունեն Հայաստանում իշխանութեան գալու, նրանք մարդիկ են, որոնք իրենց կապիտալն օգտագործում են ի շահ Ռուսաստանի ու ի վնաս Հայաստանի:

Այս տեսանկիւնից՝ Հայաստանի շահերից է բխում այդ կապիտալի չեզոքացումը, իհարկէ, Հայաստանի շահերից աւելի շատ կը բխէր, եթէ այդ կապիտալը չեզոքացուէր, ու այդ գումարը ծառայէր Հայաստանին, կամ ինստիտուտներն աշխատէին զուգահեռաբար, անկախ լինէին և այլն, ինչը դեռեւս չկայ, բայց դա չի նշանակում, թէ այն սպառնալիքը, որը կայ ռուսական կապիտալից, չպետք է չեզոքացնել, պետք է սպասել, որ արդար դատարան լինի, նոր դա անել:



– *Նկատի ունե՞ք, որ մենք 2018-ից յետոյ այս ամէնը չտեսանք, որովհետեւ Նիկոլ Փաշինեանը անկախ չէ՞ր ռուսական ազդեցութիւնից:*

– Այո՛, բառացի հենց այդպէս էլ կայ, ու այդ մասին հենց Նիկոլ Փաշինեանն է ասել, որ «մինչև 2022 թուականը ինքը Հայաստանի վարչապետ չէր, այլ ռուսական գուբերնիայի վարչապետ էր»: Այսինքն՝ ինքը սա գիտակցել է, հաշտ էր այդ մտքի հետ ու կատարում էր իր դերը՝ որպէս գուբերնատոր, հիմա իրավիճակ է փոխուել, հաշուի առնելով, որ Ռուսաստանը Նիկոլ Փաշինեանին՝ որպէս Հայաստանի լեգիտիմ ղեկավարի չի ընդունում, որովհետեւ Պուտինի համար լեգիտիմութեան միակ աղբիւրը Կրեմլն է: Այդ իսկ պատճառով Կրեմլը չի կարող հանդուրժել ցանկացածին, որը ոչ թէ Ռուսաստանի հաւանութեամբ է նշանակուել Հայաստանում ղեկավար, այլ ժողովրդի կողմից է ընտրուել ու փորձում է պաշտպանել Հայաստանի շահերը, այլ ոչ թէ՝ ռուսական կայսրութեան:

– *Պարո՛ն Միսկարեան, որ ասացիք՝ լաւ կը լինէր, որ ռուսկան կապիտալը չէզոքացուէր ի նպաստ Հայաստանի, ի՞նչ նկատի ունե՞իք:*

– Այդ կապիտալը չի կարող աշխատել ի նպաստ Հայաստանի, որովհետեւ դա քաղաքական կապիտալ է, այդ մարդիկ, ինչպէս յետխորհրդային շատ երկրներում, իրենց կապիտալը դիզել են ոչ թէ արդար, մրցակցային տնտեսական միջավայրում, այլ՝ օլիգարխիկ համակարգում, որտեղ քաղաքական վերնախաւն է հաւանութեան արժանացրել այս կամ այն մարդու հարստանալը: Մենք գիտենք, որ մինչև 2022 թուականը Հայաստանում քաղաքական իշխանութիւն չի եղել, եղել է գուբերնիստական իշխանութիւն՝ իրենց տրամաբանութեամբ, իրենց վարքով, ու այդ կապիտալը ձեւաւորուել է ռուսական քաղաքական շահերը սպասարկելու համար:

– *Հիմա արձանագրո՞ւմ էք, որ Նիկոլ Փաշինեանը ըստ էութեան Հայաստանի վարչապետն է, ու Հայաստանն իսկապէս անկախ է:*

– Հայաստանը կը լինի իսկապէս անկախ, երբ Հայաստանում անկախ լինի դատական համակարգը, վարչապետի լիազօրութիւններն այսքան անսահմանափակ չլինեն, ու իշխանութիւնը կախուած չլինի մէկ անձի կամքից, որովհետեւ այն համակարգը, որի ճարտարապետն էր Սերժ Սարգսեանը իր թիմակիցներով, ոչ մի կերպ նախատեսուած չէ ժողովրդավար և ուժեղ պետութիւն կառուցելու համար:

Հետեւաբար, ասել, որ հիմա Հայաստանն անկախ է, ո՛չ, մենք շատ մեծ ռիսկերի առաջ ենք կանգնած, միայն այն, որ խորհրդարանում երկու ուժ կայ՝ մէկը Նիկոլ Փաշինեանի


Իշխանութիւնը պահելու համար է այնտեղ, իսկ միւսը՝ Նիկոլ Փաշինեանի իշխանութիւնը ռուսական իշխանութեամբ փոխելու համար, դա նշանակում է, որ Հայաստանը՝ որպէս սուրբեկտ, դեռ բաւարար կայուն ձևաւորուած չէ ու ի վիճակի չէ ինքնուրոյն կամ առանց մեծ ռիսկերի ու ցնցումների պաշտպանելու իր անվտանգութիւնը:

Քրիստինէ Աղաբեկեան

MediaLab.am

ԿԻՊՐԱՀԱՅ

ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄԵՏԱԼԻ ՏՈՒՉՈՒԹԻՒՆ



31 Յուլիս 2026-ին, Հայաստանի Հանրապետութեան նախագահ Վահագն Խաչատուրեանը ընդունեցաւ Կիպրոսի Ներկայացուցիչներու պալատին մէջ հայ համայնքի պետական ներկայացուցիչ Վարդգէս Մահտեսեանին եւ անոր յանձնեց Հայաստանի Հանրապետութեան պետական բարձր պարգեւը՝ Երախտագիտութեան մետալը առ ի գնահատանք իր հայրենանուէր երախտագին աշխատանքին:

Պարգևեր շնորհուած է հայ-կիպրական բարեկամութեան ամրապնդման, Հայաստանի և Կիպրոսի միջեւ կապերու զարգացման, ինչպէս նաեւ հայ համայնքի շահերու ներկայացման գործին մէջ անոր ունեցած նշանակալից աւանդին համար:

Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը Կիպրոսի Հանրապետութեան մօտ կը շնորհաւորէ Վարդգէս Մահտեսյանին՝ մաղթելով յաջողութիւններ և նոր ձեռքբերումներ ի նպաստ Հայաստանի և Կիպրոսի միջեւ առանձնայատուկ բարեկամական յարաբերութիւններու հետագայ խորացման:



ԱԶԱՏ ԽՕՍՔը ջերմօրէն կը շնորհաւորէ կիպրահայ համայնքի Պետական Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանը այս ուրախ առիթով, իրեն մաղթելով Հայաստան-Սփիւռք մերձեցման եւ կապերու սերտացման, հայրենանուէր նորանոր իրագործումներ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ 35-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



Շուտով՝ Հինգշաբթի 24 Սեպտեմբեր 2026, կ.է. ժամը 6:30-ին, Նիկոսիոյ Սթրովոլոսի Քաղաքապետարանի դահլիճին մէջ տեղի պիտի ունենայ Մշակութային Կալա-Երեկոյ, Կիպրոսի մօտ ՀՀ Դեսպանութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ գլխաւորաբար: Մշակութային բացառիկ եւ հետաքրքրական ծրագրի գործադրութեամբ, հանդէս պիտի գան Հայկական երկու անուանի համոյթներ՝ ՀՀ Պետական Երգարուեստի «Կոմիտասի Ծրագիր»ը եւ Երեւանի Մնջախաղի Թատրոնը, որոնք միասնաբար հայ, յոյն թէ այլազգի հանդիսատեսին պիտի ներկայացնեն բովանդակալից Ցայտագիր մը ի տօնակատարութիւն Հայաստանի

Հանրապետութեան Անկախութեան 35-րդ Տարեդարձին: Ձեռնարկը կը միտի Հայաստանի բազմադարեան ժառանգութիւնը ներկայացնել հանդիսատեսին ժամանակակից կատարումներով եւ նորարարական շունչով:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

ՀՀ Ազգային Ժողովի Կազմութեան Լոյսին Տակ

ԴԷՍ ԱՌ ԴԷՍ՝ ՆԱԽԿԻՆ «ՓՇՈՏ»ՈՒԹԵՆԷՆ ԵՏՔ՝ ԿԱՅ

ԿԱՌՈՒՑՈՂԱԿԱՆ ՆՈՐ ՊԱՅԾԱՌ ՀԵՌԱՆԿԱՐ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Հայաստանի խորհրդարանական-պատգամաւորական ընտրութիւններու գործընթացը, որ բաւական «պղտորեց ու ստուերեց» անոր ժողովրդավարական, օրինապահական, արդարամտական, օրէնադրական ու նոյնիսկ՝ քաղաքական եւ արտայայտչական էութիւնը ու բովանդակութիւնը, կը մնայ այս ՄՏՈՒԳԱՏԵՍՈՒԹԵԱՆ, մեղմ ըսած,

անհաճոյութեան, անբաւարարութեան եւ անընդունելիութեան անբաղձալի սահմաններուն մէջ:

ԱՌԱՋԻՆ արարով, ներքին (Հայաստան) թէ արտաքին (Մփիւոք) դէտերու ու հետեւորդներու, գիտակներու եւ իրազեկներու կոչերը, դիտարկումները, քննարկումները կամ անդրադարձները, որ այս ընտրութիւնները ըլլան պատմական, անշահադիտական եւ անանձնական, բոլորն ալ մնացին «ձայն բարբառոյի» լճացումին մէջ, որովհետեւ, բոլոր կողմերը, առաւել կամ նուազ չափերով, ոչ միայն խախտեցին ու խարխւեցին, այլեւ՝ գլխիկայր շրջեցին ամէն ինչ ու տուեալ, որ կ'ենթադրէր լրջութիւն, հասկացողութիւն եւ արժանապատուութիւն:

Ատոնք, իրենց զարտուղութիւններով եւ ապիկարութիւններով, իրօք, անպարկեշտութիւններ ու ցնորամտութիւններ էին, որոնք ոչ պատիւ ու վարկ կը բերեն Հայաստանի պետութեան ու հայ ժողովուրդին:

Օրին գրած էինք, որ իւրաքանչիւր շրջանակ, հոսանք կամ կազմակերպութիւն, առանց զիջելու իր դերէն ու համոզմունքներէն, անհրաժեշտ է որ ըմբռնէ ու զգայ, թէ՛ նման տնօրինումներ ինչո՞ւ համար հրատապութիւններ են, ինչո՞ւ պէտք է սատարել անոնց բարեյաջողութեանց եւ ինչո՞ւ հայրենիքին համար, խիստ հրամայականութիւն են, հաւատարիմ մնալ անկաշառութեան եւ անաչառութեան լծակներուն:



Մակայն, անխոհեմութեան, անճոռնիութեան եւ անփափկանկատութեան բոլոր բարքերը, միայն մրոտեցուեցան եւ ապականուեցան, խեղաթիւրուեցան եւ եղծանուեցան, խոշոր «արատ» մը դրոշմելով Հայաստանի գլխուն, թէ՛ւ ընտրութիւնները, կաղնիկաղ կամ ոստումներով շարունակուեցան եւ... աւարտեցան, ոմանց գոհունակութիւն պատճառելով, ուրիշներու դժգոհութիւն, իսկ մաս մըն ալ մնաց գազազած:

Այս սրտխառնող տեսարաններու ԵՐԿՐՈՐԴ այլանդակ արարը սկսաւ, երբ խորհրդարանական ու կառավարական կազմերու ու նշանակումներու ՏՖՐԱՇՔԵՐԹՆԵՐԸ, ՏՖՐԱԴԵՐԵՐԸ ու ՏՖՐԱԽԱՂԵՐԸ երեւցան, համարեա բոլոր կողմերուն ու հարթակներուն վրայ, ընդհուպ, դատական, դատախազական, քննչական, դատաւճռական համակարգերը եւս, այս կամ այն մասնակցութիւններով ընդգրկուեցան... «խաղացանկին ու խաղավայրին» մէջ:

Այլեւս, պէտք է պատկերացնել, թէ ի՞նչ խաղքեր, նենգութիւններ, ամբաստանութիւններ, մերկացումներ, մեղաւորներ եւ յանցագործներ յայտնուեցան ու հրապարակ նետուեցան, աժան եւ անարդար ձաբոտութիւններով ու լուտանքներով:

Մինչ ինքզինք յաղթական հռչակող կուսակցութիւնը՝ «Քաղաքացիական պայմանագրութիւն»ը (իմա՝ իշխող իշխանութիւն), կը յոխորտար, թէ շահած է ընտրապայքարը, առանց սպասելու պաշտօնական արդիւնքներուն (վստահաբար, ի յառաջագունէ վստահ ըլլալով իր առաջնահերթութեան կարգին), անդին՝ ընդդիմութիւն կոչուած հատուածները, որոնք՝ առ այդ, ինքզինքնին կը պայթեցնէին, թէ իրենց նուաճումները արդէն արձանագրելի են, մինչդեռ ընտրական ընթացքին արդէն նախանշանները ցոյց կու տային, որ անոնք բզիկ-բզիկ դառնալ յորձանուտին մէջ թաղուած ըլլալու հաւանական պարտութեան մէջ կը գալարին եւ շուտով յայտնի դառնալով, դէպի ուր կ'ուղղուին անոնք:

Այս վերիվայրումները եւ ելեւէջները, եթէ ընդունելի են, որ Հայաստանի քաղաքական կեանքին մէջ, տարիներէ ի վեր եւս կը գործադրուին, առանց զսպուածութեան կամ բարեշրջութեան նման դէպքեր, ապա, ի՞նչ պիտի ըսուէր կամ բաղդատուէր ընտրապայքարի մը ժամանակ երբ պահերը եկան ապացուցելու, որ նոյն «թխուածք»ը եւ «ծեծուածք»ը կրնայի՞ն տարբեր հունաւորում ունենալ, ի դէմս բուռն կիրքերու ու կոշտ ներքերու սուր լարուածութիւններու ու բռնկումներու, մինչեւ իսկ հասնելով թշնամական ոճրարարքներու (օրինակները բազմաթիւ են ու մինչեւ հիմա կը շարունակուին):



ԵՐԿՐՈՐԴ արարը սկիզբ կ'առնէր, երբ պատգամաւորներու թիւը եւ ինքնութիւնները յայտնի դարձան, իրենց աթոռներով, հանգամանքներով, դիրքերով ու պաշտօններով, երկար-բարակ անհիմն ու ծիծաղելի պատկերներով ու դիմանկարներով:

(Թերեւս ամենէն մեծ խայտառակութիւնը, անշնորհքութիւնը եւ ինքնապատուազրկութիւնը ընդդիմութեան ուղղուած է, ի շարս այլ ձախաւերութիւններու, իբրեւ բողոք, իրենց դէմ կատարուած անիրաւութիւններուն (՝) եւ յաջողած պատգամաւորները, սպառնալով իրենց



«մանտադ»ները (լիազօրագիրները) վար դնելու կամ չստանձնելու, սակայն, ատոնք ածան էլ անտեղի փորձեր եղան, պարզապէս անիմաստ ցուցադրութիւն մը էլ իրապէս ալ այդպէս եղաւ, երբ անոնք սուսիկ-փուսիկ մուտք գործեցին խորհրդարան եւ առօր-փառօր բազմեցան իրենց փափուկ աթոռներուն վրայ:

Միակ տուժողը եղաւ... Պրն. Քոչարեանը, որ, ինչպէս նախորդ անգամուն, այժմ ալ՝ չվերցուց «մանդատ»ը, նոյնիսկ փորձելով փախչիլ... արտասահման, սակայն, ապարդիւն, որովհետեւ գիտէր, թէ այս անգամ իր գլխուն կայ անխուսափելի «օյին» մը:

Հետեւաբար, եթէ գիտէր, այլեւ փորձուած էր, որ անհանդուրժելի եւ անսահմանելի «մեղք»երով ողողուած է, թէեւ ուշացած, բայց, ոչ ուշ, պիտի յանձնուի արդարութեան եւ ստանայ համապատասխան պատիժ):

Ուրեմն, պատգամաւորական Զրդ ժողովը, ազդանշանը տուաւ, իր յանձնաժողովներու լրիւ կազմութեան, սկսելու նոր հնգամեայ տարեշրջանը, այն փխրուն ու միամիտ հաւատքով, թէ ամէն ինչ կրնայ ընթանալ բարօք, եթէ ոչ հեզասահ ու հանդարտ, գոնէ համակերպելի թոյլ գործընթացով:

Բայց, պարտուած ու մեկուսացած ընդդիմութիւնը չէր կրնար մարսել իր պոռոտախօսութեան անկումը, հետեւաբար, վճռուած էր նոյն (եւ աւելի) ուժգին ներկայութիւն մը ցուցաբերել, փորձելով վարկաբեկել կամ արքանել, իրեն համար, «անհանդուրժելի» իշխող-մրցակից կողմը:

Արդէն, երբ կ'ակնկալուէր, որ խորհրդարանը իր նիստերը սկսէր, կենդանի, շնչող, այժմեական եւ յուսադրող օրակարգերով, խարխլած ու խափանուած ընդդիմադիր բեկորներէն ոմանք, առանց ամչնալու ու խպնելու, յայտնապէս ալեկոծումի դիմելու դիտաւորութեամբ, այնպիսի հարցերու մէջ մխրձուեցան ու թունաւորեցին մթնոլորտը, ցոյց տալով իրենց թուխ ու մուգ, ծուռ ու յիսակալ դիմագիծերը, երբ օրուան նախագահութեան հասցէին, նաեւ այլոց դէմ, իրենց ճաթոտած գոռոցները հանդէս եկան:

Ազգային Ժողովի նորընտիր նախագահը՝ Ռուբէն Ռուբինեան, բաւական կիրթ ու համարձակ ձեւակերպումներով, բացատրեց ու պահանջեց, որ ամէն ոք, մնայ իր սահմանին եւ իրաւունքներուն մէջ, առանց երթալու ծայրայեղութիւններու եւ անուանարկումներու, առանց զիջելու իր համոզմունքներէն, գաղափարներէն կամ կողմնորոշումներէն:

Որո՞ւն կ'ըսուի, երբ մարդուկ ամբոխավարներու կոյտ մը, մոռնալով ամէն պատշաճութիւն ու կրթութիւն, կարծես «պատերազմ»ի դաշտ եկած էր ու կրնար, իր խելակորոյս մտքերով ու խօսքերով, գրգռել մթնոլորտը եւ աղաւաղել չափանիշները:

Իսկ երբ Նարեկ Կարապետեան կոչեցեալը, որ Հայաստանէն ներս, ոչ վարկ, ոչ անուն, ոչ ալ աւանդ ու փորձ ունի, բացի ըլլալէ իր «հոպար»ին, բազմահարուստ եղբորորդին, սին բանավեճի մէջ մտնելով իր պաշտօնակիցներէն մէկուն հետ, զայն անուանեց... «հորթ», ինչ որ մթնոլորտը ելեկտրականացուց, խառնաշփոթ ստեղծելով, մինչեւ որ՝ Պրն. Ռուբինեան



բեմէն վար իջաւ, զուսպ զրոյց մը ունենալով Նարեկին հետ, ապա, զգուշացնելով, որ, յետայսու, անգիջող պիտի ըլլար որեւէ նման վիրատրական արարքի մը պարագային:

Արդեօ՞ք, այս եւ նման արտայայտութիւնները վերջ պիտի ունենան կամ զսպուին, երբ դիտարկելի եւ ակնկալելի է, որ կրնան շարունակուիլ ու տարածուիլ, որովհետեւ այդ «մութ ծրագիր»ներով կը միտին խանգարել ամէն ինչ:

Բայց, ինչպէ՞ս դիտել տուի, նախագահ Ռուբինեան, իր խիստ ու սկզբունքային ընթացքով, անկասկած, այդպիսիները ոչ միայն պիտի զսպէ, այլեւ ենթարկէ խորհրդարանական արգելակիչ միջոցառումներու:

Իսկ «Հայաստան Դաշինք»ի պատգամաւոր եւ այժմ ալ անոր վարչական պատասխանատու՝ Տիկ. Աննա Գրիգորեանը, որ ինքզինք կը նկատէ «Երկաթեան (անհեթեթ) Թաշըր» մը, նաեւ ապագայական... վարչապետուի մը (զո՞ւր տեղը), քանի իր չափազանցեալ ինքնահաւանութեամբ եւ ինքնատեսութեամբ, այդ յաւակնութենէն չի կրնար հեռու թռչիլ եւ մնալ իր սահմաններուն մէջ, փոխանակ՝ ասոր-անոր դէմ գաւազան ու թոյլ թափելու, չմոռնալով որ՝ երեք կուսակցութիւն փոխելով, ոչ սկզբունքային, ոչ գաղափարական, ոչ ալ իրատեսական կրնայ ըլլալ, մնաց որ՝ իր ամուսնոյն վարկն ու վարքն ալ, կ'ըսուի, բաւական խոցելի է:



Մեր այս դիտարկումներն ու գրառումները, ոչ սոսկական են, ոչ ալ երեւակայական, այլ՝ հիմնուած «տեսանելի ու շօշափելի» երեւոյթներու վրայ, որոնք կը հնչուին ու կ'արձանագրուին տարբեր, բայց ստոյգ հորիզոնականներու վրայ:

Այդուհանդերձ, հարցերուն-հարցը այն է, որ Հայաստանի խորհրդարանը պէտք է մնայ իր ուշագրաւ բարձունքին վրայ, իսկ անոր մաս կազմող «խոպոտած ու խոռված» երեւելի-աներեւելի կամ աներեւելի-երեւելի «Փանջունի»ները պիտի մնա՞ն «ջուր ծեծող»ի կամ «աչք ծակող»ի տխրահռչակ դերակատարութիւններուն մէջ:



Այս առիթով, դարձեալ փորձութեան կ'ենթարկուինք, մտածելու եւ ակնկալելու, որ ՀՀ Ազգային Ժողովը, կրնա՞յ թօթափուիլ իր նախկին մոռալ իրավիճակէն, դէպի կառուցողական նոր հեռանկար (թէեւ շատ յուսատու չենք, բայց, սպասողական ալ ենք):

(Պէյրուր)

11/9/2026

ՀԱԶԱՐԱՄԵԱԿՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ՉԻ ԿՐՆԱՐ ՓԱԿՈՒԻԼ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏՄԵԱՆ



Սեպտեմբեր 2-ը սովորական թուական մը ըլլալու սահմաններէն շատ աւելի հեռու կը մղէ բոլորս: Երեսունհինգ տարի առաջ՝ 2 սեպտեմբեր 1991-ին, Արցախայութիւնը իր հաւաքական կամքը արտայայտեց՝ սեփական հայրենիքին մէջ ազատ, ապահով ու արժանապատիւ ապրելու վճռականութեամբ: Նոյն տարուան դեկտեմբեր 10-ի հանրաքուէն այդ կամքին ժողովրդային հաստատումը տուաւ: Այդ օրը ծնած պետականութիւնը տասնամեակներ շարունակ

ապրեցաւ պատերազմի, շրջափակումի, գրկանքներու եւ մշտական սպառնալիքի պայմաններուն մէջ:

Այսօր, երեսունհինգ տարի ետք, Արցախի հողին վրայ կը տիրէ տարբեր իրականութիւն: 2023-ի սեպտեմբերի ռազմական գործողութենէն ետք, աւելի քան հարիւր հազար արցախահայեր, քանի մը օրուան ընթացքին հարկադրուեցան հեռանալ իրենց օճախէն, ապաստանիլ Հայաստան եւ այլուր:

Ահա այս իրականութեան դիմաց, այսօր մեզի կը պարտադրուի ընդունիլ՝ «Արցախի հարցը փակուած է»: Անցեալի կը պատկանի:

Արցախի հարցը փակուած համարելու որեւէ հիմնաւորում չկայ, այնքան ժամանակ, որ Արցախի ժողովուրդը տարագրուած է իր հայրենի հողէն, այնքան ժամանակ, որ անոր վերադարձը, սեփականութիւնը, անվտանգութիւնը եւ արժանապատիւ կեանքը արդարութեան կը սպասեն, այնքան ժամանակ, որ պաշտպանութեան անհրաժեշտութիւն ունին հայկական հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնները:

Քաղաքական համաձայնագիր մը կրնայ քարտէսներու վրայ սահմաններ փոխել եւ իրաւական նոր դրոյթներ արձանագրել: Բայց ստորագրութիւնը անգործ է ջնջելու այն կապերը, որոնք հիւստուած են սերունդներու կեանքով, յիշողութեամբ ու պատմութեամբ:

6 հոկտեմբեր 2022-ին Փրակայի հանդիպումին ընթացքին, Հայաստան եւ Ազրպէյճան վերահաստատեցին, որ ՄԱԿ-ի կանոնադրութեան եւ 1991-ի Ալմա Աթայի հռչակագիրին հիման վրայ փոխադարձաբար կը ճանչնան իրարու տարածքային ամբողջականութիւնը:

Հայաստանի վարչապետը հրապարակաւ յայտարարեց, թէ Հայաստան կը ճանչնայ Ատրպէյճանի 86600 քառակուսի քիլոմէթր տարածքային ամբողջականութիւնը, եւ յստակացուց՝ այդ տարածքին մէջ կը ներառուէր նաեւ Արցախը:

Պատմութիւնը իրաւունք ունի հարցնելու՝ այդ որոշումներուն զուգահեռ ի՞նչ գործնական քայլեր ձեռնարկուեցան ապահովելու Արցախի հայութեան անվտանգութիւնը եւ



իրաւունքները: Եւ ահա՛ այդ քաղաքականութեան իրական արժէքը բացայայտուեցաւ անոր հետեւանքով՝ Արցախի հայաթափումով:

Երկու ամիս ետք սկսաւ Լաչինի միջանցքին տագնապը, իսկ 2023-ի սեպտեմբերին, արցախահայութիւնը ամբողջութեամբ հեռացաւ իր եռհազարեայ հայրենիքէն:

Հայաստանի իշխանութիւնը կարծէք փակուած կը նկատէ Արցախի հակամարտութեան էջը՝ զայն անցեալին յանձնուած հարց մը համարելով: Այս քաղաքական մօտեցումը իր ցայտուն արտայայտութիւնը գտաւ 8 օգոստոս 2026-ին, երբ վարչապետ Նիկոլ Փաշինեան կոչ ուղղեց դադրեցնելու արցախահայութեան վերադարձի շուրջ խօսակցութիւնները՝ զայն ներկայացնելով խաղաղութեան ամրապնդման նոր տրամաբանութեան հետ անհամատեղելի օրակարգ:

Այդ տեսակէտը, այսօր դժբախտաբար իր պաշտպանները ունի Հայաստանի եւ Մփիւռքի մէջ:

Պատմութիւնը քաղաքական որոշումներու արժէքը կը չափէ նաեւ անոնց հետեւանքներով:

Բայց այստեղ կը ծագի սկզբունքային հարց մը:

Խաղաղութիւն մը ինչպե՞ս կրնայ կառուցուիլ լռութեան դատապարտելով ժողովուրդի մը հայրենիք վերադառնալու իրաւունքը:

Ո՞ր մնացին միջազգային կառոյցներու կոչերը, յատկապէս Եւրոպական Միութեան յանձնակատարներուն շռայլած խոստումները եւ մարդասիրական պարտաւորութիւնները...: Սին խօսքեր:

Այս հարցումներուն պատասխանները համոզիչ չեն «նոր իրողութիւն» պատճառաբանութեամբ:

Միջազգային Արդարադատութեան Ատեանը, 17 նոյեմբեր 2023-ին, Ագրպէճանին պարտաւորեցուց ապահովել Արցախէն հեռացած հայերու անվտանգ, անարգել եւ արագ վերադարձը: Դատարանը նաեւ արձանագրեց, որ աւելի քան հարիւր հազար հայեր հարկադրուած էին լքելու իրենց բնակավայրերը եւ անոնց իրաւունքները կը մնային խոցելի վիճակի մէջ:

Ուրեմն՝ վերադարձի իրաւունքը միջազգային օրէնսդրութեան հարթութեան վրայ արձանագրուած եւ իրաւական լուծում պահանջող իրողութիւն մըն է: Խաղաղութիւն չի կառուցուիր ժողովուրդի մը վերադարձի իրաւունքը լռեցնելու գնով:

Ըստ Փաշինեանի քաղաքական մեկնաբանութեան՝ Արցախի հարցը Հայաստանի առջեւ դրուած թակարդ մըն էր...: Անոր պատկերացումով, Հայաստան այդ թակարդէն «ազատագրուած» է ներկայիս: Սակայն այդ «ազատագրութեան» զինը շատ աւելի ծանր էր: Արցախի հայաթափման օրերուն, երբ հայրենիքը կը դատարկուէր իր հայ բնակչութենէն, Հայաստանի Ազգային ժողովին մէջ իշխանութիւնը ներկայացնող պատգամաւորներ զիրար կը շնորհաւորէին՝ այդ պահը հռչակելով Հայաստանի «իրական անկախութեան» օր: Այս



հակադրութիւնը միայն քաղաքական տարբեր դիրքորոշումներու հարց չէր. ան բարոյական պատասխանատուութեան եւ քաղաքական մտածողութեան լուրջ խնդիր մը կը բացայայտէր: Երբ ժողովուրդ մը իր հայրենիքէն կ'արտաքսուի, այդ իրողութիւնը քաղաքական «յաջողութեան» վերածելը կը նշանակէ քաղաքականութիւնը զատել անհատէն, հայրենիքէն եւ ազգային գիտակցութենէն:

Արցախի հարցին ապագան այս տեսանկիւնէն պէտք է դիտել:

Վերադարձի իրաւունք: Սեփականութեան իրաւունք: Միջազգային դիտորդներու երաշխաւորութեամբ՝ արցախահայութեան անվտանգ եւ արժանապատիւ կեանքի վերականգնում:

Ահա այն հարցերը, որոնք այսօր Արցախի հարցը կենդանի կը պահեն:

Կարելի է փոխել քաղաքական բառապաշարը, նոր համաձայնագիրներ ստորագրել, միջազգային նոր իրողութիւններու յարմարիլ, սակայն անընդունելի է ոտնակոխել ժողովուրդի մը արդարութեան պահանջը:

Արցախի հայաթափումը վերջակէտի փոխարէն նոր պարտաւորութիւն ստեղծած է հայութեան համար:

Պարտաւորութիւն՝ պաշտպանելու արցախահայութեան իրաւունքները: Պարտաւորութիւն՝ միջազգային հարթակներուն վրայ շարունակաբար բարձրացնելու վերադարձի, սեփականութեան, մշակութային ժառանգութեան եւ արդարութեան հարցերը:

Իրական վտանգը կը սկսի այն պահուն, երբ ժողովուրդ մը կը հաշտուի իր կորուստին հետ, զայն կ'ընդունի վերջնական դատաւճիռ եւ իր իսկ ձեռքով կը փակէ պատմութեան այն դուռը, որ իր իրաւունքները ապագային տանող վերջին կամուրջն է: Այդ պահուն, կորսուած հայրենի հողի կողքին, կը կորսուի նաեւ վերադարձի յոյսը, իրաւունքի գիտակցութիւնը եւ պատմութեան հանդէպ սեփական պատասխանատուութիւնը:

Սեպտեմբեր 2-ի խորհուրդը այսօր թերեւս աւելի ծանր է, քան երբեւէ: Երեսունհինգ տարի առաջ այդ օրը կը մարմնաւորէր ազատութեան եւ ինքնորոշման հաւատքը: Այսօր ան մեզի կը յիշեցնէ նաեւ ազգային պատասխանատուութեան խորութիւնը:

Եւ քանի տակաւին Արցախին հասցուած անարդարութիւնը չի գտներ իր լուծումը, Արցախի հարցը փակուած հոչակելու որեւէ փորձ կը մնայ միայն քաղաքական կամքի արտայայտութիւն: Արցախը, կը մնայ պատմական իրաւունքի, ազգային արժանապատուութեան եւ արդարութեան չաւարտած հարց:

Երեսունհինգ տարի ետք մեր խօսքը պէտք է ըլլայ պարզ, հաստատ եւ անվարան:

Արցախի հայաթափումը չի կրնար ներկայացուիլ իբրեւ Արցախի հարցին լուծում:

Պատմութեան մէջ կան իրաւունքներ, որոնք կրնան ժամանակաւորապէս, բռնութեամբ ոտնահարուիլ, բայց չեն դադրիր իրաւունք ըլլալէ: Արցախի հարցը պիտի շարունակէ ապրիլ՝ սերունդէ սերունդ, յիշողութենէ յիշողութիւն:

Պատմութիւնը ինք պիտի պահանջէ այդ հարցին պատասխանը:

Արցախի անունը հայ քաղաքական բառապաշարէն հեռացնելով Արցախը չի վերանար պատմութենէն :

Հայ ժողովուրդը Արցախի կորուստը ընդունելու փոխարէն գայն պիտի պահէ իր իրաւունքի գիտակցութեան եւ պատմական պատասխանատւութեան օրակարգին վրայ:

2/9/2026

ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ» ԳԻՐՔ-ԺՈՂՈՎԱԾՈՒԷՆ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ




Կան գիրքեր որոնք համակ կեանք մը կը պարփակեն իրենց էջերուն մէջ: Կեանք մը՝ իր երազներով ու տեսիլքով, երգերով ու վերքերով, արեւավառ ու ամպամած օրերով, այլեւ՝ մաքառումի ու պայքարի ոգիով, խիզախումով, անանձնական նուիրման տենդով ու պատուաբեր իրագործումներով... Տակաւին՝ արեւն ըմպելու սփոփարար շունչով եւ մինչեւ վերջ մարդ մնալու բարոյական անշեղ նկարագրով...

Այսպիսի գիրք մը կը հրամցուի հայ ընթերցող հանրութեան, որուն թիւը տակաւ կը նօսրանայ, ցաւ ի սիրտ, թուայնացած եւ մեքենայացած մեր

դարուն: Գիրքը՝ շուրջ 550 էջերէ բաղկացեալ, հաստկեկ, պատկերազարդ ու գեղատիպ հատոր մըն է՝ ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ խորագրեալ, հրատարակուած Կիպրոսի մէջ՝ Յուլիս 2026-ին, խմբագրութեամբը անխոնջ խմբագիր Եղիա Գայայեանի: Գիրքին հեղինակն է վաստակաւոր մանկավարժ, տաղանդաւոր արուեստագէտ, գեղանկարիչ, գրող, ազգային-հասարակական նուիրեալ գործիչ ՎԱՐԴԱՆ ԹԱՇՃԵԱՆ: Գիրք-ժողովածուն կը բաղկանայ վեց մասերէ, հեղինակին կրթական, գրական-գեղարուեստական, հրապարակախօսական, ազգային-հասարակական, ընկերային բովանդակալից կեանքը պարփակող՝ անձնական, ընտանեկան, համայնքային, ազգային-հաւաքական մակարդակներու վրայ:

ԽՈՐԱՊՈՐՈՒԱԾ ԿԵԱՆՔԻ մը ամբողջութիւնը՝ իր բոլոր գոյներով ու երանգներով, երփներանգ ծիածանին նման... Միտք, հոգի եւ ոգի հարստացնող գիրք մը, էապէս,

բարոյական եւ ազգային բարձր արժէքներ ներշնչող: Տեսողաշող դէպի լայն եւ արեւաշող հորիզոններ բացող եւ ընդլայնող...եւ մասնատրաբար կեանքը ճիշդ եւ լիարժէք ապրելու արուեստը լռելեայն պատգամող...



Ինչպէս գիրքի խորագիրը կը յուշէ, ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ մերթ լուսաճաճանչ յուշերու, խոհապրումներու, յոյզերու եւ խոկումներու, անձնական եւ ազգային-հաւաքական իրագործումներու պաստառադրումն է, մերթ ալ ցաւի ու կորուստի հառաչանք, կսկիծ ու հեծեծանք, որոնք կը կլանեն ընթերցողի սիրտը, միտքն ու հոգին...

Վարդան Թաչճեան վառ ներկայացուցիչն է յետ-Եղեռնեան երրորդ սերունդին, որ տենդագին պայքարեցաւ հացին եւ լոյսին համար, յաղթահարելով ամէն դժուարութիւն եւ զրկանք, բարձրացաւ կեանքի եւ ասպարէզի աստիճաններէն քայլ առ քայլ եւ իրեն հետ բարձրացուց իր ընտանիքն ու համայնքը, հայ

կեանքը առհասարակ, անոր վարկն ու հեղինակութիւնը, իր անձնական ԵՍը դարձնելով ՄԵՆՔ, համահայկական առողջ ոգիով եւ յամառ ու անկոտորում կամքով:

Գիրքի Զօնը՝ 5-րդ էջին վրայ, հեղինակին գեղեցիկ ձեռագիրով մակագրուած, ընթերցողը կը տրամադրէ անոր մթնոլորտին յուզականութեան եւ մորմոքին, այլեւ գիրքի աւանդին, կտակին ու պատգամին.- *«Զօն Միլվիայիս Անթառամ Յիշատակին, Պաշտելի կողակցիս, որ 56 տարիներ ինծի պարգեւեց երջանիկ կեանք, ներարկեց բարոյական ուժ եւ կորով՝ կրթական, նկարչական, թատերական, գրական, հասարակական ու ընկերային կեանքիս հոլովոյթներուն մէջ»:*

Վարդան Թաչճեան կը ծնի Պէյրութի Նոր Մարաշ թաղամասի աղքատ ու թիթեղածածկ տան երդիքին տակ, նահապետական բարքերով եւ աւանդութիւններով ապրող, Կիլիկիայէն բռնի տեղահանուած ընտանիքի ջերմ օճախին մէջ, կը յաճախէ Նոր Մարաշի Քառասուն Մանկանց նախակրթարանը, զոր աւարտելէ ետք 11 տարեկանին, ուսումը կը շարունակէ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան մէջ: Մելգոնեանի հայաբոյր մթնոլորտին մէջ, ուր կեանքը կ'եռար գրական-գեղարուեստական, թատերական, երաժշտական, մարզական, սկաւորական եւ ընկերային լիարին կեանքով, պատանի Վարդանին մէջ տակաւ կը կազմաւորուի ու կը յայտնաբերուի գրելու, գծելու, երգելու, նուագելու, թատերական դերեր բեմադրելու եւ խաղալու բազմակողմանի տաղանդը, շունչին տակ նուիրեալ ուսուցիչներու, ինչպիսիք էին Ներսէս Թամամեան, Վահան Պետլեան, Բիւզանդ Եղիայեան, Վահրամ Մավեան, Պերճ Մանտրունի, Սեպուհ Աբգարեան եւ այլք: 1959-ին՝ շրջանաւարտ կ'ըլլայ գիտական ճիւղէն, բարձրագոյն արդիւնքներով եւ իր գրական երախայրիքը՝ «Երջանկութեան Ետեւէն» պատմուածքը կը շահի 1959-ի տարեկան «Անի



Կեօքճեան» գրական մրցանակը եւ կը տպուի Մելգոնեանի «Այգ» պարբերաթերթին մէջ: Գրական-գեղարուեստական այս երկը կը կարդանք նաեւ այս ժողովածուին մէջ: Անիկա գուցէ առաջին ցոլքն է իր գրական-գեղարուեստական ճաշակին, ոճին եւ տաղանդին:

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ գիրքին մէջ, ընթերցողը գլուխ առ գլուխ եւ էջ առ էջ հաղորդ կը դառնայ հեղինակին անցած բեղուն ճանապարհին, որ սկիզբ առած Մելգոնեանէն, կը շարունակուի ամբողջ իր կեանքի երկայնքին անյոգնում եւ անզիջում: Բարձրագոյն ուսումը աւարտելէ ետք Պէյրութի Ամերիկեան Համալսարանի մէջ, ան կը պաշտօնավարէ որպէս ուսողութեան ուսուցիչ Լիբանանի Պաաքլին գիւղի յայտնի «Շուֆ» գոլէճին մէջ, այնուհետեւ Մելգոնեանի մէջ նոյն հանգամանքով՝ 1966-1975 թուականները: Ան միայն ուսուցիչ չէ, այլեւ արտադասարանային կեանքի աշխոյժ կազմակերպիչ եւ մասնակից, սիրտ, հոգի, կամք ու ժամանակ սպառող, մասնաւորապէս թատերական արուեստի բնագաւառէն ներս, բեմադրելով տասնեակ թատերախաղեր իբրեւ բեմադրիչ ու դերասան Մելգոնեանի մէջ, ստեղծած ըլլալով նաեւ «Յակոբ Պարոնեան» թատերախումբը եւ նոյնիսկ Պաաքլինի մէջ բեմ հանելով արաբերէնով Յակոբ Պարոնեանի «Մեծապատիւ Մուրացկանները», արժանանալով բոլորին սրտագին ընդունելութեան, յարգանքին եւ սիրոյն: Իր կրթական ասպարէզի բարձրակէտը կ'ըլլայ Նարեկ Հայկական վարժարաններու տնօրէնութեան պաշտօնը՝ 1975-2001 թուականները: Պաշտօն՝ զոր կը վարէ ձեռնհաս հմտութեամբ, կազմակերպչական եւ դաստիարակչական բացառիկ կարողականութեամբ ու տքնութեամբ: Ան միայն տնօրէն չէ, այլեւ Նարեկի բարձրագոյն դասարաններուն Հայերէնի ուսուցիչ, կոչումով եւ առաքելութեամբ Ուսուցիչ:

Գիրքին մէջ, լայն տեղ յատկացուած է նաեւ Վարդանի գեղանկարչական հարուստ եւ լայնածաւալ գործունէութեան, որ կ'ընդգրկէ՝ խմբական ցուցահանդէսներէն բացի, շուրջ 50 անհատական ցուցահանդէսներ, աշխարհի տարբեր քաղաքներու մէջ, Նիկոսիայէն Լոս Անճելըս, Պէյրութէն Աթէնք, Լոնտոն, Տուպայ, Թորոնթօ, Մոնթրէալ, Սիտնի, Պանքոկ... եւ հովանաւորութեամբը տեղոյն քաղաքական թէ այլ յայտնի դէմքերու: Ան կ'արժանանայ արուեստասէր հանրութեան բարձր գնահատանքին ամէնուրեք՝ հայ թէ ոչ-հայ: Իր գեղանկարչական գլխաւոր սկզբունքն է. «Վրձինը կը թաթխեմ սրտիս մէջ, ներկին թաթխելէ առաջ»: Իր գեղանկարչական կեանքի կարեւորագոյն մէկ հանգրուանը կարելի է համարել 2022-ին հրատարակուած իր Արուեստի գիրքը, որուն ներկայացման արարողութիւնը, ընտրեալ պատաստներու ցուցադրութեամբ, կը կատարուի 21 Նոյեմբեր 2024-ին, Նիկոսիոյ Մթորվոլոսի Քաղաքապետարանին մէջ: Ձեռնարկին բացումը կը կատարէ Կիպրոսի Խորհրդարանի նախագահ Տիկ. Անիթա Տիմիթրիու: Այս գիրքը եւս ձօնուած է իր թանկագին կողակցին՝ Սիլվիային:

Ժողովածուն ունի նաեւ բաժին մը հեղինակին արտասանած կամ հրապարակած սրտի խօսքերու, բանախօսութիւններու, դամբանականներու եւ տարբեր առիթներով գրած յօդուածներու, կատարած հարցազրոյցներու: Նմանապէս, հոն կը կարդանք Մելգոնեանի փառքի օրերէն պատառիկներ, դրուագներ, գրուած զուարթախոհութեամբ եւ սրամտութեամբ: Մելգոնեանի մէջ դասաւանդած ուսուցիչներէն՝ Պրն. Թամամեան, Պրն Պետեան, Mr. Stretch եւ ուրիշներ կը տողանցեն ընթերցողին հայեացքին առջեւ իրենց



կերպարով ու կենցաղով, վարմունքով ու վերաբերմունքով: Մելգոնեանի վաղուց անցած-գացած կեանքը կը վերակենդանանայ իր առօրեայ եռուզեռով ու խանդավառութեամբ, աշակերտական ծափ ու ծիծաղով, գոռում-գոչումով, դաս ու խաղով, կատակ-կտակով,... Եւ աշխարհի չորս ծագերուն Մելգոնեանի ոգին տարածող Մելգոնեանցիներով, որոնք *«բազմապատիկ տոկոսով հատուցեցին ազգին այն ինչ որ իրենք երախտագիտութեամբ իւրացուցին այդ եզակի Կրթարանէն»*, ինչպէս պիտի ըսէր հեղինակը Մելգոնեանի 90-ամեակին նուիրուած հանդիսութեան: Ասոր ցայտուն վկան՝ նոյնինքն Վարդան Թաշճեանն է, անտարակոյս, որուն ամբողջ կեանքը վառ ապացոյցն է Մելգոնեանի ազգակերտ առաքելութեան եւ որուն սիրտը կը մորմոքի Հաստատութեան անփառունակ փակումին ի տես...

Ընթերցողը տակաւին հետաքրքրութեամբ կը կարդայ գիրք-ժողովածուին մէջ տեղ գտած Սիլվիա-Վարդան գոյգին պտոյտներուն մասին դէպի Վենետիկ եւ Ս. Ղազար կղզի ու Ս. Ղազարի վանք, դէպի Ֆլորանս՝ 2015-ին եւ այլ տեղեր: Այնուհետեւ, պտոյտներ դէպի Րիվիերա, Նիս, Մոնաքօ, Քանն՝ 2019-ին, իրենց ամուսնութեան ոսկեայ տարեդարձին առթիւ: Ընթերցողը կարծես իրենց հետ միասին կը պտուտի նշեալ վայրերը, կը սքանչանայ անոնց անհամար հրաշալիքներով եւ իրենց հետ միասին կը վայելէ կեանքի խրախճանքն ու արբեցումը, շնորհիւ Վարդանի կենդանի եւ պատմողական համով-հոտով ոճին...

Վարդան Թաշճեան 2001-ին կը պարգևատրուի Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով: 2015-ին՝ Հայաստանի Սփիւռքի նախարարութեան «Ոսկէ Մետալ» բարձրագոյն շքանշանով: 2024-ին՝ Համազգայինի «Արժանեաց Շքանշան»ով:

ՅՈՒՇԵՐ ՈՒ ՎՈՒՇԵՐ գիրքի ամենէն փշաքաղիչ, սիրտ մղկտացնող բաժինը իր սիրեցեալ կողակիցին՝ Սիլվիային դառնադետ մահուան առթիւ գրուած ՅՈՒՇԱՐՁԱՆ ՍԻՆՎԻՍՅԻՍ գրութիւններու շարքն է, ժողովածուի աւարտին: Հոս, ինչպէս կը գրէ հեղինակը, *«գրիչս մելան չի հոսիր, այլ արցունք միայն, տառապակոծ սրտի մրմունջը, սրտաճմլիկ մենախօսութիւններու շարքը, երջանիկ եւ բարօր կեանքի վերջակէտին»*: Իրենց առաջին հանդիպումին ակնթարթը որ դարձած էր կայծակնային սիրահարութեան ակնթարթ՝ Մելգոնեանի սրահին մէջ, ապա տարի մը անց, 1969-ին, իրենց կնքած ամուսնութիւնը դուռը բացած էր իրաւ երջանկութեան, ընտանեկան տաքուկ բոյնի մը մէջ, ուր ծներ, հասակ առեր էին իրենց դուստրերը՝ Թալինը եւ Նանօրը: Սիլվիան եղեր էր հաւատարիմ կողակից, օրինակելի մայր, ամրակուռ նեցուկը Վարդանի բոլոր գործունէութիւններուն, անոնց ներշնչողն ու քաջալերողը: Ապա իրենց գոյգ թոռներուն՝ Քրիսթօֆըրին եւ Էրիք-Վարդանին՝ հոգատարութեամբ, սիրով, գորովով, իմաստալից խրատներով թրծողը...

Մէկ խօսքով, Սիլվիան եղեր էր ճշմարիտ հայ կինը, հայ մայրը, կերտելով եւ իր անսահման սէր-գուրգուրանքով պահել-պահպանելով իրենց ընտանեկան տաքուկ բոյնը, *«պատասխանատուութեան գիտակից, մաքրամաքուր եւ եզակի անձնաւորութիւնը, անարատ արիւնը, ազնիւ բարոյականը, պատուաւոր եւ պատուաբեր սրբութիւնը, մեր արդար հպարտութիւնը, անսահման բարիքը, անկորնչելի աւանդը, բարի հոգիէ հարստացնող ժառանգութիւնը, որուն ծիածանը այսօր կը շողայ անմար, կը շողայ, անդարձ*



իր մեկնումեն տարի մը ետք ու պիտի շողայ յաւիտեան», փոխ առնելով հեղինակին սրտառուչ տողերը: Եւ հոս է ի մասնատրի սիրելի հանգուցեալ Սիլվիային իսկական, անկորնչելի ԿՏԱԿԸ:

Վերջին հանդիպումը՝ 7 Փետրուար 2025-ին, այնքան սրտակեղեք է, եղերական, որ դժուար է զայն կարդալ առանց արտասուքի, առանց սրտի խորերէն բարձրացող ըմբոստութեան ընդդէմ անողոք հիւանդութեան լախտի հարուածին, որ զգեսնեց տիպար եւ օրինակելի հայ կինն ու մայրը, բազում առաքինութիւններով օժտուած հայուհին, առանց սակայն կարենալ զգեսնելու անոր ՈԳԻՆ ու ՀՈԳԻՆ, որոնք պիտի ապրին որպէս իրմէ եկած ԿՏԱԿ ու ԺԱՌԱՆԳ, վառ պահելով անոր բարի եւ օրինակելի յիշատակը...

Վարձքդ կատա՛ր, գրիչդ դալա՛ր, արեւդ երկա՛ր, ստեղծագործական ոգիդ անսպա՛ռ, սիրելի Վարդան, եւ թող սիրեցեալ Սիլվիային անթառամ յիշատակը շողա՛յ որպէս մշտավառ աստղ քու երկնքիդ վրայ, ինչպէս բոլոր զինք սիրողներուն եւ յարգողներուն երկնքին:

5/9/2026

ԵՐԲ ԶՈՂԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ԴԱՌՆԱՅ ԿԱՆՈՆ. ՍՓԻՌՔԱՀԱՅ ԱՐՈՒԵՍՏԱԳԷՏԻ ՏԱԳՆԱՊԸ



ՎԱՐՈՒԺ ԹԷՆՊԷԼԵԱՆ

18/7/2026



Վերջերս, նախկին լիբանանահայ եւ այժմ ֆրանսա ապրող հանրաճանօթ երգիչ, դերասան Վիգեն Դարբինեանէն խմբագրութիւնս ստացաւ հետագայ երկտողը՝ հարցումի ձեւով. «Արուեստասէր մը, արուեստագէտ մը, արուեստով զբաղուող մը, մտաւորական մը, մշակոյթի գործիչ մը պէ՛տք է ունենայ ծառայասիրութիւն վասն ոչինչի ու դառնայ մուրացկա՞ն»:

Այդ երկտողը իսկապէս արժանի է խոր քննարկման եւ խորհրդածութեան՝ ո՛չ այնքան իր կտորուկ ձեւակերպումին պատճառով, այլ որովհետեւ անիկա կը վերաբերի սփիւռքեան կեանքի այն իրականութեան, որուն բոլորս ծանօթ ենք, Բայց հագուադէպօրէն կը խօսինք: Այս յօդուածը այդ հարցումին ուղղակի պատասխան մը չէ. անիկա փորձ մըն է հասկնալու, թէ ինչպէ՛ս ծառայասիրութիւնը, որ երկար տարիներ մեր համայնքներու գոյատեւման մեծագոյն ուժերէն մէկը եղած է, երբեմն աննկատ կերպով վերածուած է մնայուն զոհաբերութեան ակնկալութեան՝ վտանգելով նոյն այն մշակոյթը, որուն պահպանման կոչուած էր ծառայելու:

Մեր ժողովուրդը գուրգուրանքով կը խօսի հայ մշակոյթի մասին: Ամէն առիթով կը կրկնենք, որ լեզուն, գրականութիւնը, երաժշտութիւնը, թատրոնը, կերպարուեստը եւ մտաւոր կեանքը մեր ինքնութեան ողնաշարը կը կազմեն: Մենք կը հպարտանանք մեր գրողներով, բանաստեղծներով, երգահաններով եւ երգիչներով, դերասաններով, նկարիչներով ու մտաւորականներով: Անոնք մեր ազգային յիշողութիւնը կրողներն են, մեր ինքնութեան պահպանները, մեր գոյատեւման երաշխիքները:



Բայց այս գեղեցիկ խօսքերուն կողքին կայ անհանգստացնող իրականութիւն մը, որուն մասին շատ քիչ կը խօսինք: Ինչո՞ւ սփիւռքահայ իրականութեան մէջ մշակոյթը կը մեծարուի, իսկ մշակոյթ ստեղծող մարդը յաճախ կը մոռցուի: Առաւելագոյն պարագայի՝ յետ մահու կը յարգուի: Առաջին հայեացքով այս խնդիրը կրնայ նիւթական թուիլ:

Իրականութեան մէջ՝ բարոյական է: Խնդիրը այն չէ, թէ արուեստագետը որքան կը վաստակի: Խնդիրը այն է, թէ համայնքը ի՛նչ պատկերացում ունի արուեստագետին դերակատարութեան մասին: Այս հարցը միայն արուեստագետին մասին չէ: Անիկա կը վերաբերի սփիւռքեան մտածելակերպի մը, որ վերաքննութեան կարիք ունի: Սփիւռքը երկար տարիներ գոյատեւած է ծառայասիրութեամբ: Բայց այսօր նոյն այդ ծառայասիրութիւնը, երբ կը վերածուի մշտական զոհաբերութեան ակնկալութեան, կրնայ վտանգել այն մշակոյթը, որուն պահպանման համար ստեղծուած էր:

Հետագայ արտայայտութիւնը սփիւռքի գրեթէ բոլոր գաղութներուն մէջ լսուած է:

«Ազգային գործ է»:

«Համայնքին համար է»:

«Անիկա ծառայութիւն է»:

Այս բոլոր արտայայտութիւնները ազնիւ մտադրութենէ կը ծնին: Մակայն ժամանակի ընթացքին անոնք ստեղծած են մտածելակերպ մը, որուն վտանգը հազիւ կը նկատենք:

Անիկա այն ենթադրութիւնն է, թէ մշակութային աշխատանքը սովորական աշխատանք չէ: Գրողը պէտք է գրէ, որովհետեւ հայ է: Երաժիշտը պէտք է նուագէ, որովհետեւ համայնքը զինք կը կանչէ: Գեղանկարիչը պէտք է ցուցադրէ, որովհետեւ ազգային գործ կը կատարէ: Դերասանը պէտք է բեմ բարձրանայ, որովհետեւ թատրոնը կը ծառայէ հայապահպանութեան: Եւ այս բոլորին մէջ աննկատ կը կորսուի ամենապարզ ճշմարտութիւնը. այս բոլորը աշխատանք է՝ երկար տարիներու ուսում, փորձ, ձախողութիւն, կատարելագործում եւ անտեսանելի յոգնութիւն:

Ինչո՞ւ միայն արուեստագէտը

Եթէ նոյն տրամաբանութիւնը կիրարկենք ուրիշ մասնագիտութիւններու նկատմամբ, անմիջապէս պիտի զգանք անոր անհեթեթութիւնը: Ոչ ոք կը սպասէ, որ բժիշկը անվճար վիրահատէ, որովհետեւ հիւանդը հայ է: Ոչ ոք փաստաբանին կ'ըսէ, թէ դատը անվճար ստանձնէ, որովհետեւ ազգային հարց է: Ոչ ոք ճարտարապետէն կը պահանջէ ձրիաբար ծրագիր պատրաստել, որովհետեւ շէնքը հայկական հաստատութիւն մըն է: Բայց մշակութային գործիչին պարագային այդ ակնկալութիւնը գրեթէ բնական կը նկատուի: Կարծես մշակոյթը ստեղծող մարդը նիւթական կարիքներ չունենար: Կարծես ան ընտանիք չունենար: Կարծես տան վարձք, ուսման ծախս կամ առօրեայ հոգեր գոյութիւն չունենային:



Ծառայասիրութիւնը առաքինութիւն է, ոչ թէ պարտաւորութիւն: Միալ պիտի ըլլար նուաստացնել ծառայասիրութիւնը: Հայ ժողովուրդի պատմութիւնը անով լեցուն է: Մեր դպրոցները, ակումբները, երգչախումբերը, սկաուտական շարժումները եւ բարեսիրական հաստատութիւնները գոյատեւած են հազարաւոր կամաւորներու շնորհիւ: Ծառայասիրութիւնը մեր

հաւաքական ուժերէն մէկն է: Բայց ծառայասիրութիւնը բարոյական արժէք ունի միայն այն ատեն, երբ ազատ ընտրութիւն է: Երբ ան կը վերածուի ակնկալութեան, ապա կը դադրի ծառայասիրութիւն ըլլալէ: Կը դառնայ պարտադրանք: Աւելի՛ն, կը դառնայ մեղքի զգացումի միջոց: Ով որ համարձակի իր աշխատանքին դիմաց վարձատրութիւն պահանջել, յաճախ կը զգայ, թէ կարծես համայնքին կամ ազգին դէմ մեղանշած է:

Այս մտածելակերպին մեծագոյն վնասը արուեստագէտին չէ: Վնասը համայնքին է: Որովհետեւ ամէն անգամ, երբ մշակութային աշխատանքը կը ներկայացնենք իբրեւ բան մը, որ պէտք է կատարուի անվճար, մենք երիտասարդներուն պատգամ մը կը փոխանցենք. «Այս ասպարէզը ընտրելով՝ դժուար թէ ապրուստ ապահովես»: Թէեւ այս պատգամը չի հնչեր յայտնապէս, բայց անիկա կը հասնի: Եւ տարիներ ետք կը սկսինք դժգոհիլ. Ինչո՞ւ նոր գրողներ չունինք: Ինչո՞ւ երիտասարդ երաժիշտները կը հեռանան: Ինչո՞ւ արուեստագէտները օտար շրջանակներու մէջ կը ստեղծագործեն: Հաւանաբար որովհետեւ մենք երբե՛ք իսկապէս պայմաններ չստեղծեցինք, որ անոնք իրենց տաղանդով արժանապատիւ ապրին:



Մշակոյթի համար կատարուած յատկացումները կարելի՞ է ծախս սեպել: Սփիւռքեան շատ մը հաստատութիւններ մեծ գումարներ կը յատկացնեն շէնքերու, վերանորոգումներու, սարքաւորումներու, ճաշկերոյթներու եւ բազմաթիւ այլ անհրաժեշտ ծախսերու: Բայց երբ խօսքը կը հասնի հեղինակային վարձատրութեան, դասախօսի, երաժիշտի, գրողի, թարգմանիչի, բեմադրիչի կամ նկարիչի աշխատանքին, յաճախ կը սկսինք խնայողութիւն ընել: Կարծես մշակոյթը աւելորդ ծախս ըլլայ: Իրականութեան մէջ մշակոյթը ներդրում է: Ոչ մէկ համայնք երկարատեւ կեանք կ'ունենայ, եթէ չներդրէ իր ստեղծագործ մարդոց մէջ:

Շէնքերը ինքնութիւն չեն ստեղծեր:

Մարդիկ կը ստեղծեն:

Հրեայ, յոյն, իրլանտական եւ իտալական սփիւռքներուն մէջ նոյնպէս ծառայասիրութիւնը կարելորդ տեղ ունի: Բայց անոնք տարիներու ընթացքին հասկցած են, որ մշակութային ստեղծագործութիւնը միայն կամաւոր աշխատանքի վրայ չի կրնար հիմնուիլ: Անոնք ստեղծած են կրթաթոշակներ, ստեղծագործական հիմնադրամներ, հեղինակային ֆոնտեր, արուեստագէտներու բնակութեան ծրագիրներ եւ մշակութային դրամաշնորհներ: Ոչ թէ որովհետեւ իրենց արուեստագէտները աւելի արժէքաւոր են: Այլ որովհետեւ հասկցած են, որ մշակոյթը ինքնաբերաբար չի գոյատեւեր: Անիկա պէտք է սնուցուի:

Շատ անգամ համայնքի հզօրութիւնը կը չափենք շէնքերով, դպրոցներով կամ անդամներու թիւով: Բայց համայնքի մը իսկական հարստութիւնը ուրիշ տեղ պէտք է փնտռել: Անիկա կը գտնուի այն գրողին մէջ, որ կը շարունակէ գրել: Այն երաժիշտին մէջ, որ նոր ստեղծագործութիւն կը յօրինէ: Այն դերասանին մէջ, որ հայ բեմը կենդանի կը պահէ: Այն գեղանկարիչին մէջ, որ մեր ժամանակը հայու աչքերով կը մեկնաբանէ: Եթէ անոնք լռեն, համայնքը կամաց-կամաց կը սկսի աղքատանալ, նոյնիսկ եթէ արտաքինապէս հարուստ թուի:

Հաւանաբար ժամանակն է հրաժարելու այս տխրահռչակ նախադասութենէն.

«Մշակոյթը պէտք է ծառայէ համայնքին»:

Թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել.

Համայնքը եւս պարտաւոր է ծառայելու իր մշակոյթին:

Որովհետեւ մշակոյթը միայն գաղափար չէ: Մշակոյթը մարդիկ են: Իսկ մարդիկ արժանապատիւ կեանքի իրաւունք ունին: Եթէ իսկապէս կը հաւատանք, որ հայ մշակոյթը մեր գոյութեան հիմքն է, ապա պէտք է նոյն լրջութեամբ արժեւորենք անոնք, որոնք զայն կը ստեղծեն ու կը պահպանեն:

Ծառայասիրութիւնը գեղեցիկ առաքինութիւն է: Բայց ոչ մէկ համայնք կրնայ իր մշակութային ապագան կառուցել միայն իր արուեստագէտներուն անվերջ զոհաբերութեան վրայ: Որովհետեւ երբ զոհաբերութիւնը դառնայ կանոն, ստեղծագործութիւնը դանդաղօրէն կը մարի: Իսկ այն օրը, երբ վերջին արուեստագէտն ալ լուռ հեռանայ, մենք պիտի

հասկնանք, որ չենք կորսնցուցած միայն անհատ մը: Կորսնցուցած պիտի ըլլանք մեր սեփական ձայնը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ՅԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Յարութիւն Իսկահատեան – Պէյրութ



Վերջերս յատուկ հետաքրքրութիւն կը դրսեւորուի Պապական Կաթողիկէ եկեղեցւոյ կողմէ Հայ Կաթողիկէ Եկեղեցւոյ նկատմամբ, որուն ցայտուն արտայայտութիւնն էր անցեալ տարի Հայոց Յեղասպանութեան նահատակ Մարտինի հայ կաթողիկէ Իգնատիոս Մալոյեան եպիսկոպոսի սրբադասումը Վատիկանի մէջ: Անկէ ետք

հանգուցեալ Հայ Կաթողիկէ Պատրիարք-Կաթողիկոս Տանն Կիլիկիոյ Կարտինալ Գրիգոր-Պետրոս XV Աղաճանեանի աճիւնին տեղափոխումը Հռոմէն Լիբանան եւ անոր սրբադասման ընթացքը կը մղէ յատադարձ հայեացք մը նետելու Հայ Կաթողիկէ Համայնքի գոյացման վրայ:

Հայոց եկեղեցւոյ կապը Հռոմի կաթողիկէ եկեղեցիին հետ եւ հայ կաթողիկոսներու յարաբերութիւնները պապերու հետ՝ եկեղեցական միասնութեան նպատակով, սկսած է 12-րդ դարուն խաչակիրներու արշաւանքներու ժամանակ, որոնք լաւ յարաբերութիւններ հաստատած էին Կիլիկիոյ հայկական թագաւորութեան հետ: Մակայն այդ փորձերը չհասան իրենց նպատակին եւ Հայկական Եկեղեցին միջնադար մտաւ Հռոմի կաթողիկէ եկեղեցիէն անջատ:

Տարիներու ընթացքին կաթողիկէ եկեղեցին անընդհատ շարժման մէջ էր հայերը դաւանափոխ ընելու: Այս ջանքերը գլխաւորաբար կը կատարէին միսիոնարները, որոնք կ'ուղարկուէին Հայաստանի բոլոր կողմերը: Այս միսիոնարները, որոնք կը սորվեցնէին ու կը քարոզէին կաթողիկէ վարդապետութիւններն ու տոկմաները հայկական դպրոցներու եւ եկեղեցիներու մէջ, որոշ կերպով կրցան կարգ մը հայեր դաւանափոխ ընել: Այս քայլը մեծ քառոյս յառաջացուց հայոց մէջ, որոնք սկսան հալածանքներու եւ խոշտանգումներու քաղաքականութիւն կիրառել: Քանի որ կաթողիկէ հայերու թիւը աճեցաւ, անոնց առանձին եկեղեցի ունենալու պահանջքը սկսաւ լսելի դառնալ հայկական իրականութեան մէջ: Այդ փորձերը ի վերջոյ իրականացան 1742 թուականին, երբ անոնց առաջնորդ եպիսկոպոս Աբրահամ Արծիւեանին Հռոմի մէջ շնորհուեցաւ Սուրբ Փիլոն, Հռոմի Պապ Պենետիկտոս XIV-ի կողմէ, այդպիսով հիմնադրելով առանձին եկեղեցի եւ պատրիարքութիւն:



Հայ եկեղեցւոյ պատմութեան մէջ 17-րդ եւ 18-րդ դարերու ամենանշանակալի իրադարձութիւնը արեւելքի՝ մասնաւորաբար Կոստանդնուպոլսոյ մէջ, Հռոմի կաթոլիկ միսիոնարներու յայտնուիլն էր: Տարբեր առաքելութիւններու պատկանող կաթոլիկ միսիոնարներուն թոյլատրուեցաւ դպրոցներ բանալ Պարսկաստանի հայկական գիւղերուն մէջ, ուր անոնք ուսանողներ կը պատրաստէին Հռոմի քոլեճին մէջ լատինական կրթութիւն ստանալու եւ «կաթոլիկ քարոզիչներ» դառնալու համար:

Յակոբ Զուղայեցի կաթողիկոսի օրերուն Գաբրիէլ Շենոն անունով կաթոլիկ միսիոնար մը Պարսկաստանի շահին հրամանագիրով Երեւան կ'ուղարկուէր՝ փորձելու համար հիմնել հայ կաթոլիկ եկեղեցի մը: Սակայն Շենոնի առաքելութիւնը ձախողեցաւ եւ Էջմիածնի եպիսկոպոսները քանդեցին եկեղեցին: Շենոն բանտարկուեցաւ ու մահացաւ 1685-ին:

17-րդ դարուն ժեզուիթ կաթոլիկ միսիոնարները ներթափանցեցին նաեւ Օսմանեան Կայսրութիւն: Սկիզբը օսմանեան կառավարութիւնը արգիլեց անոնց դպրոցներ հիմնել եւ իրենց կրօնքը տարածել, սակայն աւելի ետք՝ 1675-ին ֆրանսական կառավարութեան միջամտութեամբ, անոնք իրենց սեփական դպրոցները հիմնեցին Օսմանեան Պետութեան նահանգներուն եւ նոյնիսկ Կոստանդնուպոլսոյ մէջ :

Կոստանդնուպոլսոյ հայ առաքելական պատրիարքները եւ հայ երեւելիները սկիզբը թոյլատրեցին կաթոլիկ դպրոցներու հիմնումը քաղաքին մէջ որպէս քրիստոնէութեան պաշտպանութիւն: Հետագային անոնք հասկցան, որ այս դպրոցներուն նպատակը միայն բնիկ հայ ժողովուրդը կաթոլիկ դարձնելն էր: Այս միջոցառումներուն դիմադրելու համար հայ կրօնական եւ մշակութային պատասխանատուները սկսան քաղաքին մէջ աւելցնել հայկական դպրոցներու թիւը եւ բարելաւել անոնց կրօնական դաստիարակութեան ու դասաւանդման դրութիւնը:

Սակայն կային կարգ մը հայեր, որոնք կը հետեւէին Հռոմի կաթոլիկ միսիոնարներու ուսուցումներուն: Միսիթար Սեբաստացի այդ ուսանողներէն մէկն էր: Ծնած է Սեբաստիա, 1676 թուականին եւ նախակրթութիւնը ստացած տեղւոյն Հայ Առաքելական վանքին մէջ, ապա հայ առաքելական եպիսկոպոսի մը կողմէ վարդապետ ձեռնադրուած է: Հետագային դասաւանդած ու քարոզած է հայկական դպրոցներու եւ եկեղեցիներու մէջ, բայց լատին միսիոնարներու ազդեցութեան տակ եւ անոնց առաջարկած բարձրագոյն կրթութիւնը ստանալու փափաքով՝ դարձած է կաթոլիկ հաւատքի ուսուցումներուն հետեւող:

Միսիթար Սեբաստացի իր հետեւորդներով հիմնած է հայ կաթոլիկ միաբանութիւն եւ յաջողցուցած է տպագրութիւնը հայերէն բառարանի մը՝ «Բառգիրք Հայկազեան Լեզուի» խորագիրով, որ Հայագիտութեան խարիսխներէն է եւ կը պարունակէ հին ու միջնադարեան հայերէնի բառապաշարը: Հեղինակած է նաեւ «Դուռն Քերականութեան աշխարհաբար լեզուին» (1727), որ աշխարհաբարի առաջին քերականութիւններէն մէկն է: Ինչպէս նաեւ «Քերականութիւն Գրաբար Լեզուի Հայկազեան Սեռի» (1730), որ Գրաբարի համակարգուած քերականութիւն է: Հեղինակած է նաեւ այլ գործեր: Համացանցային Կայքէջ.-

https://hy.wikipedia.org/wiki/Միսիթար_Սեբաստացի/



Հայ հոգեւորականներէն ամենալուսաւոր մէկուն՝ Մխիթար Սեբաստացիին առաջին մտահոգութիւնը հայ լեզուն, գրականութիւնն ու մշակոյթը պահպանել եւ զարգացնելն էր: Ան կը դիմէր որեւէ միջոցի ծառայելու համար իր ընտրած նախասիրութիւններուն եւ հայրենիքին: Մխիթարեան Միաբանութիւնը մինչեւ օրս կը ծառայէ հայ մշակոյթին եւ մեծ ներդրում ունեցած է անոր զարգացման ու յառաջդիմութեան մէջ:

18-րդ դարու սկիզբը, երբ Օսմանեան Պետութիւնը թոյլ վիճակի մէջ էր, եւրոպական պետութիւնները սկսան աւելի եւս միջամտել օսմանեան կառավարութեան գործերուն: Միսիոնարները սկսան քարոզել եռանդուն կերպով: Հայ Առաքելական Եկեղեցւոյ կաթողիկոսներու դէմ բռն զաշտպան հանդիսացաւ Կոստանդնուպոլսոյ պատրիարք Աւետիք Թոքաթցի, որ Օսմանեան կառավարութեան հրամանով փորձեց վերջ դնել հայ կաթողիկոսներու յարաբերութիւններուն տարբեր եւրոպական միսիոնարներու հետ:

Աւետիք Թոքաթցի պատրիարքին գահակալութեան տարիներուն Կոստանդնուպոլսոյ մէջ տեղի ունեցաւ հայ կաթողիկոսներու առաջին մեծ հաւածանքը, որ 1702 թուականին այնքան դաժան եղաւ, որ Կոստանդնուպոլսոյ հայ կաթողիկոսները դադրեցան հայկական եկեղեցիներ յաճախել եւ սկսան աղօթել օտար կաթողիկ եկեղեցիներու մէջ եւ պատարագ մատուցել տուներէ ներս:

Բացի Կոստանդնուպոլսէն, կաթողիկ եպիսկոպոսներ Մելքոն Թասպազի եւ Աբրահամ Արծիւեանի օգնութեամբ, որոնք կաթողիկ հաւատքի հաւատարիմ հետեւորդներ էին, անոնք որոշ յաջողութիւններու հասան Մարտինի եւ Հալէպի մէջ: Այս երկու եպիսկոպոսներու վարուելակերպը պատճառ դարձաւ Կոստանդնուպոլսոյ հայոց պատրիարքութեան կողմէ հարկադրական միջոցառումներու կիրառման: Կաթողիկոսները իրենց կարգին օգտուեցան Կոստանդնուպոլսոյ ֆրանսացի դեսպանին հնարաւորութիւններէն՝ ի պաշտպանութիւն:

Հայ կաթողիկոսներու կողմէ 1714 թուականին Հայ Առաքելական Եկեղեցիէն անջատուելու առաջին փորձը ձախողեցաւ: Անոնցմէ քանի մը հոգիներ հալածուեցան եւ բանտարկուեցան, որոնց մէջ եպիսկոպոս Աբրահամ Արծիւեանը, որ հետագային կարելոյ դեր խաղցաւ Կոստանդնուպոլսոյ կաթողիկ միլլէթի առանձին ստեղծումէն ետք՝ ցանկալի կաթողիկական փոփոխութիւններու իրականացմամբ:

Աբրահամ Արծիւեան ծնած է Այնթապ, 1679-ին, հետաքրքրուած է եկեղեցական կրթութեամբ, ուստի մեկնած Մարտին, ուր ծանօթացած է տեղւոյն եպիսկոպոս Մելքոն Թասպազին, որ Հռոմի կաթողիկ քուէճի մէջ ստացած էր իր կրթութիւնը: Երբ Արծիւեանը վերադարձած է Այնթապ, Կիլիկիոյ կաթողիկոսը զայն Սիս կանչելով Այնթապի հայոց եկեղեցւոյ եպիսկոպոս օծած է: Հետագային Արծիւեան երեք տարի ծառայած է Հալէպի հայոց եկեղեցւոյ մէջ:

Հալէպ գտնուած միջոցին եպիսկոպոս Աբրահամ Արծիւեան կ'որոշէ ֆերման (հրամանագիր) ստանալ սուլթանէն, որպէսզի պաշտօնապէս Հալէպի Սուրբ Մարիամ եկեղեցին որպէս կաթողիկ եկեղեցի ճանչցուի: Հետեւաբար ան նամակ կը գրէ Հռոմի պապին ըսելով. «Թոյլ տուէք խնդրել Ձերդ Սրբութեանը օգնել ինծի Բարձր Դրան կողմէ ֆերման ստանալու հարցով, որով Հալէպի Սուրբ Մարիամ եկեղեցին ճանչցուի որպէս կաթողիկ»:



Հայ առաքելական եկեղեցւոյ օրէնքներուն համապատասխան քարոզելու եւ պատարագ մատուցելու փոխարէն, ան եկեղեցական արարողութիւններու ժամանակ կ'օգտագործէ կաթոլիկ վարդապետութիւններն ու ծէսերը եւ կը փորձէ համոզել ժողովուրդը կաթոլիկութիւնը ընդունելու: Հալէպի հայերը դժգոհելով Արծիւեանի այս վարմունքէն կը պահանջեն անոր հեռանալը: Արծիւեանը եւ անոր դիրքը պաշտպանելու համար Հալէպի հայ կաթոլիկները աշխատանք կը տանին քաղաքին նահանգապետը սիրաշահիլ եւ այդպիսով կրնան Արծիւեանը հոն պահել: Հալէպի յաջորդ նահանգապետը Օսմանեան կառավարութեան հրամանով Արծիւեանը կ'աքսորէ: Ան առանց դիմադրութեան կը լքէ Հալէպը եւ կ'երթայ Տրապիզոն, ուր կը մնայ երկու տարի՝ մինչեւ 1714:

Արծիւեան տենդագին կերպով կը ջանար իր հաւատացած կաթոլիկութեան վարդապետութեան ուսմունքները ոչ միայն տարածել հայութեան մէջ, այլ նաեւ հայ կաթոլիկ հաւաքականութիւնը պաշտօնական համայնք դարձնել: Այս նպատակին համար ան նոյնիսկ կ'աքսորուի Սուրիոյ Արուստ կղզին եւ ապա կը շրջի զանազան քաղաքներ ու վայրեր՝ Լեռնալիբանանի Քրէյմի վանքը ու Հալէպ, ուր ան զաղտնի տեղափոխուելով տունէ տուն՝ կը քարոզէ կաթոլիկ հաւատքը, մինչեւ Հռոմ: Ան նաեւ 1740-ին եպիսկոպոս կ'օծէ երեք վարդապետներ՝ Յակոբ Յովսէփեանը, Սահակ Բարսեղեանը եւ Մարգար Թուխմաճեանը: Այնուհետեւ 1742 Նոյեմբեր 26-ին, երեք նորած եպիսկոպոսները Աբրահամ Արծիւեանը կ'ընտրեն որպէս Հայ կաթոլիկներու կաթողիկոս եւ զայն կը բարձրացնեն Սուրբ Գրիգոր Լուսավորիչի աթոռին, կոչուելով Աբրահամ Պետրոս Կաթողիկոս-Պատրիարք:

Արծիւեանի Կաթողիկոսական ձեռնադրութեան արարողութենէն տասներկու օր ետք՝ 1742 Դեկտեմբեր 8-ին Հռոմի Պապ Պենետիկտոս XIV-ը Արծիւեանին կը յանձնէ Սուրբ Փիլոնը, Սուրբ Խաչը եւ մատանիները Հռոմի մէջ: Աբրահամ Պետրոս Արծիւեան որոշ փոփոխութիւններ մտցուց հայկական եկեղեցական արարողութիւններուն, վարդապետութիւններուն եւ ծէսերուն մէջ:

1830 Յունուարի սկիզբը հայ կաթոլիկ աքսորեալներուն կը թոյլատրուի վերադառնալ իրենց տուները, անոնց ունեցուածքը կը վերադարձուի եւ կ'արտօնուի անոնց ազատօրէն աղօթել այն պայմանով, որ պէտք է հիմնեն իրենց սեփական եկեղեցիները ու ջաճախեն Օսմանեան Պետութեան մէջ գտնուող եւրոպական երկիրներու կաթոլիկ եկեղեցիները: Նախապէս Օսմանեան Պետութիւնը հայ կաթոլիկները ծովեզերեայ շրջաններէն աքսորած էր երկրին խորերը, զանոնք եւրոպական երկիրներու դիւանագէտներու եւ միսիոնարներու հետ յարաբերելէ զրկելու համար, որովհետեւ Օսմանեան Պետութիւնը կը զգուշանար այդ յարաբերութիւնները եւրոպական պետութիւններու կողմէ շահագործուելով միջամտութիւններ կատարելէ:

Երկարամեայ ջանքերու եւ դիմումներու իբրեւ արդիւնք օսմանեան կայսերական ֆերմանը, որ հաստատեց Հայ կաթոլիկ համայնքը Օսմանեան Պետութեան մէջ եւ անոր արտօնութիւնները սահմանեց, հրապարակուեցաւ 5 Յունուար 1831-ին: Հռոմի Պապ Պենետիկտոս XIV-ը Աբրահամ եպիսկոպոս Արծիւեանի լիազօրութիւնները որպէս Կոստանդնուպոլսոյ հայ կաթողիկէ պատրիարք հաստատելէ մէկ դար անց, Օսմանեան



Պետութեան կողմէ հայ կաթողիկներու նկատմամբ որպէս առանձին համայնք թոյլ տրուեցաւ հիմնել անջատ պատրիարքութիւն եւ կառուցել իրենց սեփական եկեղեցիները:

Հայ կաթողիկէ համայնքի հաստատումը Լիբանանի եւ կարգ մը այլ երկիրներու հայոց համար յետագային օգտակար դարձաւ: Արդարեւ նախ քան Մեծ Եղեռնը Լիբանանի եւ Սուրիոյ փոքրաթիւ հայ կաթողիկէ համայնքը ունեցաւ հոգեւոր եւ ազգային հովիւներ ու առաջնորդներ: Քանի մը եկեղեցիներու կողքին կար նաեւ հայ կաթողիկէ գերեզմանատուն Պէյրութի արուարձան Ֆըրն-էլ-Շըպպաքի մէջ, ուր թաղուած է հայազգի մտաւորական ու արաբագիր գրող, Դամասկոս ծնած Էտիպ Իսհաքը: Մեծ Եղեռնի օրերուն քանի մը տասնեակ հայ որբեր ոչ միայն ապաստան գտած են Զըմմառի հայ կաթողիկէ վանքին մէջ, այլ նաեւ կերակրուած եւ հոգեւոր ու հայեցի ուսում ստացած:

Քրիստոնէութեան ամբողջ հիմքը մարմնաւորող Յիսուս Քրիստոս, քրիստոնէայ խմբաւորումներու գոյակցութեան նմանատիպ հաւանական նախադէպի մը դիմաց գտնուելու պարագային, տարակուսած հաւատացեալ աշակերտներուն եւ ամբոխին հետեւալը կ'ըսէ. «Իմ հօրս տունը շատ բնակարաններ կան» (Յովհաննու Աւետարան 14:2): Նոյն հետեւողութեամբ կարելի է բնութագրել ներկայի հայկական հոգեւոր իրականութիւնը:

Օգտագործուած Աղբիւրներ. - ա. Ազիզ Աթիյէ, «Արեւելեան Քրիստոնէութեան Պատմութիւն» (Լոնտոն, 1968), էջ 338: Բ. Բիւզանդ Եղիայեան (Անթիլիաս, 1971), «Հայ Կաթողիկէ եւ Հայ Բողոքական Համայնքներու Բաժանում», էջ 96, 98, 149, : գ. Մաղաքիա Օրմանեան (Լոնտոն, 1910), «Հայոց Եկեղեցին» էջ 67: դ. Արփի Լեոն (Նիւ Ճըրսի, ԱՄՆ, 1946), «Հայկական Զարթոնումը», էջ 38, 254, 262: ե. Խաչիկ Աթանասեան (Պէյրութ, 1959), «Աբրահամ Արծիւեան Կաթողիկոս», էջ 40, 65-66, 73, 85, 120, 167-168, 248 : գ. Աւետիս Պէրպէրեան (Պոլիս, 1871), «Պատմութիւն Հայոց» էջ 67, 211:

ՏԵՍԱԿԷՏ

«ԹՈՅԼ ՊԻՏԻ ՏԱՆՔ, ՈՐ ՓՈՂՈՅԸ ԼԻՆԻ ՄԵՐ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ ՏՈՒՈՂԸ»


Հրաչ Զիլինկիրեան

«Տարբերակ21» 11 Օգոստոս 2026

Վերջերս Հայց. Առաքելական Եկեղեցւոյ 19-րդ-20-րդ դարու տիտաններէն՝ Գարեգին Վրդ. Յովսէփեանի (հետագային՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս, 1945-1952) 1911-ին հրատարակուած արժեքաւոր գործերէն մէկը կը կարդայի, երբ ստորեւ բերուած հատուածը ուշադրութիւնս գրաւեց: Կարծես այս օրերուն գրուած ըլլար:

Ինչպէս ֆրանսական խօսքը կ'ըսէ՝ «որքան ալ բան մը փոխուի, նոյնը կը մնայ» (plus ça change, plus c'est la même chose): Հայերս կը սիրենք իրարու յիշեցնել, որ «պատմութեան դասերը պէտք է սորվինք»: Անշուշտ, մարդիկ պատմութենէն կը սորվին, սակայն հասարակութիւնները այդ դասը միշտ չէ, որ կը պահեն իրենց յիշողութեան մէջ: Կարծեք իւրաքանչիւր սերունդ պէտք է գայն վերստին սորվի: Եթէ գիտակցի, անշուշտ:

Գարեգին Վարդապետ Յովսէփեանի 20-րդ դարու արշալոյսին Հայ Եկեղեցւոյ եւ ժողովուրդի առջեւ ծառացած խնդիրները դիմագրաւելու առանցքային պատգամը կարելի է այսպէս ամփոփել.



Ան կը զգուշացնէ, որ Եկեղեցւոյ կեանքն ու ապագան չեն կրնար առաջնորդուիլ պատահականութեամբ, փողոցի տրամադրութիւններով կամ վարչական ընթացիկ գործելակերպով: Ան կը շեշտէ ազգային-եկեղեցական կեանքի խորքային նորոգման անհրաժեշտութիւնը՝ հոգեւոր վերակենդանացում, կրթեալ ու պատրաստուած հոգեւորականութիւն, ծխական համայնքներու կազմակերպում, քարոզչութիւն, ընկերային ծառայութիւն եւ մշակութային ու կրթական հաստատութիւններու ամրապնդում: Իր համոզումով Եկեղեցին պէտք ունի այնպիսի առաջնորդութեան, որ վարչական կառավարումէն անդին կարենայ նոր կենսունակութիւն ստեղծել եւ նպաստել ժողովուրդի հոգեւոր եւ բարոյական վերածնունդին:

Յովսէփեան կը գրէ (*)՝

«Թոյլ պիտի տա՝նք, որ փողոցը լինի մեր

ազգային գործերին ուղղութիւն տուողը: Պատուաբեր չի լինիլ մեզ համար, եթէ նորից կրկնենք այն սխալները: Անհրաժեշտ է հետզհետէ հող պատրաստել և ազգային-եկեղեցական ընդհանուր ժողով գումարել, քայքայման վիճակին հասած մեր դարաւոր ազգային ժառանգութեան կրօնական վերակենդանութեան, վարչական եւ ծխական բարեփոխութեան խնդիրները լուծել բաւականութիւն տալ ժամանակի հասունացած եւ խելացի պահանջներին, աւելի սերտ յարաբերութիւն եւ միութիւն մշակել եկեղեցւոյ լրութեան մէջ: Պէտք է միջոցներ ձեռք առնել ժամանակի համաձայն մտաւոր եւ բարոյական բարձր մակերեւոյթով՝ եկեղեցականութիւն պատրաստել եւ նիւթապէս ապահովել գիտնական եւ կրթուած միաբանութիւն ստեղծել, կարգաւորել եւրոպական՝ մտքով Մ. Աթոռի թանգարանն ու մատենադարանը, դիւրութիւններ ստեղծել գիտութեամբ զբաղուելու վանքերի առաջ քաղաքակրթական բարձր նպատակ դնել, ճեմարանը եւ միւս հաստատութիւններն իրենց անկերպարան եւ անապահով վիճակից հանել, կալուածների եւ դպրոցների կառավարութեան եւ բարեկարգութեան աւելի խելացի եւ հաստատուն ձեւ մշակել: Եկեղեցական արուեստը ճարտարապետութիւնը, նկարչութիւնը, յատկապէս երաժշտութիւնը կարօտ են աւելի հոգատարութեան եւ խնամատարութեան: Մեր եկեղեցական կեանքի ներքին բովանդակութիւնը ու քաղաքակրթական ստեղծական կարողութիւնը աղքատացել է կամ անփութութեան ենթարկուել, մենք չունենք՝ քրիստոնէական-եկեղեցական բարեգործական հաստատութիւններ՝ հիւանդանոց, անկեղանոց եւ որբանոց. չունինք աղքատների կանոնաւոր խնամատարութիւն, հովութիւն, կամ հոգեշահական գործունէութիւն, համայնական կամ ծխական կազմակերպութիւն: Քարոզչական գործը նոյնպէս մատնուած է անփութութեան եւ մեր առաջնորդները հոգեւոր կեանքի ղեկավարներ չեն, կրօնական-բարոյական կեանքին ուղղութիւն տուող, այլ

ղիւանական պաշտօնեաներ: Այս բոլոր խնդիրների յաջող խնդիրների յաջող լուծումն ու կանոնաւորումը մեծ կամ փոքր չափով կախուած է կաթողիկոսի անձնաւորութիւնից».*

(*) Գարեգին Վարդ. Յովսէփեան, «Մաղաքիա Արքեպիսկոպոս Օրմանեան եւ

Կաթողիկոսական Ընտրութիւն». Բ. Տպագրութիւն. Թիֆլիս, 1911:

ՄԵՐ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ ԿԱՅ, ԿԸ ԳՈՀԱՑՆԷ՞

(ԿԱՍ՝ ԻՆՉՈ՞Ւ ԱՆ ԻՐ ՀԱՅԵԱՑՔՆԵՐԸ ՈՒՂԱԾ Է ԱՅԼՈՒՐ)

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Սփիւռքը, իր գաղութներով ու համայնքներով, կառոյցներով ու սիւներով, տեղաշարժերով ու գործընթացներով, կ'արդարացնէ՞ կամ կը գոհացնէ՞ արդի իրականութիւնը, նախ՝ ապագայի հաշուոյն, ապա՝ գոյատեւման հեռանկարով:

Պէտք է ըլլալ անմիջական ու թափանցիկ, ճակատային ու բեւեռային, առարկայական ու գործնամտական, առանց իյնալու զգացականութեան ու վերացականութեան, մակերեսական եւ անշօշափելիական արահետներուն մէջ ճեմելով, մոլորուելով ու մխրճուելով, որովհետեւ՝ այդ մտայնութիւններն ու հոգեբանութիւնները չեն օգնէր կամ նպաստէր Սփիւռքը դուրս բերելու իր թմբիրէն կամ վերահասու ըլլալու այն մակընթացութիւններուն, որոնք մեր առօրեային մէջ դարձած են սովորոյթներու ու բարոյոյթներու խիստ մտահոգիչ հանգրուաններ, որոնց համար «բնական» բացատրութիւններով, ուրիշներու համար ալ տագնապեցնող եզրոյթներով:

Եթէ առաջին կողմի մտածողներուն հետեւինք, կը նկատենք, այլեւ՝ կը հաստատենք, որ անոնք կամ անտարբերներ են կամ անհոգներ կամ յուսահատներ, որ՝ մէկ կողմէն՝ Հայաստանի բարդ իրավիճակը, միւս կողմէն՝ անոր փոթորկոտ եւ անկայուն հոսքը, ցնոր տնօրինում, հաւատք չի ներշնչէր (սական, մինչեւ ե՞րբ եւ ո՞ւր):

Երկրորդ կողմի յաւակնորդները այն հատուածներն են, որոնք հաւատքի ուժով փարած են իրենց արմատներուն, կոչումներուն ու համոզումներուն, թէեւ կ'ապրին մղձաւանջներ, բայց, չեն ուզեր յանձնուիլ որեւէ արկածախնդրութիւններու, կառչած մնալով իրենց ազգային կանչներուն, ապագային հետ երբեք չվարուելով յոռետեսութեամբ:

Անշուշտ, այս եւ նմանօրինակ մտածումներն ու կեցուածքները, բնաւ տարօրինակ չեն, բայց, այն ինչ որ կը բոլորուի մեր շուրջը, իր ցաւերով եւ անկումներով, ձախողութիւններով ու ձախաւերութիւններով, դժբախտութիւններով եւ անիրաւութիւններով, անարդարութիւններով ու հպանցիկութիւններով, իրենց զանազան արտայայտութիւններով, տեղայնութիւններով, անիրաւաշտութիւններով,



կողմնակալութիւններով ու թողլքութիւններով, զանոնք պէտք է տեսնել իրենց մերկութիւններով, չորացումներով, անկիւնաւորումներով ու մթագնութիւններով, իրօք, վտանգաւոր եւ աղիտաբեր են հայկական Մփիւոքին համար, շատ յաճախ ալ կը մատնեն յուսահատութիւններու, հիասթափութիւններու, իրենց զանազան ախտավարակային հետեւանքներով:

Կարելորն ու հիմնականը անոնք են, որ այսօր մեր շուրջը կը կատարուին ու նկատուին, կը զգացուին ու կը յայտնուին այդ ցաւերը, կաղացումները, թերացումները, բայց, անոնց «լուծում»ը կամ «դարմանում»ը դանդաղ եւ անբաւարար են, իսկ ատոնք կ'առաջնորդեն բեկումնային տրամադրութիւններու եւ արդիւնքներու, մերօրեայ գաղութները եւ անոնց հայաբնակչութիւնը, հետզհետէ տկարացնելով, երբեմն ալ՝ հիւծելով:

Եթէ անգամի մը համար, մեր չորսդին նայինք, բաց աչքերով եւ արթուն տրամաբանութեամբ, պիտի չտեսնե՞նք ու հաւատանք, որ Մփիւոքը այն չէ, ինչ որ էր ասկէ առաջ, քանի, ժամանակները ամէն ինչ փոխած են, իսկ այդ կարգավիճակութիւնը, ոչ միայն չեն կրնար մնալ այդ հորիզոնականին վրայ, այլ՝ ամէն օր պիտի արժանանան նոր ձեւաչափութեան կամ ձեւափոխութեան, մանաւանդ՝ երբ իրերայաջորդ սերունդներ կը հասնին իրարու ետեւէ, իսկ զանոնք ուղղելը կամ դատելը, չեն կրնար նախկին կամ անցեալի կրկնութեամբ ընթանալ:



Այս գրառումները, մտորումները եւ արձանագրութիւնները լոյսին բերելով, երբեք լուակնութիւններ չկան նսեմացնելու կամ բիծաւորելու Մփիւոքը, իր զանազան կողմերով եւ երեսներով, ընդհակառակը, կայ նախանձախնդրութիւն ու հետեւողականութիւն, զայն ներկայացնելու «ինչպէս որ է», չմոռնալով յիշելու նաեւ այն պակասաւորութիւնները, ժխտականութիւնները ու դիւրաբեկութիւնները որոնք ակնյայտ են եւ անհրաժեշտութիւն կայ անոնց վրայ շեշտելու, զանոնք բարելաւելու, կարգաւորելու եւ արդարացնելու միտումներով:

Անկասկած, բարեփոխումներու հասնելու ու զանոնք մշակելու համար, պարտաւորութիւն եւ յանձնառութիւն կայ, որ պատասխանատու հարթակներ ու կայքեր, կարելիութիւններ ու միջոցներ գտնել, զանոնք խթանելու եւ արդիականացնելու, նիւթական ու բարոյական, խնամակալական եւ առողջապահական, նաեւ կրթական եւ ուսումնական նեցուկներով:

Ծանօթ է, թէ այս ուղղութեամբ չեն պակսիր համապատասխան զօրակցութիւններ ու բարերարութիւններ, օժանդակութիւններ եւ օգնութիւններ, սակայն, կարիքները այնքան շատ են, կարօտեալները՝ բազմաթիւ, ինչ որ կը սահմանափակէ անոնց նկատմամբ, հունաւորելու աւելի լայն ու մնայուն վերաբերմունքներ:

Յստակացնենք. Ճիգերն ու ջանքերը չեն պակսիր, որ գաղութային կազմակերպութիւններ, միշտ հետամուտ ըլլան, իրենց հայրենակիցներուն եւ անոնց հարազատներուն եւ ընդհանրապէս բոլորին օգնութեան հասնելու, բայց, յաճախ անոնք կը բախին, կամքէ



անկախ պատճառներով, գտնուելու սահմանափակումներու եւ անելներու դիմաց, իրենց մարդասիրական աշխատանքներուն թափը թուլացնելով, բայց, ոչ-արգելակելով:

Իսկ այս ֆինանսական եւ եկամտական սեղմումներն ու ճնշումները, ինչ խօսք լուրջ անպատեհութիւններ են, որոնք կը դժուարացնեն ընկերային-մարդկային, ազգային, կրթական ու համալսարանական, կամ աշխատանքային-ասպարեզային կարելիութիւնները, ոչ միայն նուազեցնելու, յաճախ ալ՝ տժգունելու կամ ստուերելու:

Ի հարկէ, գէթ Լիբանանի պարագային, պետական կամ կառավարական շրջանակներէ օժանդակութիւն կամ նպաստ ակնկալելը... ցնորք ըլլալու չափ անհեթեթութիւն է, ոչ միայն ներկայիս, այլ՝ ընդհանրապէս, իր ծնունդէն ասդին, քաղաքացիներուն «քիթէն-բերնէն» բերելով, հետեւաբար, կարօտեալներու կամ աջակիցներու պարագային, այդ հոգատարութիւնը կամ հոգածութիւնը կը բեռցուին, խնդրոյ առարկայ կողմերուն վրայ, նաեւ՝ որոշակի կազմակերպութիւններու ուսերուն:

Սակայն, ատոնք բաւարար ր են կամ կը բաւարարեն ծով-ալիքներուն, թէ՛ ուսումնական, թէ՛ մարդասիրական, թէ՛ կրթական, թէ՛ համալսարանական, թէ՛ ընկերային կարիքներուն:

Ուրեմն, այս անգոհացուցիչ կամ կիսաբաւարար պայմաններուն դիմաց, խղճալի կը դառնան օժանդակութեան, նպաստաբաշխութեան ու ձեռներեցութեան անհրաժեշտ միջոցառումները, ինչ որ, ներկայ բարդ հոլովոյթներու մէջ, արդէն համարեա գոյութիւն չունի, կամ որոշապէս համեստ է եւ կամ՝ պատահական:

Իսկ իրերու այս համայնապատկերը, ի՞նչ կը ցուցանէ, ինչպէ՞ս ինքզինք կը բնորոշէ եւ ի՞նչով կը յուսադրէ, հակառակ անոր որ, կամքի եւ յոյսի, վստահութեան ու լաւատեսութեան «սերմ»երով սնուողներու մօտ չեն պակսիր դիմադրականութեամբ եւ անտեղիտալութեամբ տոգորուածներ, որոնք չեն ուզեր հեռանալ իրենց էութենէն եւ ինքնութենէն, ի գին յարատեւման ու գոյատեւման մարտահրաւերներուն:



Աւելի խորացնելով ու մասնաւորելով մեր մտահոգութիւնները եւ յատկապէս կեդրոնանալով նոր սերունդին եւ երիտասարդութեան հետ առնչուող պահանջներուն ու խնդիրներուն վրայ, որոնք կարօտ են աւելի լուրջ, ուղղակի, ծրագրուած վերանայումներու, անոնք ըլլան կրթանպաստային (դպրոցական թէ՛ համալսարանական), ապա, աշխատանքային ասպարեզներու գտանելիութեան, հուսկ՝ առնուազն, գոհացուցիչ պայմաններով վարձատրութեանց, կը մնան այն հրամայականները, որոնք կ'ենթադրեն հովանաւորութիւններ, կրթաթոշակային բաշխումներ, մասնագիտութիւններու տիրապետումներ, ճիշդ եւ օգտաւետ ընտրութիւններ, աջակցութիւններու, որդեգրութիւններու կամ յարակից այլ միջոցներով սատարելու՝ կարօտեալներու, արժանաւորներու, խոստմնալիներու կամ գերազանցներու:

Դժբախտաբար, վերջին տարիներուն, պատերազմներու, անապովութիւններու, բախումներու թէ՛ ներքին կոիւններու պատճառներով թէ՛ տնտեսութիւնը տուժեց, թէ՛



գործադրկութիւնը տարածուեցաւ, թէ՛ ապրուստի սղութիւնները ահաւոր թափով ընդհանրացան, բազմաթիւ ընտանիքներ ազդուելով անոնցմէ, ոմանաք գաղթելով, ուրիշներ ալ մատնուելով անճրկութեան ու խայտաբղէտ պատուհասներու:

Աւելի ցաւալին այն է, որ օգնութեան ցանցերու գոյութիւնները, եթէ չցամքեցան, բայց ապահովաբար նուազեցան, մերթ հաստատութիւններու կամ հիմնարկներու փակումով կամ նօսրացումով, մերթ գումարներու անբաւարարութեան կամ կրճատումներու պատճառներով:

Այսօր, նմանօրինակ աղբիւրներու առկայութիւնը համարեա նուազագոյն իջած է իր կազմով, գանձով եւ այլ բարենպաստ կարելիութիւններով, որոնք հազիւ կը բաւարարեն պահանջներու ծառայութեանց, սակայն, ոչ արժանի լրացումներով:

Այդուհանդերձ, չենք կրնար ուրանալ կամ անտեսել այն կազմակերպութիւնները (բարեսիրական, հիմնադրամային, բարերարական եւ այլ կողմնակիցներ), որոնք, կարելի եղած չափով ջանադիր են, պատրաստակամ եւ օժանդակաբեր, իրենց կարելիութիւններուն ներած չափով, իրենց առաւելագոյնը տալով կամ մատուցանելու պատկան խնդրարկուներուն:

Սակայն, ինչպէս անդրադարձայ, ատոնք մեծկակ կամ կշռելի չափանիշներով չեն, այլ՝ համեստ, չափաւոր կամ մասամբ ընդունելի տուչութիւններ, որոնք կրնան ըլլալ շնորհաբեր գնահատումներ, յատկապէս ծանր պայմաններու մէջ գտնուողներուն համար:

Հարցը այն է, որ՝ լիբանանահայ գաղութը, իր մշակութային տարբեր ծիրերէն ներս, ճիշդ է, հրապարակի վրայ է, իրեն յատուկ ներկայացումներով եւ իրագործումներով, բայց, հոս ալ կան նոյն մտահոգութիւններն ու սպասումները, որովհետեւ ամէն կազմակերպութիւն, շրջանակ, հաւաքականօրէն թէ անհատաբար, ի վիճակի չի կրնար ըլլալ այդ «պարապ»ները լեցնելու, թէկուզ անոնց մէջ ըլլան շնորհալիները, ապագացուններ կամ ընտրելիներ, ի դէմս զանոնք առաջ մղելու, քաջալերելու կամ զօրավիգ կանգնելու, իսկ նման պարամանները բառնալու միջոցները այնքան ալ յուսատու եւ օգտաբեր չեն կրնար ըլլալ, հակառակ բարի տրամադրութիւններուն, գնահատական արտայայտութիւններուն եւ ոմանց ողջունելի ճիգերուն:

Այս մատնանշումներն ու յիշեցումները, առանց բարդութային զգացողութեան, հասկնալի պէտք է ըլլան, բայց ոչ համակերպելի, այնքան ատեն որ՝ գաղութային կեանքը սովորական ընթացքի մէջ չի գտնուիր, ոչ ալ կը մնայ համարատու, այլ՝ դիմադրողական ու հասկացողական մօտեցումները աւելի շինիչ ու կառուցողական ուղիով մը... կը պսակուին:



Այս հրատապութիւններու կողքին, վստահաբար կայ նոյնքան եւ աւելի այժմեական օրակարգ մը, որ վերջին տարիներուն դարձաւ մղձաւանջային կարծր մտահոգութիւն մը, երբ շրջանաւարտ-շրջանաւարտուիներ մատնուեցան «ահագանգ»երու, դէմ յանդիման գտնուելով իրենց համալսարանական կրթաթոշակներու ապահովման ու կիրարկման,



որոնք «զգլխիչ» բարձունքներու կը հասնին, իսկ զանոնք «ճարել»ը, շատերու համար, աւելի քան դժուար փորձութիւն մը կամ անհասանելիութիւն մը եղաւ:

Անոնք՝ որոնք բախտաւորութիւն կ'ունենան (կամ ունին), այսպէս թէ այնպէս, բաւարարուելու եւ ուղի հարթելու դէպի լիակատար յաջողութիւն, մեծ թիւ մը չեն ներկայացներ, իսկ մնացած թեկնածուները կամ կը հրաժարին այդ ընտրանքներէն կամ ալ իրենց հայեացքները կ'ուղղեն այլուր (արտասահման):

Լա՛ւ, այս բարդ իրավիճակը ծանօթ է բոլորին, յատկապէս պատասխանատու մարմիններուն (նաեւ՝ ծնողներուն), մինչ գաղութին ղեկավարական շրջանակներ, կը սրտնեղեն, այլեւ կը քննադատեն երկրէն հեռացող կամ լքող թեկնածուները, ինչ որ արդար պոռթկումներ են:

Բայց, նոյն կողմերը, ունի՞ն այլընտրանքներ, երբ շրջանաւարտները ինքզինքնին կը գտնեն փապուղիներու առջեւ, իսկ յետոյ կը լսեն, իրենց նկատմամբ քննադատական խօսքեր ու սաստեր, առանց որ՝ անոնք կարենան այդպիսիներու նկատմամբ, «ապահովագրական եւ յարատեւական» քայլեր առնել, գործնական տնօրինումներով, յուսադրական կարգադրութիւններով ու հանգստացուցիչ տուեալներով:

Այս պարագաներուն, առանց հակընդդիմութեան երթալու կամ «կողմ» դառնալու, ինչպէ՞ս վերաբերուիլ կամ ինչպէ՞ս օգնել, վաղուան երիտասարդին ապագային նկատմամբ, մեղմ ըսած, անհեռանկարային կեցուածքը, նաեւ այն երիտասարդին, որ իր ապագան փնտռելու ու հետապնդելու հելքի մէջ է:

Պէտք է անկեղծ, առարկայական եւ իրապաշտ ըլլալ, ո՞ր պէտք է փնտռել «լուծում»ը, ինչպէ՞ս դիմակալել արտահոսքը եւ ի՞նչ գնով օժանդակել խնդրարկուներուն (որոնք կշռելի թիւ մըն են):

Ասոնց պատասխանները ո՞ր կը գտնուին, դժուա՞ր է որոշել՝ ո՞ր, երբ անոնց տեղերը յստակ են, տեսանելի ու թափանցիկ, հետեւաբար, ինչո՞ւ դեգերիլ հոս ու հոն, ապա, անկարելիութիւններու պարագային, «մեղք»ը նետել, ակամայ կամ պարտադրաբար մեկնողներուն վրայ, յետոյ ալ՝ մեղադրել (ու նոյնիսկ պախարակել) գացողները, առանց յիշատակելու կամ «մատը դնելու վերք»ին վրայ:

Եթէ Մփիւոքը, իրապէս մտահոգուող ու տագնապուող է, իր նորակոչ սերունդներու մասնագիտական գիտութիւններու յաջողութեամբ ու դիրքեր գրաւելու պաշտօնագտանելիութեամբ, ուրիշ ելք չունի, բացի, ի սկզբանէ, կողմնակից, զօրավիգ ու հետեւակից դառնալու իր «հօտ»երուն ներկայով եւ ապագայով, ըստ այդմ, իր հովիւութիւնն ու հովանաւորութիւնը պահելով աշխատունակ, գործնամէտ եւ արդիւնաւետ:

Այս ամբողջ հետեւումները, իրենց զանազան տեսանկիւններով ու տեղանուններով, նորութիւն չեն, բայց, ժամանակները հասցուցած են այս ձգձգուածութեան եւ անհոգութեան, իսկ անոնք դարձած են «ազգային էահարցեր», առանց ուղղահայեաց դիրքերու, այլ՝ մնալով «զլխիվայրական» դրութեանց մէջ:

Եթէ կը խօսուի համայնքայնութեան, համախմբութեան, միասնականութեան ու համագործակցութեան մասին, ատոնք չեն կրնար բնորոշուիլ, ձեւաւորուիլ եւ արտաբերուիլ, ժամանցութեան կարգով, որովհետեւ, արդէն ուշ է, իսկ վաղն ալ՝ խիստ ուշացած:

(Պէյրութ) 1/8/2026

Ո՛Չ ԱՄԷՆՈՒՆ ՀԵՏ, ԱՅԼ՝ ՃՇՄԱՐՏՈՒԹԵԱՆ ԿՈՂՔԻՆ

ԱՀԱՐՈՆ ՇԽՐՏՇՄԵԱՆ



Ամէն առաւօտ օրացոյցէն թերթիկ մը կը վերցնեմ՝ նոր օրուան լուռ աչքալուսանքը կատարելով: Փոքրիկ այդ թուղթը կ'ազդարարէ ժամանակին անընդհատ ընթացքը. օր մը եւս անցաւ, նոր մը սկսաւ: Իսկ թերթիկին ներքեւ սովորաբար իմաստուն խօսք մը կայ՝ մարդուն մտածումը պահ մը առօրեայէն վեր բարձրացնելու եւ ներքին խորհրդածութեան մղելու կոչուած:

Այսօրուան խօսքը հետեւեալն էր.

«Ջանա՛ սա սկզբունքին տէր ըլլալ.— Ոչ ոքի դէմ, ամէնուն հետ»:

Կարդացի եւ մտովին անմիջապէս մերժեցի:

Գուցէ այս միտքը առաջին հայեացքով խաղաղասիրական, ազնուական եւ մարդասիրական թուի: Ո՞վ պիտի չուզէր առանց թշնամութեան ապրիլ, անտեղի բախումներէ խուսափիլ եւ բոլորին հանդէպ բարեացակամ մնալ: Սակայն խօսքին խորքը մտնելով՝ անոր մէջ վտանգաւոր երկիմաստութիւն մը կը բացուի: Որովհետեւ «ոչ ոքի դէմ» ըլլալը տակաւին կարելի է հասկնալ իբրեւ անձնական ատելութենէ, քինախնդրութենէ եւ թշնամանքէ հրաժարում: Բայց «ամէնուն հետ» ըլլալը բոլորովին տարբեր բան է: Ան կրնայ նշանակել յարմարիլ բոլորին, համակերպիլ հակադիր սկզբունքներու, նոյն ժպիտով մօտենալ թէ՛ արդարին եւ թէ՛ անարդարին, թէ՛ զոհին եւ թէ՛ անոր հալածիչին:

Նկարագիր ունեցող մարդը չի կրնար ամէնուն հետ ըլլալ:

Ան կրնայ յարգել բոլորին, սակայն չի կրնար ընդունիլ ամէն դիրքորոշում: Կրնայ քաղաքավար մնալ, բայց չի կրնար բարոյապէս չեզոք ըլլալ: Կրնայ անձնական ատելութիւն չունենալ, բայց պարտաւոր է դիրք բռնել անարդարութեան, կեղծիքի, բռնութեան եւ արժանապատուութեան ոտնահարման դէմ:

Նկարագիրը ճիշդ այդ սահմանագիծն է:



Ան այն ներքին ձայնն է, որ մարդուն կըսէ՝ մինչեւ ո՛ր կարելի է երթալ եւ ուրկէ՛ անդին զիջումը այլեւս խոհեմութիւն չէ, այլ՝ ինքնուրացութիւն: Սկզբունքը իր իսկական արժէքը կը ստանայ այն պահուն, երբ անոր հաւատարիմ մնալը գոհողութիւն կը պահանջէ: Երբ ոչինչ կը վտանգուի, սկզբունքային երեւիլը դիւրին է: Դժուարը դիրք պահելն է, երբ դիմացոյ շահ մը կայ, բարձր պաշտօն մը, պատիւ մը, գումար մը, հրաւեր մը կամ անձնական յարմարութիւն մը:

Մեր շրջապատին մէջ, դժբախտաբար, քիչ չեն այն մարդիկը, որոնք ամենուն հետ լաւ ըլլալու կարողութիւնը իմաստութիւն կը նկատեն: Անոնք իրենց ընթացքը կը ներկայացնեն իբրեւ չափաւորութիւն, դիւանագիտութիւն կամ լայնախոհութիւն: Իրականութեան մէջ, սակայն, յաճախ պարզ հաշուարկ է՝ ոչ մէկ դուռ փակել, ոչ մէկ ազդեցիկ անձ դժգոհ ձգել, ոչ մէկ դիրքի ամբողջական պատասխանատուութիւնը ստանձնել:

Այսպիսի մարդը տարբեր ճշմարտութիւններ կ'ունենայ տարբեր միջավայրերու մէջ: Մէկուն ներկայութեան կը դատապարտէ այն, ինչ ուրիշի ներկայութեան կը պաշտպանէ: Այստեղ հայրենասիրական ճառ կը խօսի, այնտեղ՝ նոյն համոզումները կը մեղմացնէ կամ ամբողջովին կը մոռնայ: Սփիւռքի մէջ պահանջատիրութեան դրօշ կը պարզէ, Հայաստան հասնելուն պէս իշխանութեան կամ ազդեցիկ շրջանակներու հաճոյ թուելու համար ուրիշ լեզու կը գործածէ: Փակ սենեակի մէջ խիզախ է, հրապարակին վրայ՝ զգուշաւոր, իսկ շահու ներկայութեան՝ լուռ:

Անոր համար դիրքորոշումը համոզում չէ, այլ՝ հագուստ, որ կը փոխուի միջավայրին համաձայն:

Այս երեւոյթը հանրային կեանքը ներսէն մաշեցնող ախտ է: Երբ մտաւորականը կը վախճայ յստակ խօսելէ, երբ գործիչը իր խօսքը կ'ընտրէ ոչ թէ ճշմարտութեան, այլ ներկաներու համաձայն, երբ ազգային հարցերը կը վերածուին անձնական դիրքի պահպանման միջոցի, հասարակութիւնը աստիճանաբար կը կորսնցնէ իր բարոյական կողմնացոյցը:

Այդ պահուն այլեւս չենք գիտեր, թէ ո՛վ ի՛նչ բանի կը հաւատայ: Գիտենք միայն, թէ ո՛վ որո՛ւ հետ կը ցանկայ լաւ մնալ:

Եւ ահա այս մտածումներուն զուգահեռ հայրենի մամուլին մէջ կարդացի ծագումով լիբանանցի- ամերիկացի գրող, տնտեսագէտ եւ վերլուծաբան Նեսիմ Նիքուլաս Թալէպի կեցուածքին մասին: Ան հրաւիրուած էր Ազրպէյճան՝ դասախօսութիւն մը տալու: Մերժած էր: Հրաւիրողները, կարծելով թէ խնդիրը գումարն է, զգալիօրէն բարձրացուցած էին իրենց առաջարկը: Բայց Թալէպ դարձեալ մերժած էր՝ յայտարարելով, որ Պաքուի մէջ Ռուբէն Վարդանեանի բանտարկուած մնալու պայմաններուն տակ ինք ոտք պիտի չդնէ Ազրպէյճան :

Այսպիսի արարք մը երկար բացատրութիւններու կարիք չունի:

Մարդը հայ չէ: Մեր կուսակցական վէճերուն մասնակից չէ: Մեր ներքին հաշիւներուն, աթոռներուն եւ փոխադարձ մեղադրանքներուն հետ կապ չունի: Սակայն ան ունի



բարոյական սահման մը եւ այդ սահմանը չի վաճառեր: Ան իր հեղինակութիւնը չէ գործածած միայն զիրքեր գրելու, բեմերէ խօսելու կամ մեծ պատուագիներ ստանալու համար: Յոյց տուած է, որ գաղափարը, որուն մասին կը խօսի, կրնայ նաեւ անձնական ընտրութեան վերածել:

Ահա՛ թէ ինչ է սկզբունքը:

Սկզբունքը ուրիշին հայրենիքին կամ դատին մասին գեղեցիկ խօսք արտասանելը չէ: Սկզբունքը այն է, որ օտար երկրի մը հրաւերը մերժես, երբ ընդունիլը պիտի հակասէ քու բարոյական համոզումներուդ:

Թալէլայի կեցուածքը այս իմաստով միայն զօրակցութեան արտայայտութիւն մը չէ: Ան հայելին է, որուն դիմաց մեր իրականութեան բազմաթիւ դէմքեր պէտք է ամչնան:

Պէտք է ամչնան անոնք, որոնք հայկական բեմերու վրայ բարձրաձայն կը խօսին ազգային արժանապատուութենէ, բայց իրենց անձնական շահերուն հասնելու համար պատրաստ են լռելու: Անոնք, որոնք հեռուէն խիզախ են, իսկ պատասխանատու դիրքերու մօտենալուն պէս կը դառնան «հաւասարակշռուած»: Անոնք, որոնք ամէն իշխանութեան հետ լեզու կը գտնեն, ամէն հոսանքի հետ լուսանկար ունին եւ ամէն հակասութեան մէջ իրենց համար ապահով անկիւն մը կը պահեն:

Կարելի չէ միաժամանակ ճշմարտութեան եւ անոր ուրացման կողքին կանգնիլ:

Կարելի չէ բոլորին հաճելի ըլլալ՝ առանց սեփական խղճին անհաճոյ դառնալու:

Դիրք ունենալը չի նշանակեր ատելութիւն տարածել: Սկզբունքային ըլլալը չի պահանջեր կոպտութիւն, անձնական վիրաւորանք կամ անհանդուրժողութիւն: Մարդ կրնայ յարգանքով հակադրուիլ, ազնուութեամբ մերժել եւ առանց թշնամանքի պայքարիլ: Սակայն խաղաղասիրտութիւնը պէտք չէ շփոթել բարոյական անտարբերութեան հետ: Հանդուրժողութիւնը չի նշանակեր, որ բոլոր արարքները հաւասար են, իսկ երկխօսութիւնը չի պարտադրեր հրաժարիլ սեփական դատողութենէն:

Ուստի այսօրուան օրացուցային խօսքը եւ պիտի վերաձեւակերպէի.

Ո՛չ՝ «ոչ ոքի դէմ, ամէնուն հետ»:

Այլ՝ ոչ մէկուն հանդէպ անձնական ատելութեամբ, սակայն միշտ ճշմարտութեան, արդարութեան եւ արժանապատուութեան հետ:

Որովհետեւ մարդը իր կեանքի ընթացքին կը ճանչցուի ոչ միայն այն բարեկամներով, զորս կրցած է շահիլ, այլ նաեւ այն սահմաններով, զորս մերժած է անցնիլ: Երբեմն արժանապատիւ «ոչ» մը աւելի մեծ բարոյական արժէք ունի, քան հարիւրաւոր քաղաքավար «այո»-ներ:

Եւ երբ օտար մը իր գործով մեզի կը յիշեցնէ այս ճշմարտութիւնը, միայն զինք գնահատելը չէ մեր պարտականութիւնը :

Մեր պարտականությունն է մենք մեզի հարց տալ.— իսկ մե՞նք, ի՞նչ բանի պիտի մերժեինք մասնակցիլ՝ մեր համոզումներուն հաւատարիմ մնալու համար:

ՄԵՐ ԳԻՏՑԱԾ «ԼԻՏԸՐ»-Ը



 ԳԷՈՐԳ ՊԵՏԻԿԵԱՆ

8/8/2026



Ուսումնական վերամուտի առաջին շաբաթավերջն էր, երբ տասը տարեկան թոռնուհին՝ Վանան, հորը հետ մեր տուն մտավ, վազելով եւ մեծ ուրախութեամբ: Ու երբ տակաւին պաշիկներ եւ կարօտագին գրկընդիսառնումներ չէինք փոխանակած, գիրկս նետուեցաւ ու հեւալով ըսաւ.-

-Պապի՛կ, հայերէնով «լիտըր» ինչպե՞ս կ'ըսես ...

Ահա քեզի տագնապ-մտահոգություն մը, հայ մանուկի մը բերնէն անմեղօրէն դուրս նետուած: Սովորական իր բարեւէն առաջ, հակառակ անոր որ առաւօտէն սկսեալ, ինքնածին զգայնութեամբ, եւ անձկութեամբ իր, մեր մօտ հանդիպելուն կը սպասէի, որուն շնորհիւ հին օրերուս գեղեցիկ թարմացումը պիտի կարենայի վերապրիլ, զիս անժամանակ շուարումի մը մէջ նետած էր: Անհամբեր կ'ուզէի զինք տեսնել, եւ հարցնել, թէ իր դպրոց յաճախելուն իբրեւ արդիւնք, արդեօք «ակոնները ոսկի եղած էին», թէ ոչ: Եւ ահա իր այս հարցումը, որ զիս զարմացուցած էր: Անմիջապէս նայեցայ դէմքին: Աչքերուն շարժումները քննեցի: Դէմքին վրայ նոր գծած իր ժպիտը փորձեցի «լուծել»: Լաւապէս գիտէի, որ երեւոյթը գեղեցիկ էր: Որովհետեւ, Վանան հետս միայն հայերէն խօսեցաւ, համարձակ, նոյնքան ալ ազատ: Կ'երեւի այդ բառը չէր յիշած, կամ իրապէս՝ մինչեւ հիմա մեզմէ չէր լսած «լիտըր»-ին հայերէնը:

-Պապիկ...-դարձեալ շարունակեց հեւալով,- «թիշըր»-ս...«սօրի» պապիկ...օրիորդս, ինձի ըսաւ որ ես անգլերէն դասին ընկերներուս «լիտըր»-ը պիտի ըլլամ...որովիետեւ...«եւ նօ...»։
Ես անգլերէն շատ գիրքեր կը կարդամ կոր..., անգլերէնով ալ լաւ կը գրեմ կոր, լաւ ալ կը խօսիմ...

Այսչափ: Ինձի համար թե՛ հասկնալի եւ թե՛ ալ հպարտալի երեւոյթ էր, որ իր այս տարիքին, դարձեալ իր մանուկ միտքը կրցած էր հայերէնով արտայայտել, եւ իր անսահման ուրախութեան պատճառն ալ, հասկնալի՝ պարզել:

Վանան, հաւանաբար, մինչեւ տուն վերադարձը երկար մտածած ըլլալու էր այս մասին ու առանց նախաբան մը ընելու՝ մտաւ հոգութիւնը շարտած երեսիս: Նայեցալ դէմքին: Տակաւին



հարցումը անկէ կախուած կը մնար ու ինձմէ պատասխանի մը կը սպասէր: Պատասխան մը, որ գոհացում պիտի տար իր այս «մեծ» մտմտութիւն:

Կը զգայի, որ իր փոքրիկ ուղեղը հիմա անտէր հայելի մըն էր, ուրկէ անմեղ պատկերներ կ'անձրեւէին իր հոգիին մէջ: Ճերմակ ու բաց թուղթի մը նման նաեւ կը տեսնէի անոր հոգին: Բայց, ի՞նչ եւ ինչպէ՛ս պէտք էր որ պատասխանէի, որպէսզի որոշ գոհացում մը կարենայի տալ իր մտահոգութեան: Իրապէս որ շուարած էի:

Ու ինծի համար նորութիւն մը չէր, որ անգլերէնը, նոյնիսկ իր այս տարիքին, արդէն տիրապետած ու կլանած էր իր մտապաշարն ու խօսակցական լեզուն:

Կարծես, հայերէնը, պապիկին լեզուն էր ու միայն պապիկին ու նանիին հետ խօսելու համար ստեղծուած էր: Ի՛նչ կրնայի ընել...: Նորութիւն մը չէր: Ամերիկայի տարածքին նման ձեռով արտայայտող հազարաւոր իր տարեկիցներու մէջ, ի՛նք, ո՛չ առաջինն էր, եւ ոչ ալ՝ վերջինը:

Ուրեմն, -կը մտածէի, - շատ հաւանաբար, իր դասատու ուսուցչուհին իր դասարանի աշակերտները որոշ խմբակներու բաժնած ըլլալու էր, եւ ահա թոռնիկիս ալ, այդ խմբակներէն մէկուն պատասխանատու նշանակած:

Ի՛նչ ցնծութիւն, եւ ուրախութեամբ խառն հպարտութիւն՝ թէ՛ իրեն, եւ թէ՛ ինծի համար:

Մթափեցայ: Կրկին նայեցայ դէմքին: Մեր աչքերը այս անգամ տարբեր կերպով իրար հանդիպեցան: Իրը՝ անհամբերութեամբ լեցուն էր, իսկ իմս՝ պապիկներու յատուկ ուրախութեամբ: Ու հաւատացէ՛ք, մանաւանդ այս օրերուն պապիկի մը համար որքա՛ն հաճելի է իր թոռնիկին հետ հայերէնով զրուցելը:

Ապա, սկսայ հանդարտ բացատրել.

-Հայերէնով... ճանիկս...քու այդ «լիտըր» բառի՞դ «դեկավար» կ'ըսենք, «առաջնորդ» ալ կ'ըսենք, նաեւ՝ «խմբապետ»..., ու նաեւ՝ «մեծ»...

Ու այսպէս «նախագահ...հերոս...» ու բաւական այլ հոմանիշներ ալ շարեցի, բացատրեցի իր իսկ հասկցած լեզուով, պարզ եւ խօսակցական ոճով:

Հաւանաբար թերեւս ալ իր այս հեւքին մէջ, վայրկեանին շատ բան չհասկցաւ: Բայց...

Ապա, ժամանակ մը ետք, այս կարճ եւ հաճելի ու մանաւանդ ինծի համար մեծ գոհունակութիւն պատճառող մեր խօսակցութիւնը յանկարծ ընդմիջեցաւ, երբ կինս զինք իր մօտ կանչելով, իր նախասիրած կերակուրը ուտելու հրաւիրեց:

Իմ կարգիս, ուզեցի առանձնանալ: Ու բաւական ծանր խոհերովս սենեակս մտայ:



Տարիներ անցած ու սահած են այս գեղեցիկ «միջադէպէն»: Ու ամէն անգամ երբ յիշեմ, ինքնաբերաբար ինքզինքս, ինքնախօսութեան մը երկար մթնոլորտի մէջ կը գտնեմ: Միտքս պարզեմ: Նախ հարց տամ...արդեօք ի՞նչ ըսել դեկավար եւ կամ ո՞վ է այս դեկավարը, կամ առաջնորդը, կամ գաղութի մը «մեծ»-ը...: Այլ խօսքով. ո՞վ է «լիտըր»-...

Համեստօրէն ըսեմ, որ ինծի համար դեկավարը այն մարդն է, կամ՝ անհատը, որ իր աշխատանքը չի սահմանափակեր այնքան վրայ նստած սոսկ հրահանգներ արձակելով, այլ՝ իր կեանքի օրինակով եւ գործով, իր ծրագիրներուն, իր քայլերուն հետեւող իր ժողովուրդը, իր համակիրները, իր «խումբը», իր պատկանած միութիւնն ու կազմակերպութիւնը կ'առաջնորդէ միասնական: Իբրեւ հեղինակութիւն ունեցող անհատ ան նաեւ ունի յատուկ առաքելութիւն եւ գիտակցութիւն՝ իր պաշտօնին:

Դարաւոր մեր պատմութեան ընթացքին, հայրենիքէն ներս կամ մեր ապրած գաղութներուն մէջ, ազգային եւ պատմական անձնաւորութիւններու, դեկավարներու եւ հերոսներու անուններն ու իրենց թուարկումները, մեր ժողովուրդի կեանքէն ներս մտած են եւ հո՛ւն, իրենց մտքով եւ հոգիով, պատմական որոշ ու հարազատ կնիք ձգած: Եւ պէտք է աւելցնել թէ նոյն այդ «լիտըր»-ը, կամ «լիտըր»-ները, իրենց գործով եւ անուններով ժամանակին հետ կ'ապրին, իբրեւ մէկական ընտրեալները ազգին: Անոնք չեն տժգունիր, չեն մաշիր, չեն մոռցուիր ընդհակառակն, աւելի քան երբեք պատգամի մը ուժը եւ թարմութիւնը կը ստանան՝ իբրեւ ազգային պարծանք:

Ու պատիւ բոլոր անոնց, որոնք ապրեցան ու կ'ապրին ճիշդ կերպով, իրենց ազգային դեկավարի կոչումով, համոզումով եւ գիտակցութեամբ կատարելով իրենց վստահուած պարտականութիւնը:

Անոնք բոլորն ալ յիշատակելի են, եւ մեծ գնահատանքի արժանի, որովհետեւ իրենց այդ դեկավարած տարիներուն ընթացքին շահած են մտերմութիւնն ու յարգանքը իրենց հետեւողներուն, իրենց համակիրներուն, իրենց ժողովուրդին՝ եւ դարձած մէկական արժանաւորներ:

Որովհետեւ, լաւապէս անոնք գիտցած են, թէ հայապահպանութիւնը ժողովներու սենեակներուն մէջ չէ որ կ'որոշուի, այլ զայն միայն կարելի է պաշտպանել յարատեւ զոհողութիւններով ու զոհաբերութիւններով: Ու այս օրինակելիներն են, որոնք այս պարտականութիւնը վերցուցած են իրենց գործով, գաղափարներով, բազուկով, քրտինքով, աշխատանքով, եւ նոյնիսկ՝ իրենց կեանքի բարոյական օրինակով եւ զայն արժեւորած: Տակաւին շատեր ալ իրենց գրիչով, նոյնիսկ արիւնով եւ կեանքի նուիրումով, արիութեամբ, նուազագոյն կամ գերագոյն զոհողութեամբ, նիւթական բարերարութիւններով իրենց նպաստը բերած իրենց հայրենիքին, ապրած գաղութին եւ անշուշտ՝ ազգին:

Բայց ...չմոռնանք...մենք՝ հայերս, պատմականօրէն կամ կը հերոսացնենք մեր առաջնորդները, մեր դեկավարները, կամ հերոսները, եւ կամ՝ կը դատապարտենք: Կարծես միայն անցեալով կ'ապրինք, եւ կը հպարտանանք: Ու այսպէս եթէ շարունակենք ապրիլ, մեր ձեռքերով փակած պիտի ըլլանք ապագայի մեր դռները:


Մենք ազգովին ինքնաճանաչումի կը կարօտինք, միշտ շեշտած ենք: Եւ այս մէկը կարելի է իրականացնել, ազգային ոգիով լի եւ արդարամիտ դեկավարներու շնորհիւ, որոնց, այս օրերուն անքա՛ն կարիքն ու կարօտը ունինք ամէն տեղ:

ՍԱՀԱԿԵԱՆԻ՞ ՓԱԿՈՒՄԸ, ԹԷ՞ ՓԱԿՈՒՈՂ ԱՊԱԳԱՆ



✉ Վարուժ Թէնպէլեան

2/8/2026



Տխուր լուր մը այս օրերուն շրջան կ'ընէ լիբանանահայ համայնքին մէջ: Կ'իմանանք, որ հարիւր հինգ տարուան պատմութիւն ունեցող Սահակեան վարժարանը կը փակէ իր դռները: Տխուր լուր մը, որ ամբողջ համայնքը մտածելու կը հրաւիրէ:

1921-ին, երբ ցեղասպանութենէն ճողոպրած ու Լիբանանի ծովեզերքը ապաստանած հայը ոչինչ ունէր, վրանի

մը տակ կը հիմներ Սահակեան վարժարանը: Անօթի էր, որք, բայց ունէր տեսլական. աղիւս չունէր, բայց ունէր կամք: Վրանը դարձաւ թիթեղ, թիթեղը՝ քարաշէն, իսկ շէնքը՝ հարիւրամեայ «Գոլէճ»:

2026-ին, 105 տարի ետք, այդ քարաշէն պատերն ու արդիական սրահները կանգուն են, բայց դպրոցը կը փակուի:

105 տարուան կեանք մը կը դադրի գոյութիւն ունենալէ:

Բայց դպրոցը միայն պատ չէ. անիկա շէնք ալ չէ: Դպրոցը նաեւ անցեալն ու ապագան, հին ու նոր սերունդները կապող կարեւոր կամուրջ մը կը հանդիսանայ: Երբ դպրոց մը կը փակուի, իրականութեան մէջ դուռ մը կը փակուի ապագային առջեւ:

Հետաքրքրական է, որ Սահակեանի պատմութիւնը կը սկսի ոչ թէ բարեկեցութեան, այլ դժբախտութեան մէջ, 1921-ին՝ Նոր Հաճընի վրանաքաղաքին մէջ, գաղթականներու վրանին տակ: Մարդիկ տուն չունէին, բայց որոշեցին դպրոց ունենալ: Քարաշէն պատեր չունէին, բայց համոզում ունէին, որ իրենց զաւակներուն ապագան կարելի չէր յետաձգել:



Այսօր մենք հակառակ պատկերը ունինք: Շէնքեր տակաւին կան, բայց այն համոզումը, որ դպրոցը համայնքի ապագան կը կերտէ, կարծես սկսած է թուլնալ: Ահաւասիկ իսկական տարբերութիւնը:

Համայնքներու պատմութիւնը հետաքրքրական օրինաչափութիւն մը ունի: Անոնք հագուադէպօրէն կը մահանան մէկ մեծ աղետով, այլ՝ լուռ կերպով: Սկիզբը դպրոց մը կը փակուի: Ապա մշակութային միութիւն մը կը դադրի գործելէ: Յետոյ երգչախումբ մը անդամներ չի գտներ: Օր մը ալ մարդիկ կը զարմանան.

«Ինչպէ՞ս հասանք այս վիճակին»:

Անակնկալ մը չէ այս փլուզումը. անիկա տարիներ առաջ սկսած հոլովոյթի մը հետեւանքն է: Այսպիսի պահերու, ամէնէն դիւրին բանն է արցունք թափելը, չքմեղանքի խօսքեր գտնելը: Ամէնէն դժուարը հարցնելն է.

Ինչո՞ւ:

Արդեօք միայն արտագա՞ղթը, միայն ծնունդներու նուազո՞ւմը, թէ՞ մենք ալ կամաց-կամաց փոխեցինք համայնքի գաղափարը: Թերեւս դպրոցը այլեւս առաջնահերթութիւն չէ: Թերեւս հայերէնը դարձած է շաբաթավերջի զբաղում մը: Թերեւս կրթութիւնը այլեւս ազգային ծրագիր մը չէ, այլ՝ անհատական ընտրութիւն: Եւ եթէ այդպէս է, ապա խնդիրը միայն Սահակեանին չէ. խնդիրը մեզմէ իւրաքանչիւրինն է:

Սահակեանի փակումը, հետեւաբար, պատմութեան էջի մը փակումը չէ միայն: Անիկա հայելի մըն է. հայելի մը՝ որուն մէջ ամբողջ լիբանանահայ համայնքը կը նայի ինքն իրեն: Եւ թերեւս հարցումը այն չէ, թէ քանի՞ դպրոց փակուեցաւ, այլ՝ քանի՞ դպրոց տակաւին կը կարծենք, թէ մեզի անհրաժեշտ է:

Որովհետեւ դպրոցները միայն երեխաներ չեն կրթեր. անոնք համայնքներու յարատեւութիւնը կ'երաշխաւորեն (ինչպէս նաեւ՝ հայկական բոլոր կառոյցներունն ու կուսակցութիւններունը): Իսկ երբ համայնք մը կը դադրի իր դպրոցները պահելէ, վտանգը միայն այն չէ, որ դասարան մը կը պարպուի. վտանգը այն է, որ ապագան ալ կամաց-կամաց կը սկսի դատարկուիլ:

Սահակեան վարժարանին փակումը պարզապէս «հերթական դպրոցի մը» կորուստը չէ, այլ ահագանգ մը՝ մեր գաղութային ամբողջ համակարգին սնանկացման մասին: Անիկա ապացոյցն է այն դառն ճշմարտութեան, որ հաստատութիւնները չեն մեռնիր նիւթականի կամ քարերու պակասէն. անոնք կը մարին այն օրը, երբ կը դադրին իմաստ հաղորդելէ:

«Դէպի ո՞ւր կ'երթայ մեր գաղութը» հարցումը այլեւս հռետորական չէ: Եթէ շարունակենք ապրիլ անցեալի փառքերով, ամէն փակուող դպրոցի հետ պիտի կորսնցնենք մեր ինքնութեան եւ հաւաքական յիշողութեան եւս մէկ բեկորը:

Վրանին տակ ապրող մեր պապերը ապագայ ունէին, որովհետեւ ունէին հաւատք, ծրագիր եւ, թէեւ անորոշ, բայց ապագայի տեսլական: Այսօր, քարաշէն շէնքերու մէջ, մենք կորսնցուցած ենք այդ հաւատքը, ծրագրելու կամքն ու ապագայի տեսլականը:

Եւ ահա թէ ինչու դռները մէկիկ-մէկիկ կը փակուին մեր ետեւէն:

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



ԳՐԻՉ ԻՄ ԽՈՆԱՐՀ

Ինչպէս չսիրեմ, գրի՛չ իմ խոնարհ,
Սրտիս վերքերուն դուն դեղ, բալասան,
Անձկութեան պահիս՝ ամոքիչ դարման,
Առանձնութեանս՝ ընկեր սիրավատ,
Մենակութեանս՝ սէր անդաւաճան,
Տառապանքիս մէջ՝ ձեռք սփոփարար,
Միրոյ խորշակին՝ զեփիւտ զովարար,
Սառնամանիքին՝ խարոյկ հրավատ,
Վրդովմունքիս մէջ՝ մխիթարիչ հրաշք,
Յուսախաբութեան՝ ոգեշնչման կայծ,
Անապատին մէջ՝ ծաղիկ գունավատ,
Թելաբեկման դէմ՝ թելեր ու խոյանք,
Խիղճիս խորանին՝ դուն խոստովանանք,
Ուրացութեան դէմ՝ նոր յոյս ու հաւատք:
Դուն երկնէն երկիր կայծ ես ներշնչման,
Միրոյ, հաւատքի լոյս աղօթարան,
Ուր կը պարպուիմ, դարձեալ կը լենամ
Կեանքին, աշխարհին սիրովը անափ,
Հոգիս կը կապէ կամուրջ ու ծիածան



Հոգիներուն հետ ու Բարձրեալին ալ:
22/8/2026

.....

ՀՈԳԻԻՍ ԼՈՒՌ ՄԱՏԵԱՆԻՆ ՄԷՋ

Հոգիիս լուռ մատեանին մէջ,
Համակ կեանք մը կը բաբախէ.-
Մի՛ ըստ մը բերկրանք, շո՛ղ մը ժպիտ,
Արցո՛ւնք մ'անձայն այնտեղ ցաթեն...

Օրագիրիս էջերուն մէջ,
Մէր ու հաւատք վառ կ'առկայծե՛ն.-
Շո՛ւրթ մը աղօթք, յոյսե՛ր, լոյսե՛ր
Ճառագեն բո՛րբ իր տողերէն...

Բառերուս մէջ ճաճա՛նչ մը լոյս
Կը թրթռայ արեւալոյս,
Հոգիս տենչաց զայն հանապազ,
Որ զայն սփռէր բազմաստեղեան,
Դառնար կեռո՛ւն մը լուսավառ...

Լույսն այդ սակայն շողաց միայն
Ճաճանչագե՛ղ, արեւափա՛յլ,
Երբ այրումը սրտիս հրակէզ
Բոցավառ ճրա՛գ հուրհրատեց...

Լույսն այդ պիտի յար ճառագէ
Ճենճերումովն սրտիս բոցէ:
Ընթերցողի՛ս զայն կ'ընծայեմ...
2/4/2019

.....

ՎԵՀ ԲԱՐՁՈՒՆՔԷՆ ՏԱՐԻՆԵՐՈՒՍ

Տարիներուս վեհ բարձունքէն,
Հիմա աշխարհն այլ կ'երեւի,
Զերթ հորիզոնն որ շառագունի
Հրաժեշտ առնող բորբ արեւէն...

Այգաբացին՝ ճամբայ ելայ,
Արեւներուն ես սիրահար,
Ներսս՝ արեւ, դուրսս՝ արեւ,
Հրկիզուեցայ իր տաք շունչէն...

Շուտով արդէն կ'եսօր էր, տապ,
Բայց դեռ արեւ էր հուրհրան,



Եւ իրիկունն ու գիշերը՝
Հեռու էին, զերթ աստղերը...

Տակաւ խոհը իջաւ դանդաղ՝
Վերջալոյսին հետ մարմրուն,
Ծառիս շուքը երկարեցաւ,
Յուշեց հրաժեշտը տրտմանուշ...

Քաղցր թախիծ մը պարուրեց
Հոգիս, սիրտս, մշուշի պէս,
Որուն տակ նոյն խենթ սիրտս էր,
Որ կը տրոփէր պարմանի պէս...

Հիմա շքեղ մայրամուտ է՝
Հրդեհներով ծիրանավառ,
Որ դեռ անուրջ ունի լուսէ
Հորիզոնին ոսկեշառայլ...

Օ, չմեռնէ՛ր իմ երագս,
Նոյնիսկ եթէ գիշեր իջնէ,
Մուլքը պատէ ողջ աշխարհը,
Երագը միշտ կ'ապրի անմեռ...
24/2/2021

.....

ԿԵԱՆՔԻՍ ՃԱՆԱՊԱՐՀԸ

Մերթ հոսեր եմ գետի նման, մերթ սառեր եմ,
Մերթ ծաղկեր եմ գարնան նման, մերթ չորցեր եմ,
Մերթ բարձրացեր զառիվերէն, մերթ ինկեր եմ,
Մերթ ոռնացեր եմ տանջակէզ, մերթ լռեր եմ...

Մերթ կուրօրէն հաւատացեր ու խաբուեր եմ,
Վրդովուեր եմ, յետոյ ներեր, գթացեր եմ,
Յետոյ նորէն պատրանքներով օրօրուեր եմ,
Մնացեր եմ յամառօրէն միշտ լաւատես...

Ցաւս հեռու պահեր եմ ես այլ աչքերէն
Եւ կուլ տուեր արցունքներս սրտիս մէջ,
Խինդիս բաժակն ուրիշներուն միշտ երկարեր,
Որ զայն ըմպեն անուշահամ գինի որպէս...

Աչքերուս դէմ զառիվերն է ցցուեր յաւերժ,
Խոստումովը ճշմարտութեան լոյս-ակունքին,
Մնացեր եմ ճշմարտախո՛յզ ճամբորդը սէզ
Ու բարձրացեր զառիվերէն տառապագի՛ն...



Միրաժի պէս թուեր է ան անհաս երա՛գ,
Որ շողշողայ որպէս տեսի՛լք մը դիթական,
Ու ճախրեր եմ անոր անհուն եթերին մէջ,
Որսալու գէթ շո՛ղ մը ճաճանչ արեւահեւ...

Այդ ճաճանչով շաղախներ եմ կեանքս համակ
Որպէս սիրոյ ու հաւատքի ներշնչարան,
Բիւր դաւերուն, խարդաւանքին մութին դիմաց
Ան դարձեր է կեռոն լոյսի միշտ աննուա՛ծ:

Թէ խարխափեր, չեմ մոլորեր, չեմ վհատեր,
Թէ հիասթափուեր, երբեք ես չեմ յուսալքուեր,
Կամքս, ոգիս պինդ եմ պահեր, հայեացքս դէպ՝
Նոր ծագելիք արշալոյսի հորիզոններ...

3/9/2022

.....

ՀԱՅ ՀՈԳԻՒՆ

Մեր պատմութեան արշալոյսէն ցոլացեր ես վսեմօրէ՛ն
Ու գծեր ես մեր լոյս ճամբան հազար ու մէկ խութերէն վեր,
Ա՛յն որ ձգտի միշտ դէպի վեր դէպ՝ Մասեաց սարը արփաւէ՛տ,
Հայու հոգի՛, հայու ոգի՛, լուսաճառագ ու սիրահե՛ւ...

Քանի անգամ է պատահեր որ մարդիկ քեզ մեռած կարծեր,
Մահերգդ են հիւսեր անա՛հ, անխղճօրէ՛ն, անգթօրէ՛ն,
Բայց դուն յանկարծ վեր խոյացեր ես արծիւին պէս անվեհեր,
Աչքդ յառած բարձունքներուն լուսագագա՛թ ու երկնամե՛րձ...

Քանի անգամ է պատահեր որ ինկեր ես արիւնլուայ
Մարտի դաշտին, կենաց-մահու ահեղ ու բիրտ պայքարին մէջ,
Բայց յառներ ես հըրաշափա՛ռ փիւնիկի պէս մոխիրներէդ,
Ճառագայթեր արեւի պէս ճաճանչափա՛յլ ու վեհապա՛նծ...

Դեռ պիտ' վառիս ու հուրհրաս արեգական լոյսին նման,
Անոր նման պիտ' չսպառիս, բաշխես լոյսդ արարչական,
Բաշխուելով պիտի շատնաս մշտաճաճա՛նչ ու սիրավա՛ռ
Եւ ազգիդ հետ պիտի ճախրես դէպ՝ անհունը արեւափա՛ռ...

23/8/2019

ՄԵԻԱԶԳԵՍ ԱՅՐԻՆ ԵՒ ԶԱՆԳԱԿԸ



Կարինէն՝ երգի նոր ուսուցչուհին, մեր միւս ուսուցչուհիներէն տարբերուող երեւոյթ մըն էր: Ան յայտնուեցաւ իր սեփ- սեւ հագուստով եւ նոյնքան սեւ մազերով: Դէմքը մոմիայի մը դէմքէն տարբեր չէր: Անոր մաշկը՝ դեփ- դեղին, չորցած տերեւի նման անփայլ էր: Մեւ հագուստը, տոգոյն ու անշարժ դէմքը իր ունեցած- չունեցած «գեղեցկութիւնն» էր: Ամբողջ կրթական տարեշրջանի ընթացքին ան չժպտաց, նոյնիսկ՝ չփորձեց: Անհաղորդ էակ մըն էր եւ ռեւէ աշակերտի հանդէպ քնքշանք, կամ գորով չցուցաբերեց: Նախակրթարանի աշակերտներ էինք եւ ճիշդ չհասկցանք, թէ ի՞նչ կը նշանակէ՝ «Տիկին Կարինէին ամուսինը մեռած է»:

Կարինէն այդ օրուան հերթապահն էր:

Հետեւաբար դասապահերու եւ զբօսանքին ժամերը բնորոշող զանգակը իր մօտն էր: Յանկարծ անգուսպ զայրոյթով, ան զանգակը վերցուց եւ ուղղուեցաւ դէպի «լաւ չերգող» տղուն: Զանգակին լայն բաժինը իր ամբողջ տրամագիծով ուժգին հանգչեցուց աշակերտին գլխուխին վրայ : Խեղճ տղան, անակնկալ հարուածէն ու անտանելի ցաւէն ցնցուած՝ բարձրաձայն լացաւ: Խեղճը ի՞նչ ըներ, եթէ ճիշդ եւ գեղեցիկ երգելու տաղանդէն զուրկ էր:

«Երբ բաց եղան գարնան կանաչ դռները, Եարս էլ գնաց եայլաները Պինկէտօլի...»:

Աշակերտներս այս դէպքին ականատես ըլլալէ ետք, մեծ չկամութեամբ, նոյնիսկ զգուանքով երգեցինք Պինկէտօլի երգը: Որո՞ւ պէտք էր երգը, երգի պահը եւ մանաւանդ այդպիսի բռնկուն զայրոյթով երգի ուսուցչուհի մը:

«Քոյրիկ ասա՛, ո՞րն է ճամբան Պինկէտօլի...»:

Երգի պահը մեր ձեռքի թուղթերուն նման չոր ու անհոգի էր, բառերը կը կարդայինք եւ պարզապէս մեր գլուխէն զանգակի հարուած մը չստանալու համար, անհամ ու անեռանդ՝ «եաւան- եաւան» կ'երգէինք: Յաջորդող երգի պահերուն՝ երաժշտական տաղանդ ունեցողն ալ դարձաւ «անտաղանդ»:

Նախակրթարանի երկրորդ, կամ երրորդ դասարանի աշակերտուհի էի, երբ ծանօթացայ Կարինէ երեւոյթին: Առնուազն կէս դար ետք ես տակաւին սարսափով կը յիշեմ իր երգի պահերը եւ մահասարսուտ զանգակը:

Միշտ հարց տուած եմ, թէ Կարինէն ինչո՞ւ այդքան դառնացած եւ չարացած էր կեանքին ու մարդոց հանդէպ: Թէեւ ուրիշ սեւագգեստ այրիներ ալ կային դպրոցին մէջ, որոնց



պատասխանատու դերեր յանձնուած էին եւ առաւել բրտութեամբ, վայրագութեամբ կը կատարէին իրենց դերը ու ամենայն անխղճութեամբ կը ցաւցնէին աշակերտը (physical abuse):

Միրելի բարեկամուհի մը ունիմ, որ մինչեւ օրս լալով կը պատմէ իր ապրած չարչարանքները: Ուսուցչուհի մը սրածայր մատիտի հարուածներով ծակծկած է իր թելը եւ մինչեւ օրս անոր մաշկին տակ կը հանգչի սեւ գրաֆիտի կտոր մը:

-Օհ, Միրան, ինչո՞ւ մինչեւ օրս հանել չես տուած այդ կտորը: Վստահ եմ, որ ամէն անգամ, երբ նայիս սպիիդ՝ կը վերապրիս այդ օրերուն տեսած բրտութիւնդ:

-Միւլվա՛, չէի գիտեր, որ աչքերս տկար էին: Դժուարութեամբ կը կարդայի, որպէս դաս նշանակուած տողերը, իսկ գրատախտակէն տող մը ընդօրինակելը լուրջ մարտահրաւեր էր ինծի համար:

-Վա՛յ, կը կմկմաս. վա՛յ, սահուն չես կարդար. վա՛յ, պատին գրուածը ճիշդ չես ընդօրինակած: Այս բոլորին կը յաջորդէին տեսակաւոր պատիժները՝ գաւազանը, սրածայր մատիտը, նուաստացնող խօսքերը: Իսկ զբօսանքէն զրկուելու պատճառով, թե՛ անօթի մնացած եմ, թե՛ բաղնիք չեմ կրցած գործածել եւ դասապահի ժամուն ակամայ տակս միզած եմ, ապա միզելուս համար յանդիմանուած ու թաց վիճակով քանի մը թաղ անդին գտնուող մեր տունը ուղարկուած եմ:

-Միրա՛ն, ջանս, կ'ուզեմ մանրամասն գրել ու պատմել քու ապրումներդ: Նկարագրել լաց-կոծով եւ մօրդ յամառ պնդումով դպրոց յաճախելդ, բայց կը խուսափիմ հին վերքերդ փորփրելէ: Սա՛, թելիդ մխրճուած գրաֆիտի կտորը՝ ինքնին սարսռացնող խթան մըն է ու սեւ վկայարան մը՝ տգէտ ու անխիղճ անցեալի մը: (Տեսէք՝ վարը տեղադրուած Միրանին ձեռքին նկարը)

«Ես պանդուխտ եմ էս տեղերին ծանօթ չեմ Քուրի՛կ, ասա՛, ո՞րն է ճամբան պինկէօլի...»:

Անցեալ շաբաթ դասընկերուհիներով հաւաքուած էինք եւ շարք մը քաղցր ու դառն յիշողութիւններ բաժնեկցեցանք: Բարեկամուհիս յիշեց՝ Պինկէօլը եւ Կարինէն ու յուզումնախառն շեշտով պատմեց . «Ես մօտէն ճանչցած եմ Կարինէին, նախապէս ան իմ մօրեղբօրս հետ նշանուած էր, բայց չեմ գիտեր ինչ պատճառով խզուեցան: Կարինէն կարճ ժամանակ մը ետք ամուսնացաւ մեր ծանօթներէն մէկուն հետ: Ուրախ զոյգ էին եւ բախտաւորութեան գեղեցիկ դուստրով մը: Դժբախտաբար Կարինէին երիտասարդ ամուսինը յանկարծամահ եղաւ: Հազիւ քառասուն օրեր անցած էին ամուսինին մահէն, փոքրիկ դուստրը , կլլեց իր մեծ մօրը արեան ճնշման դեղերը եւ անմիջապէս մահացաւ:

-Օ՛ք, սիրտս ցաւեցաւ, իսկական ողբերգութիւն մը: Ես գիտէի, որ Կարինէն այրիացած էր, բայց դուստրին մահէն տեղեակ չէի: Որքա՛ն դժուար է ամուսին կորսնցնելէ ետք թաղել միակ հոգեհատորը՝ կեանքին վերջին լոյսն ու յոյսը: Մեղք է շա՛տ...: Վերջապէս հասկցայ, որ Կարինէն ինչո՞ւ ընտրած էր Պինկէօլի երգը: Հոն կար սիրելիի կորուստը, սիրտ մաշող ու



անհուն կարօտը, անօգուտ փնտռտուքը, եւ անձանօթ ճամբաները, որոնք կը բնորոշէին իր ապագային անորոշութիւնը:

«Ինձ ի՛նչ, աւա՛ղ պլպուլները Պինկէտլի»:

Վերադարձայ տուն եւ յիսուն տարի անընդհատ տուած հարցիս պատասխանը ստացայ, թէ ինչո՞ւ Կարինէն այդքան խստացած, դառնացած ու չարացած էր:

Վերապրեցայ մեր երգի պահերը, իր տժգոյն եւ անժպիտ դէմքը, անսանձ զայրոյթը, բայց ոչ մէկ «մեղմացուցիչ դէպք յանցանաց» գտայ իր կոպիտ վարմունքին ու յատկապէս զանգակի հարուածներուն...:

Մենք՝ աշակերտներս, բոնցքամարտի պարկեր (punch bags) չէինք, իսկ երգի պահերը, ընկճախտով տառապող, կամ բարկութեան պոռթկումներ ունեցող այրիին ապրուստ ապահովելու միջոց չէին: Մեր արդար իրաւունքն էր հաւասարակշռուած խառնուածքով ուսուցիչ ունենալը: Մանաւանդ Հայ երգի ուսուցչուհին, որ երգերուն միջոցով ճաշակ պիտի մշակէ, ազգային ոգի կերտէ, պատգամ փոխանցէ, քնարական ջիղ զարթնեցնէ եւ երգին մոգական ազդեցութեան տակ կենսախինդ մթնոլորտ ստեղծէ:

Հոս յանցաւորը այն պատասխանատուն էր՝ տնօրէն, հոգաբարձու, համայնքի, կամ կուսակցութեան մը միջնորդը, որ Կարինէին «հասցուցած» էր ուսուցչութեան:

Ուսուցիչը, որեւէ ժամանակին պատկանող՝ անցեալ, ներկայ, կամ ապագայ, պէտք է ըլլայ միտքով, հոգով ու զգացումներով ԱՌՈՂՋ անհատ մը: Մանկահասակ ու դեռատի սերունդները պէտք է սիրով փութան դէպի դպրոց եւ դասապահերը ըլլան հաճելի ու հետաքրքրական: Աշակերտին տկարութիւններն ու պարագաները իրատեսօրէն գնահատուին ու անհատական մօտեցումով բարեփոխուին, սրբագրուին կամ դարմանուին: Անոնք սէր ու գորով պէտք է ստանան իրենց ուսուցիչներէն եւ ոչ թէ ֆիզիքական ու զգացական վերքեր, որոնք երկա՛ր տարիներու ընթացքին պիտի շարունակեն միալ ու չյանգիլ:

«Պա՛ղ - պա՛ղ ջրեր, պապակ շուրթս չի բացուի...»:

ԼՌՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԱՄԲՈՂՋ ԱՇԽԱՐՀ ՄԸ

Լիզա Բանճարճեան Թելվիզեան



✉ **ՏԱՐԲԵՐԱԿ21**

8/9/2026



Նաւը կը ճեղքէր Միջերկրականի
հսկայ եւ ծաւալուն ալիքները, մինչ
արելը՝ ամառնային ուշ մայրամուտի
իր վերջին, նուաղուն շողերը կը
հաւաքէր ծովու անձայրածիր
մակերեսէն: Ալիքները կը փշրուէին
նաւուն կողերուն, կարծես փորձելով
ետ դարձնել գայն: Նաւուն վրայ
տիրող բարձրաձայն
խօսակցութիւնները, ծիծաղը եւ
երաժշտութեան զանազան

ելեւելները կը միաձուլուէին ծովուն յարատեւ շառաչիւնին՝ ստեղծելով կենդանի եւ շարժուն
մթնոլորտ մը:

Ամէն իրիկուն, ընթրիքի ժամուն, տարբեր ազգութիւններու պատկանող ուղեւորներ կը
հաւաքուէին սեղաններուն շուրջ: Անոնք հաճելի զրոյցներու մէջ կը սուգուէին՝ գաւաթ մը
գինիի կամ այլ խմիչքի ընկերակցութեամբ, եւ օրուան յոգնութիւնը մոռնալով, կը վայելէին
ծովային ճամբորդութեան այդ հաճելի ու անկրկնելի պահերը: Ես եւ ամուսինս ալ մաս կը
կազմէինք այդ ուղեւորներու խումբին: Տարբեր երկիրներէ ժամանած՝ բոլորս պատրաստ
էինք նոր վայրեր բացայայտելու եւ նոր ծանօթութիւններ հաստատելու :

Երկու-երեք օր ետք, ընթրիքի պահուն, ուշադրութիւնս գրաւեց եօթանասունամեայ,
սպիտակահեր մարդ մը, որ բոլորովին մինակ էր: Ամէն իրիկուն ան առանձին կը նստէր իր
սեղանին շուրջ՝ առջեւ կարմիր գինիի բաժակ մը, կարծես փորձելով մինակութեան մէջն
իսկ ժամերը հաճելի կերպով անցնել: Իսկ դիմացի պատէն կախուած պատկեր մը, որ
գոյներու եւ ձեւերու վերացական համադրութիւն մըն էր, իր ուշադրութեան կեդրոնը
դարձած էր: Ամէն իրիկուն, ան ումպ առ ումպ կ'ըմպէր իր գինին եւ երկարօրէն կը դիտէր
պատկերը, կարծես միշտ նորութիւն մը յայտնաբերելով այդ արուեստի գործին մէջ:
Հաւանաբար այդ ստեղծագործութիւնը հայելի մըն էր, որուն մէջէն ի յայտ կուգային իր
ներաշխարհը եւ կուտակուած զգացումները: Ամէն օր իր անձնատրութիւնը բնորոշող նոր
«շերտ» մը կը բացայայտէր , ինչպէս նկարը՝ ամէն անգամ նոր մանրամասնութիւն մը:

Կը մտածէի, արդեօք կեանքի պայմաններդ՝ն բերումով, եւ այլընտրանք չունենալով էր, որ
ան նախընտրած էր առանձին ճամբորդել, թ'է առանձին մնալը իր որոշումն էր՝ կեանքի
որոշ հանգրուանի մը ընթացքին: Եթէ առաջինն էր, այսինքն պարտադրուած առանձնութիւն
մը, անշուշտ ցաւալի պիտի ըլլար: Իսկ եթէ երկրորդն էր, թերեւս ինքզինք վերագտնելու
առիթ մը ըլլար:



Քանի մը օր ետք, մեր բոլորիս դէմքերը իրարու ծանօթ դարձած էին արդէն:
Եօթնասունամեայ մարդը մօտեցաւ եւ համակրելի ժպիտով մը բարեւեց մեզի: Ապա ըսաւ:

—Ես Ճեովանին եմ, իտալացի եմ: Դուք ո՞ր երկրէն եք:

—Մենք Լիբանանցի, բայց նաեւ հայ ենք:

—Օ՛հ, ես հայ բարեկամ մը ունեցած եմ...Շատ կը սիրեմ հայերը:

Այսպէս սկսաւ մեր զրոյցը, որ քիչ ետք դարձաւ աւելի մտերմիկ:

—Կ'երեւի առանձին եկած եք այս պտոյտին—ըսի:

Ճեովանին մեղմօրէն ժպտաց եւ սկսաւ պատմել եւ բացայայտել կեանքի հանդէպ իր հայեացքին մասին:

Իր կինը քանի մը տարի առաջ մահացած էր, իսկ երեք զաւակները, որոնք ընտանիքներ կազմած էին, յաճախ զբաղած էին իրենց աշխատանքներով ու ընտանեկան կեանքով: Ճեովանին լաւ գիտէր, թէ առանձին ճամբորդութիւնը յանդգնութիւն կը պահանջէր, սակայն, կեանքի այս հանգրուանին, ինքն իրեն հետ մինակ մնալու կարիքն ունէր: Հաւանաբար այս ճամբորդութիւնը առիթ մը էր վերարժեւորելու իր ձեռքբերումները եւ սեփական կեանքը, ազատութիւն եւ հոգեկան հանգստութիւն գտնելու: Թերեւս ինքնաճանաչման ուղի մը էր, երբ մարդ պահ մը կանգ կ'առնէ եւ կը նայի կեանքի իր անցած երկար ճանապարհին աւելի հանգիստ եւ խորութեամբ եւ այդ լուրջեան մէջն է, որ ան կը գտնէ իր իսկական ընկերակցութիւնը՝ ինքն իր հետ:

Ան շարունակեց:

—Առանձին ըլլալ չի նշանակեր ինքնամեկուսացում. երբ մարդ կեանքի ժխորին մէջ «կորսուած» եւ բազմազբաղ է, հաւանաբար առիթ չունենայ կեանքը լիապէս ըմբռնելու եւ արժեւորելու:—

Ան ըսաւ նաեւ, թէ մինակութիւնը միշտ մարդու մը կեանքին մաս կազմած է, սակայն պէտք է օգտագործել զայն՝ աճելու եւ զարգանալու: Մեր կեանքը կը կաշկանդուի ուրիշներուն կարծիքներով, սպասումներով եւ քննադատութիւններով: Պէտք է ձերբազատիլ անոնցմէ եւ ստեղծել այնպիսի ապրելակերպ մը, որ մեզի համար հաճելի , իմաստալից եւ հոգեկան խաղաղութիւն պարգեւող ըլլայ : Երբ առանձին ես եւ մարդիկ չկան շուրջդ, այդ մինակութիւն չէ, այլ մինակութիւնը այն է, երբ դուն քու իրական անձդ կը կորսնցնես:

Փոքր դադարէ մը ետք, Ճեովանին աւելցուց:

—Ես այսօր մինակ կը ճամբորդեմ եւ լաւ գիտեմ, թէ մարդիկ պիտի քննադատեն կամ գոնէ հարց պիտի տան իմ այս ընտրութեանս համար: Սակայն մեծագոյն յաղթանակը այն է, երբ

մարդ ականջ չի դնէր շրջապատի ըսի-ըսանքներուն եւ իր ճամբան կը շարունակէ, ըստ իր հաւատքին եւ համոզումներուն:—

Մտածեցի, թէ որքա՛ն իմաստութիւն կար ի՞նչ խօսքերուն մէջ: Ամէն մէկը խորհուրդ մը, փորձառութիւն մը կը պարփակէր: Մեզմէ ո՞վքեր իսկապէս այսպէս կը մտածեն... Ո՞վքեր կրնան լռութեան մէջ հանգիստ նստիլ, առանց ուրիշներու ներկայութեան կարիքը զգալու: Ո՞վքեր կը համարձակին պահ մը կանգ առնել, հեռանալ ուրիշներու կարծիքներէն եւ հարցնել իրենք իրենց՝ «Ո՞վ եմ ես եւ ի՞նչ կը փնտռեմ կեանքիս մէջ»:

Երբ շուրջդ լռութիւն կը տիրէ, այդ լռութեան մէջն է, որ երբեմն կը լսես ամենահզօր ձայնը՝ քու ներքին ձայնդ:

Լիզա Բանճարճեան Թելվիզեան

ՄԱՆԿՈՒԹԵՆԷՍ ՄԻՆՉԵՒ ՀԻՒՄՈՒՐ ԱՄԱՌՈՐ

ԱՐԱՄ ԱՃԷՄԵԱՆ



Զմայլանքի արժանի են այն անձերը, որոնք սուր յիշողութիւն ունին: Անոնք կրնան դրուագներ պատմել, տեղի ունեցած, իրենց երեք կամ չորս տարեկանին: Այդ կողմանէ ես պարծենալու տեղ չունիմ, վասն զի հինգ տարեկանէս առաջ բան չեմ յիշեր: Դասընկերներէս մէկ տարիով մեծ էի, երբ ինքզինքս գտայ Մերձանեան Ազգային Մանկապարտէզին մէջ, ուր բոլոր մանուկները կը կրէին վարդագոյն գոգնոցներ՝ ինչպէս այն ատեն կանուանէինք մեր ամենօրեայ շրջագգեստները: Աւելի ուշ, անոնց փոխարինելու եկան կապոյտ գոգնոցներ, երբ սկսայ յաճախել Նուպարեան Ազգային Վարժարանը: Զգիտցողին բացատրեմ, թէ այս երկու ուսման օջախները մինչէն այսօր կը

գտնուին Գահիրէի Հելիոպոլսոյ արուարձանին մէջ: Հոն էր որ սկիզբ առին մանկութեանս առաջին յիշարժան քայլերը: Եգիպտոսի հայ համայնքը, ի տարբերութիւն Միջին Արեւելքի նորաստեղծ գաղութներուն, արդէն ունէր հարուստ ու բարգաւաճ կալուածներ, ուր իրարայայտող սերունդները գաղութին կողմէ կ'արժանանային մեծ հոգատարութեան: Այսօր տակաւին գոյութիւն ունին այդ հայապատկան շէնքերն ու մարգագաւառները: Դժբախտաբար երբեմնի 30,000 հաշուող հոծ եգիպտահայութիւնը հիմա չափազանց նօսրացած է՝ հասնելով առաւելագոյնը 3000 անհատներու:

Դեռ կը յիշեմ Բողբոջ, Կոկոն և Ծաղիկ դասարաններու ընկերներս և սիրելի դաստիարակչուհիներս՝ Օրիորդ Անժէ, Օրիորդ Լուսի և Օրիորդ Ազատուհի, որոնք ամենայն պատասխանատուութեամբ կը դաստիարակէին մեզ: Օրիորդ Դերենկուհին մանկապարտէզի տարեց տնօրինուհին էր: Ամառուան արձակուրդներուն ան Կարմիր



Խաչի վերակեցումն էր Ադեքսանդրիոյ մէջ: Հոն բախտաւորութիւնը ունեցած եմ երեք տարի շարունակ ամառուան արձակուրդներս անցընելու: Ծնողքներուս հրաժեշտ տալէ ետք, ես երեք շաբաթով կը մեկնէի Ադեքսանդրիա՝ բանակումի: Առտուան նախաճաշէն ետք, մենք շաբթով կ'ուղղուէինք դէպի Միջերկրական ծովու Քլեոպատրայի երրորդ ափը: (Անգամ մը նոյնիսկ ծովուն մէջ պիտի խեղդուէի, եթէ դասընկերոջս աւագ եղբայրը չփրկէր կեանքս): Իրիկունները, կեդրոնական շէնքի աստիճաններուն վրայ նստած, Օր. Դերենկուհին մեզի համար կը կարդար Հանս-Քրիստիան Անտերսէնի հիանալի մանկական հեքիաթները և կը սորվեցնէր մեր ազգային հայրենասիրական երգերը:

Յետադարձ ակնարկ մը նետելով Մերձանեան մանկապարտէզիս վրայ, կը յիշեմ յատկապէս Օրիորդ Շամիրամը, որ դաշնամուրի նուագակցութեամբ մեզի կը սորվեցնէր մանկական անոյշ երգեր: Մենք տախտակամածին վրայ բոլորակաձեւ ծալապատիկ նստած կ'երգէինք՝ նայելով մէկգմէկու դէմքին: Զբօսանքներուն ես հակուած էի մինակս օրօրուիլ, կամ խաղալիք օթօներէն մէկը նստիլ ու քշել՝ պայմանաւ որ ուրիշ մէկը գրաւած չըլլար զայն: Մակայն աւելի շատ կը նախընտրէի լուռ ու մունջ նստիլ Օր. Լուսինն քով, պարտէզի նստարանին վրայ, եւ դիտել բոյսերուն մէջ դանդաղ սահող մինիմիկ խխունջները՝ Եգիպտոսի ջերմացնող արեւուն տակ, մինչ միւս մանուկները ասդին-անդին կը վազվզէին: Այդ խխունջները կը սիրէին թաց ու խոնաւ ածուին վրայ երթելէլ: Տարիներու ընթացքին պիտի տեղեկանայի, թէ կարգ մը Եւրոպացի ազգեր այդ խխունջներով ճաշ կը շինէին: Ֆրանսայի հարաւը շրջագայելու ժամանակ, տիկնոջս հետ առիթը ունեցած եմ ճաշակելու անոնց ախորժաբեր համը:

Շուէտի մեր ամառանոցին մէջ, սովորական երեւոյթ մըն է, անձրեւէն ետք, դիտել մեծկակ խխունջներու երթը: Անոնք մէջտեղ կ'ելլեն իրենց գոյգ մը անթէնները ցցած, դանդաղ յառաջանալով խոտերուն վրայ՝ իրենց ետեւէն քարշ տալով իրենց կրաքարէ տնակները: Ժամանակին, Ֆրանցիսկան վանականները խխունջ կ'աճեցնէին իրենց վանքապատկան հողամասերուն վրայ՝ մեծ ու փոքր պահքերէն ետք ճաշակելու համար: Երկրիս թագաւորն ու ազնուականները, հետեւելով հոգեւորականներու օրինակին, նոյնպէս խխունջ կը պահէին իրենց այգիներուն մէջ: Այսօր այդ խխունջները տարածում գտած են բնութեան մէջ՝ հասնելով պատկառելի քանակի: Իրենց պատեանի կլոր օղակներու թիւէն կարելի է ճշդել իրենց տարիքը:

Ամառուան եղանակին, երբեմն քաղաքէն մեզի հիւրեր կուգային: Գիշերել ցանկացողներուն կը տեղաւորէինք մեր ամառանոցի անջատ հիւրատնակին մէջ: Անգամ մը մեր կրտսեր զաւակի մտերիմ ընկերոջ մայրը հիւրութեան եկաւ: Իրեն զանգատելով՝ պատմեցինք մեր պարտէզի խխունջներուն մասին, որոնք յաճախ կը մտնէին մեր բանջարանոցը և մեր ցանած սալատի տերեւները կը խժռէին: Առանց այլեւայլի, այդ տիկինը ելաւ, արագ մը հաւաքեց քանի մը տասնեակ խխունջներ և վրանին աղ ցանեց: Անմիջապէս խխունջները արձակեցին իրենց լպրծուն պղպջակները և սատկեցան: Այդ մոլկտալի տեսարանէն սիրտս ցաւեցաւ: Աւելի ուշ, մէջս միտք ծագեցաւ նրբաճաշակ ախորժաբեր կերակուր պատրաստել, ֆրանսացիներու օրինակով՝ փոխանակ խխունջները իզուր ուղարկելու գրողի ծոցը: Կը մնար միայն պատրաստելու ճիշդ ձեւը իմանալ: Օգնութեան հասաւ մեր դիմացի դրացի գոյգը՝ Մարչելլօ և Անն-Մարի, որոնք շաբաթաթերթէ մը փրցուցած պատկերազարդ էջեր տուին, այդ նպատակին հասնելու համար: Այդ թերթիկներուն մէջ մանրամասն նկարագրուած էր խխունջ աճեցնելու ձեւը: Իսկ զանոնք որպէս ուտելիք նախապատրաստելու համար առաջարկուած էին տարբեր բաղադրատոմսեր, ըստ քիմքի ճաշակին: Մեր դրացիները պատմեցին, թէ Իտալիոյ մէջ անցուցած տարիներուն՝ խխունջը իրենց նախասիրած կերակուրն էր:



Երկու-երեք ձախորդ փորձերէ ետք, վերջապէս իւրացուցի խիտունջ եփելու վարպետը դառնալ եւ որպէս վարձահատոյց, օր մը հրաւիրեցի այդ ամուլին՝ իմ պատրաստած խիտունջները ճաշակելու: Եկան, հետերնին բերելով ճերմակ գինիի շիշ մը, որուն պարունակութիւնը ճաշին հետ կոնծեցինք: Ըստ երեւոյթին, խիտունջը ծովային ուտրէին համը կը յիշեցնէ: Գովասանական խօսքերու շոյալումէն քաջալերուած՝ սկսայ մեծաքանակ խիտունջներ հաւաքել, թարմ սալատով կերակրել, որպէսզի քիչ մը պարարտանան, և նախապատրաստելէ ետք զանոնք զետեղել սառցարանիս մէջ՝ գալիք օրերու հիւրասիրութեանց համար:

Հարեւաններէս մէկը օր մը նկատեց, թէ դոյլ մը ձեռքիս բռնած, խիտունջ կը հաւաքէի մօտակայ մարգագետնէն: Երբ հարցուց, թէ ինչ կը հաւաքէի՝ կատակելով պատասխանեցի, թէ միտք ունէի յաճախորդներուս համար, աժան գինով «Escargots à la Bourgogne» պատրաստել և ծախել: Կայծակնային արագութեամբ, գիւղին մէջ լուր տարածուեցաւ, թէ Արամը խիտունջ կ'ուտէ...: Սթոքհոլմի մէջ, դժուար թէ արարքս ուշադրութեան արժանանար՝ խօսակցութեան նիւթ դառնալու համար: Բայց այստեղ, գիւղին մէջ, մարդիկ զիրար բամբասելու ժամանակ կը գտնեն: Հետեւաբար, աննկատ չես կրնար անցնիլ:

Անձրեւէն ետք կը հաւաքէի յայտնուած խիտունջները և կը բանտարկէի թրծուած կաւամանի մը մէջ՝ միայն մետաղէ կափարիչին վրայ օդափոխութեան անցքեր թողնելով: Մերթ ընդ մերթ կը բանայի կուծին բերանը՝ կերակրելու զանոնք թարմ սալատով, որպէսզի քիչ մը աւելի գիրնային: Վերջին օրը յատկացուած էր ծոմապահութեան, որով իրենց աղիքները կ'անցնէին ինքնամաքումէ: Մնացեալը շատ դիւրին էր. եռացած ջուր խոշոր կաթսայի մը մէջ, մէջը՝ առատ աղ ու քացախ, որոնց մէջ կը նետէի խնամքով պահպանած խիտունջներս: Պղպշակներով փրփրած եռացած ջուրը թափելէ ետք՝ ճերմակ գինի կ'աւելցնէի եփած խիտունջներուն վրայ՝ թեթել կրակի վրայ տաքցնելով: Ընելիքս մանրամասնօրէն նկարագրուած էր բաղադրատոմսին համաձայն: Սպասարկելէ առաջ, խիտունջները կը զետեղեմ իրենց խեցեպատեաններուն մէջ և անցքերը կը ծեփեմ կարագ-ազատքեղ-սխտոր միջուկով կամ ուրիշ համեմունքներով՝ ըստ ցանկութեան: Փութին մէջ երկու-երեք վայրկեան խորովելէ ետք, ահաւասիկ, ճաշը պատրաստ է: Հրամեցէ՛ք: Բարի՛ ախորժակ:

Օր մը, անդրանիկ տղաս իր ընկերուհիին հետ կուգայ մեր տեսութեան: Պատահմամբ, պարտէզին մէկ անկիւնը կը յայտնաբերէ խիտունջներու թաքստոցս, որուն տեղը կը մատնեն կողքը դրուած խոշոր կաթսան և մետաղէ խոզանակը: Փափաքս էր այդ օրը իրենց համար անակնկալ մը պատրաստել, որուն նմանը դեռ չէին համտեսած: Երբ որդիս կը բանայ անցքերով ծակոտած անագէ կափարիչը, կը տեսնէ տասնեակ մը խիտունջներ, որոնք յուսահատ պայքար կը մղէին՝ իրենց նախկին ազատութիւնը վերագտնելու համար: Անմիջապէս կը դատարկէ ամանին պարունակութիւնը և ազատ կ'արձակէ խեղճ արարածները՝ փճացնելով օրերով կատարած աշխատանքս: Պարտէզ իջնելուս կը շմիմ խիտունջներուս բացակայութեան համար: Ինչպէ՞ս կըրցեր էին առանձին փախուստ տալ լարած թակարդէս: Կասկածելով, թէ այդ գործին մէջ տղուս մատը խառն էր՝ զգոյշ հարցուցի իրեն: Երանի՝ թէ չհարցնէի: Այնպէս բռն յարձակման ենթարկեց զիս, որ շուարած մնացի: Անելանելի կացութեան մը մատնուեցայ՝ իզուր փորձելով արդարացնել անկեղծ մտադրութիւնս: Ատոր փոխարէն, ստիպուած եղայ հաշիւ տալ ստոր արարքիս համար, որուն համար կը սկսիմ զոջալ:

Այդ օրէն ասդին, դադրած եմ խիտունջները հալածելէ: Հիմա, ընդհակառակը, կը թողում որ անոնք վայելեն իրենց կատարեալ ազատութիւնը կոյս բնութեան մէջ: Անոնց ներկայութիւնն

ու խաղաղ երթը, անձրեւներէն ետք մանաւանդ՝ անհուն բերկրանքով ու ներդաշնակութեամբ կը լեցնեն հոգիս, գեղատեսիլ բնութեան մէջ:

«ԱՄԷՆ ԻՆՉ ԼԱԻ Է ԼԻՆԵԼՈՒ»

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Այնքան շատ են տպաւորութիւններս հայրենական վեցօրեայ այցելութենէս, որ չեմ գիտեր ուրկէ՝ սկսիլ եւ ո՞ւր վերջացնել: Այցիս բուն նպատակը՝ հայրենիքով ոգեշնչել էր երկու թոռներս՝ Սարօն եւ Արին, որոնք մեծաւ մասամբ ոչ-հայերով են շրջապատուած, ճակատագրի բերումով: Բայց այնքան հայութիւն, հայեցի ոգի կայ իրենց հոգիներուն մէջ, փառք Աստուծոյ: Տունէն, դպրոցէն փոխանցուած եւ իրենց երակներուն մէջ առկայծող այդ Մեսրոպեան ջահը թող միշտ վառ մնայ իրենց եւ իրենց նմաններուն մէջ, հայութեան բոլոր շառաւիղներուն մէջ: Անոնք մեր վաղուան օրն են, մեր ապագան:

Հայրենի հող ոտք դրած վայրկեանէս, ինչ որ տարօրինակ ոյժ մը կը վարարէ եւրօինս ամէն անգամ: Այդ հողին հետ շաղախուած մեր պապերուն, մեր

մեռելներուն, մեր սրբազան նախնեաց աճիւնները կարծես յանկարծօրէն կեանք կ'առնեն, կը դառնան ոգի, օդին մէջ թեւածող շունչ ու պատգամ, հայեցիութեան աւիւն ու աւիշ, որոնց հզօրութիւնը կը զգայ յատկապէս հայրենիքէն հեռու ապրող տարագիր հայր: Կը քալես նոյն փողոցներէն, նոյն մայրերէն ու ճամբաներէն, կ'անցնիս նոյն հրապարակներէն, կ'երթաս պատմական նոյն վայրերը ուր գացեր ես քանի-քանի անգամ, բայց այդ ԿԱՐՕՏ կոչեցեալը յագենալ չի գիտեր: Ընդհակառակն. Անիկա կը բազմապատկուի եւ հայու արիւնդ իրենը կը պահանջէ: Մեր պատմական հայրենիքէն մնացած այդ սրտաչափ հողը կը բաբախէ սրտիդ հետ համահունչ...Չկայ երկփեղկուած ինքնութեան տագնապը, զոր կը զգաս՝ գիտակցաբար թէ ենթագիտակցաբար, օտար հողին վրայ, որքան ալ եղեմական թուի ըլլալ օտար հողը: Մայրը, հարազատ մայրը կրնա՞ս արդեօք փոխարինել թէկուզ ամէնէն ազնիւ խորթ մօր հետ...

Վեց երկար ու այնքան կարճ օրեր...Երկար, որովհետեւ այնքան բան կը տեսնես, այնքան յոյզեր ու միտքեր քեզ կ'այցելեն: Այնքան շատ մարդոց կը հանդիպիս: Այնքան սրտաբուխ խօսքեր կը փոխանակես նոյնիսկ համեստ վարորդներու հետ, ամէնուն հետ: Այնքան շատ տեղեր կ'այցելես՝ պատմական ու պատմաբոյր տեղեր, ուր կան արմատներդ,

հազարամեակներու արմատներդ...: Ազգային-հայրենական պատկանելիութեան արմատներդ: Ծաղկածորն ու Կեչառիսը, Մեւանն ու Մեւանայ վանքերը, Գառնի-Գեղարդը, Խոր Վիրապը, Արարատն ու Արագածը...Երեւանը կը վերաքանդակեն հայու հոգիդ, զայն կ'ամրացնեն կենսայորդ նոր աւիշով, որպէսզի տակաւ չթառամին տարագիր հայու արմատախիլ ծառիդ ճիւղերն ու սաղարթները...Միաժամանակ կարճ, շատ կարճ օրեր, որոնք կ'անցնին-կը սահին արագասոյր թափով, քեզի յիշեցնելով որ ճամբորդ ես պարզապէս, սրբազան ուխտագնացութեան եկած ճամբորդ, որուն օրերն ու ժամերը համրուած են...ճակատագրականօրէն:



Օ՛, որքան ոգեղէնութիւն զգացի լսած պատմութիւններէս: Պատահական մարդիկ ինծի պատմեցին մասնաւորապէս 44-օրեայ պատերազմին մասին, որուն մասնակիցն էին եղած, վերքեր ստացած, կիսահաշմանդամ դարձած: Անոնց մէն մի խօսքը դրոշմուած կը մնայ յիշողութեանս եւ գիտակցութեանս ծալքերուն մէջ: Մահու-կենաց կոյի սահմանին վրայ, անոնք աւելի խոր ըմբռնէր էին հայրենիքի, հայրենեաց հողի արժէքը: Ընտանիքի արժէքը: Իրենց զինակից ընկերներուն արժէքը: Եւ յատկապէս զոհուած ընկերներուն արժէքը: «Ամէն պահ իրենց ոգին ինծի հետ է, հաւատացէք, ես պէտք է հաւատարիմ մնամ այդ ոգիին, որով զոհուեցաւ ընկերս»: Այս նախադասութիւնը յատկապէս, տարբեր բառերով արտայայտուած, քանի-քանի անգամ լսեցի տարբեր մարդոցմէ եւ ամէն անգամ սրտիս խորերէն բան մը բարձրացաւ կոկորդիս, աչքերուս...

Այդ վսեմագոյն ոգեղէնութեան քովն ի վեր, սակայն, ցաւ ի սիրտ, կայ դարի չաստուածը՝ մամոնան, որ կը կլանէ շատ-շատերու ամբողջ կեանքը, սիրտն ու խիղճը, խելքն ու կամքը, բարոյական արժէքներու համակարգը, վարքագիծը...եւ կարծես այդ մամոնան եւ անոր ամէնօրեայ մոլեգին հետապնդումը կը դառնան գերագոյն նպատակ...: Մամոնային հետ կու գան սուտն ու կեղծիքը, քննանքն ու շողորթութիւնը, բամբասանքն ու գանգատը, շահամոլութիւնն ու օգտապաշտութիւնը, սպառողական հասարակութեան յատուկ ցուցամոլութիւնն ու քաղքենիութիւնը...ոգիի սովը, յուսալքումն ու հայրենալքումը...Զո՛րն ըսել, զո՛րն խոստովանիլ:

Մենք միշտ ալ ՈԳԵՂԷՆՈՒԹԵԱՄԲ ենք ապրած, պայքարած ու մաքառած եւ յարատեւած ի հեճուկս մեր պատմութեան ահեղ մրրիկներուն ու փոթորիկներուն դարերն ի վար, դարերն ի վեր: Եւ ես ատիկա տեսայ ամէնէն համեստ բանութիւն, շինարարին, պարզ հայուն չարքաշ առօրեային մէջ, անոնց լուռ տքնանքին, քրտնաջան աշխատանքին մէջ, անոնց լուսաւոր հայեացքին մէջ, անոնց անխախտ հաւատքին մէջ, որ « ամէն ինչ լաւ է լինելու», որ «մեր հայրենիքը դեռ աւելի ու աւելի ծաղկելու է, հզօրանալու է»...: Ես ատիկա տեսայ ի մասնաւորի մեր մատողաշ սերունդի, մեր սիրունատես խրոխտ երիտասարդութեան ներկայացուցիչներուն մօտ, անոնց հայեացքին, քալուածքին, խօսուածքին, պայքարելու եւ բարձրանալու անկոտորում կամքին, անոնց լաւատեսութեամբ լի պայծառ աչքերուն մէջ: Եւ

սիրտս լեցուեցաւ անհուն բերկրանքով, հպարտութեամբ, մեր վաղուան օրուան նկատմամբ վառ յոյս ու հաւատքով:

Այդ հաւատքով զինուած վերադարձայ տուն, մեր չքնաղ կղզին Կիպրեայ, ուր հայկական արմատներ կան դեռ 6-րդ դարէն: Այդ հաւատքով եւ նորոգ ոգիով տուն վերադարձան Սարօն եւ Արին, հպարտ իրենց հայեցիութեամբ, իրենց հայրենիքով, իրենց բուն, հարազատ արմատներով: Վկայ՝ իրենց խանդավառ խօսքերը հայրենիքի բնութեան արտակարգ գեղեցկութեան մասին, Երեւանի կանաչապատ փողոցներու զրաւչութեան մասին, հայերէնի կարկաչառու հնչիւններու ամենալաւ հայ ունկնդրութեան հոգեհարազատ մթնոլորտին մասին եւ դեռ շատ ու շատ ոգեշունչ տպաւորութիւններ, որոնք վստահաբար պիտի սննդաւորեն իրենց հայու հոգին...

Տա՛յ Աստուած որ անոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնան այդ հաւատքին, ոգիին, ներքին կոչումին, որ կը կոչուի ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ, ՀԱՅՐԵՆԱՆՈՒԹԻՐՈՒՄ, կեանքի դաժան փորձութիւններուն եւ մարտահրաւերներուն մէջ:

9/8/2026

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ԽՕՍՔԸ բխումն է հոգիին, մտքին, սրտին, ցուցանիշը մարդ էակի հոգեմտաւոր որակին, բարոյական մակարդակին, անհատականութեան ինքնատպութեան թէ անոր պակասին, սրտին մեծութեան թէ փոքրոգութեան...Խօսքը ցոլանքն իսկ է ներքին մարդուն...Հետեւաբար, լսելով մարդուն խօսքը, կարդալով անոր գիրը, կրնաս ճիշդ պատկերացումը կազմել անոր ներքին էութեան...Կարելի է նոյնպէս ըսել. «Լսեմ խօսքդ, ըսեմ ո՛վ ես»:

.....

Կեանքիս երկար ճանապարհին, իւրաքանչիւր սխալագործութիւն զիս մղեց դասեր քաղելու իմ սխալներէս եւ իմաստնանալու:

Իւրաքանչիւր փուշ ու մացառ զիս պնդացուց եւ տոկունութիւն պարգեւեց:

Իւրաքանչիւր յուսախաբութիւն պատճառ եղաւ որ ապաւինիմ լոկ սեփական ուժերուս վրայ:

Իւրաքանչիւր ցաւ ինծի ներշնչեց մարդասիրութիւն՝ զգալու այլոց ցաւերը եւ կարեկցելու անոնց:

Յիրաւի, ամէն չարիքէ կարելի է բարիք ստեղծել, ժխտականը դրականի վերածել եւ քայլ առ քայլ բարձրանալ մարդկայնութեան անհատնում աստիճաններէն վեր:



.....

Սպառողական քաղաքակրթութիւնը ամէն ինչ վերածեց առ-եւ-տուր-ի...կարծէք ամէն բան փոխանակելի է, կարծէք ամէն բան իր գինը ունի եւ ծախու է: Բայց ինչպէ՞ս կարելի է փոխանակել Հայրենիքը, ինչպէ՞ս կարելի է ծախու հանել Սէրը, Վեհանձնութիւնը, Բարութիւնը, արդեօ՞ք գին ունին Գեղեցկութիւնը, Ճշմարտութիւնը...: Բարձրագոյն եւ բացարձակ արժէքներ կան, որոնք անսակարկելի են, անփոխանակելի, որոնք չեն կրնար առետուրի առարկայ դառնալ, ոչ ալ օգտապաշտ մօտեցումով պիտի վերաբերիլ անոնց հետ: Հոգեւոր-բարոյական արժէքները չեն կրնար շուկայական դառնալ եւ շուկայիկ հաշիւներու զոհ երթալ: Կեանքին բուն արժէք տուողը նման հոգեւոր արժէքներն են գերազանցօրէն, որոնք ներկայի շուկայիկ մտածելակերպին զոհ կ'երթան տակաւ:

.....

Սրտիս այնքան խորթ է այն անհատը թէ հաւաքականութիւնը, որ զուրկ է սրբութենէ, արժէքներէ..., որ կ'ապրի միայն հացիւ, նիւթական բարեկեցութեան, բարգաւաճումի, մակերեսային վայելքներու եւ հաճոյքներու համար: ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ՀՈԳԵԻՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՆ ԵՆ որ մարդն ու հասարակութիւնը կը բարձրացնեն անասնական մակարդակէն վեր, իտէալ եւ սկզբունք կը ներշնչեն, հոգեբարոյական ոլորտի վեհացնող շունչը կը պարգեւեն, նպատակ ու տեսիլք կու տան...: Աւա՛ղ, սակայն, սպառողական ներկայ քաղաքակրթութեան դրուածքը ամբողջովին կ'անտեսէ եւ նոյնիսկ կ'արհամարհէ՝ ՄԱՐԴԸ ՄԱՐԴԻ ԴԱՐՁՆՈՂ ՀՈԳԵԻՈՐ ԱՐԺԷՔՆԵՐՆ ու ՍՐԲՈՒԹԻՒՆՆԵՐԸ, ամէն ինչ ապրանքի եւ ծախու նիւթի վերածելով...

.....

ՎԱՆԿՈՏ մարդն ու հասարակութիւնը կրնա՞ն երբեւէ յառաջդիմել, երբ կը լռեն անարդարութեանց եւ անիրաւութեանց դէմ, երբ կրաւորական կեցուածք կը ցուցաբերեն իրենց արժանապատուութիւնը խոցող երեւոյթներուն դիմաց, երբ կուրօրէն կ'ենթարկուին կամ կը համակերպին այլոց հրահանգներուն կամ կարգադրութիւններուն, առանց հարցադրելու անոնց իրաւացիութիւնը, երբ կորսնցուցած են իրենց սրբազան ըմբոստութեան ոգին, կորովն ու կամքը: Նման անհատն ու հաւաքականութիւնը դատապարտուած կ'ըլլան հոգեկան ՍՏՐԿԱՑՄԱՆ որոշապէս, այսինքն՝ ՀՈԳԵԿԱՆ ՄԱՀՈՒԱՆ:

.....

Զիս կը զարմացնեն, կը շշմեցնեն, կը զայրացնեն այն անձինք, որոնք հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու մէջ կը մտնեն՝ ո՛չ թէ անկաշառ ծառայելու, այլ՝ իրենց սեփական անձին համար շահ մը ապահովելու համար...եւ որքա՛ն շատ են անոնք...Սա արդի ընկերութեան շահամոլ վարքագիծին ցուցումն է հայ կեանքին մէջ, որ տակաւ կ'ընդհանրանայ, կը տարածուի, ազգին ծառայելու վսեմ վարքագիծը փոխարինելով՝ ազգէն օգտուելու եւ ազգը շահագործելու տխուր վարքագիծով...Կան նաեւ



կազմակերպություններ կամ կուսակցություններ, որոնք կը յաւակնին տիրությունը ընել աւանդական Սփիւռքին, իսկութեան մէջ զայն պառակտելով... Եւ եթէ իրենցմէ չես, քեզ ամբողջովին կ'անտեսեն, կամ հայիոյանքներով եւ ամենէն լկտի խօսքերով քեզ կ'ահաբեկեն, եթէ շինիչ քննադատություն մը յանդգնիս ընել... ՍՓԻՒՌՔԸ ԿԵՆՍԱԿԱՆ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻՅԵՂԱՓՈԽՈՒԵԼՈՒ:

.....

ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ հասարակարգերը նկատի կ'ունենան բնակչութեան թիւը, ժողովուրդին ՔԱՆԱԿԸ, անտեսելով ՈՐԱԿԸ, որ այնքա՛ն տարբերություն կը ստեղծէ մէկ անհատին եւ միւսին միջեւ...ԲԱՅՑ Ո՞Վ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ՍԱՀՄԱՆԵԼ ՈՐԱԿԸ.Ո՞Վ ՊԻՏԻ ԿԱՐԵՆԱՅ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԳՏՆԵԼ ԱՐԺԵՒՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԶԱՅՆ...Քանակն է որ վճռորոշ է իշխանութեանց ԸՆՏՐՈՒԹԵԱՆ համար եւ ուրիշ շատ ու շատ ոլորտներէն ներս: Մինչդեռ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՈՐԱԿԸ այնքան կարեւոր ու էական է հասարակական կեանքի բոլոր ոլորտներէն ներս ալ...Ժողովրդավարությունը կրնայ այլապէս դիրքաւ դառնալ ամբոխավարություն:

.....

ԽՂՃԻԴ ՊԱՐՏՔԸ պիտի կատարես, որքա՛ն ալ անվարձահատոյց ըլլայ աշխատանքդ, որքա՛ն ալ անգնահատուած մնաս, որքա՛ն ալ չհասկցուած ըլլաս, որքա՛ն ալ ապերախտութիւն գտնես քու ճանապարհիդ վրայ...քանզի ԲՈՒՆ ՎԱՐՁՔԸ պիտի գտնես ԽՂՃԻԴ ԱՆԴՈՐԴԻՆ մէջ, ԲԱՐԻՆ կատարելուն մէջ, նոյնինքն ԱՇԽԱՏԱՆՔԻՆ մէջ: Միայն թէ ՀՈԳԵԲՈՒԽ ըլլայ աշխատանքդ, ոչ մէկուն կողմէ պարտադրուած, այլ միայն ու միայն՝ քու սեփական ներքին ձայնէն, պատասխանատւութեան եւ պարտաւորութեան ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹԵՆԷՆ...ՍԱ ՉԷ՞ ՄԱՐԴ ԷԱԿԻՆ ԲՈՒՆ, ՈԳԻԻ ԵՐՁԱՆԿՈՒԹԻԻՆԸ:

.....

Առանց ոգեկան անկախութեան, կարելի է՞ արդեօք որ մարդ էակը թէ ազգն ու երկիրը անկախ ըլլան...Եթէ մեր փրկությունը դարձեալ եւ դարձեալ պիտի որոնենք օտար համակարգերէն ներս ընդգրկուելուն մէջ, չխրատուելով մեր բազմադարեան պատմութենէն, յայնժամ ոչինչ կրնայ օգնել մեզի, քանզի ՍՏՐՈՒԿԸ չի կրնար ԱԶԱՏԱԳՐՈՒԻԼ երբե՛ք, եթէ իր յոյսը դրած է զայն ստրկացնող ՇՂԹԱՅԻՆ, այսինքն՝ եթէ չի կրնար իրմէ թօթափել իր ՍՏՐԿԱՍՏՈՒԹԻԻՆԸ:

.....

Ե՞րբ պիտի հասունանաք որպէս ազգային հաւաքականություն, դառնանք մէկ ամբողջություն, համահայկական մտածողութեամբ, համահայկական գործելակերպով, յաղթահարելով մեր տեսակ-տեսակ բաժանումները, հատուածականությունները, որոնք ոչինչի կը ծառայեն, բացի մեր հաւաքական ոյժը ջլատելէ...ՄԻՈՒԹԻԻՆԸ ԶՕՐՈՒԹԻԻՆ Է կը բարբառինք, բայց ոչինչ կ'ընենք այդ ուղղութեամբ...ընդհակառակն, մէկ հայր միւսին հակառակորդ է, մէկ ակումբը միւսին՝ թշնամաբար տրամադրուած...: Պիտի կարենա՞նք մէկդի դնել մեր

տարբերութիւնները, որոնք չնչին են հաստատապէս, եւ միաւորուինք
հայապահպանութեան շուրջ, հայ ազգային գաղափարախօսութեան շուրջ, հայ արժէքային
համակարգին շուրջ, Հայոց Պետականութեան շուրջ:

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Հայրենին է այն մագնիսը,
Որ հայն իրեն պիտի քաշէ,
Պատրանք է սոսկ օտար հողը,
Ան չի դառնար օճախ լուսէ...

.....

Հայը մէկ է ո՛ր ալ ըլլայ,
Հայրենի լոյս երկնքին տակ,
Թէ՛ երկնին տակ պառ ու տխուր՝
Սփիւտքի դաժան բաւիղներուն:

.....

Ամբողջ կեանքս մատաղ ըրի Բառ ու Բանին մեր Մեծասքանչ,
Նուիրումս հոգենուէր տուաւ միրգեր արեւահամ,
Հատի՛կ-հատի՛կ ի ըմբոշխնեցի քիմքով ծարաւ ու անօթի
Եւ կը մնամ սիրատոջոր Ոսկեղենիկ Հայերէնին:

.....

Մաքուր սիրտը հաշիւ չունի,
Ան լոկ սիրով կը սնանի
Եւ սէր ու գութ ճառագայթէ
Անկեղծօրէն, հոգենուէր:



.....

Միրտդ, հոգիդ պիտի մաքրես
Մաղձ ու թոյնէն, ժանգ, փոշիէն,
Յետոյ միայն գրիչդ առնես
Ու գիր գրես, գիրը սուրբ է...

.....

Գործդ ըրէ մաքուր խիղճով,
Հոգիդ, սիրտդ դի՛ր անոր մէջ,
Գնահատանք մի՛ սպասեր,
Սրտիդ մէջ է ան անվրդով:

.....

Թէ ոգիդ է փոքր ու ճղճիմ,
Սողունի պէտ հողակալիկ,
Դուն չես կրնար վեր խոյանալ,
Ճաշակել հա՛մը երկնքի...

.....

Եւ ի՞նչ կ'արժէ ոսկի, արծաթ,
Թէ ոգիդ է մանր ու չնչին,
Թէ չես կրնար վեր բարձրանալ
Հաշիւներէն սին ու պատիր...

.....

Մի՛ մեղադրեր դուն թշնամին,
Երբ չես կրնար լեզու գտնել
Ազգակիցիդ, հարազատիդ
Ու զայն սիրել ու փայփայել...

.....

Երանի՛ թէ գրիչը ի սպաս ըլլար ճիշդին,
Չըլլար գործիք սուտին, կեղծին ու քծինքին,
Յայնժամ գրողը կը բարձրանար անհունն երկնի,
Համբոյր կու տար վառ աստղերուն, արեգակին...

.....

Միրտս ճանչցաւ բարի սիրտը,
Որ ճառագէր աչքերուն մէջ,
Միրտս ճանչցաւ նաեւ չարը,



Որ թոյն ունէր աչքերուն մէջ:

.....

Մարդիկ կան որոնք պիտի անտեսես,
Լուրջ պիտ' չընդունիս, պիտ' արհամարհես,
Իրենք՝ տիդմի մէջ, քեզ կ'ուզեն մրտտել,
Քու գուլալ հոգւոյդ աղտ ու ցեխ նետել:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ